ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

# ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

# ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

ԻՋԵՎԱՆ – 2013

# ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
## Ծրագրի մասնագիրը (սպեցիֆիկացիան)

| | |
|---|---|
| 1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը | Մանկավարժություն և հոգեբանություն, 051000 |
| 2. Բուհը | Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ |
| 3. Ծրագիրը հավատարմագրված է | – |
| 4. Շնորհվող որակավորումը | Բակալավր |
| 5. Ծրագրի մեկնարկի ուսումնական տարին | 2012/13 |
| 6. Ուսումնառության լեզուն | Հայերեն |
| 7. Ուսուցման ձևը | Առկա / Հեռակա |

**8. Ծրագրի ընդունելության չափանիշները**

Ծրագրի դիմորդը պետք է ունենա միջնակարգ, նախնական մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթության վկայական:

Ընդունելությունը կատարվում է ըստ ՀՀ կառավարության հաստատած Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի:

**9. Ծրագրի նպատակները**

Ծրագիրը նպատակ ունի նախապատրաստելու մանկավարժ-հոգեբան մասնագետներ, ովքեր

- կունենան հիմնարար և համակարգված գիտելիք մանկավարժության և հոգեբանության ֆունդամենտալ և կիրառական բնագավառներից,
- ունակ կլինեն շարունակելու կրթությունը՝ մասնագիտանալու մանկավարժության և հոգեբանության որևէ բնագավառով,
- կկարողանան ներգրավվել մանկավարժության և հոգեբանական հիմնարար գիտելիքներ և հմտություններ պահանջող աշխատանքում:

**10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները**

| **Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն** | **Դասավանդման/ուսումնառության մեթոդները** |
|---|---|
| Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողը.<br>**Ա1.** կունենա հիմնարար գիտելիքներ մանկավարժության և հոգեբանության՝ որպես գիտությունների առարկայի, խնդիրների և մանկավարժական ու հոգեբանական գիտելիքների կիրառման հնարավորությունների մասին<br>**Ա2.** կիմանա մանկավարժության և հոգեբանության մեթոդաբանությունը, ֆունդամենտալ և կիրառական բնագավառները և կապը այլ գիտությունների հետ<br>**Ա3.** կիմանա մանկավարժության և հոգեբանության ձևավորման պատմությունը, զարգացման արդի միտումները<br>**Ա4.** կիմանա հոգեկանի զարգացման առանձնահատկություններն օնտոգենեզում և ֆիլոգենեզում, հոգեկան գործունեության բնագիտական հիմքերը<br>**Ա5.** կունենա գիտելիք մանկավարժության և հոգեբանական հետազոտություն իրականացնելու, մեթոդների և արդյունքների վերլուծության մասին | Ուսանողները ձեռք են բերում Ա1-Ա8 կետերում նշված գիտելիքը և իմացությունը հետևյալ մեթոդներով.<br>▪ դասախոսություն<br>▪ սեմինար<br>▪ ռեֆերատ/էսսե<br>▪ անհատական և խմբային առաջադրանքներ<br><br>**Գնահատման մեթոդները**<br>Ուսանողների Ա1-Ա8 գիտելիքները և իմացությունը գնահատվում է հետևյալ ձևերով.<br><br>▪ առաջադրանքների ստուգումներ<br>▪ թեստային առաջադրանք<br>▪ ընթացիկ և բանավոր քննություններ<br>▪ կուրսային և ավարտական աշխատանքի պաշտպանություն |

| | |
|---|---|
| **Ա6.** կիմանա հոգեկան գործընթացների ընդհանուր օրինաչափությունները և դրանց անհատական առանձնահատկությունները<br>**Ա7.** կունենա հիմնարար գիտելիքներ տարիքային և սոցիալական հոգեբանությունից, ինչպես նաև այլ կիրառական բնագավառներից<br>**Ա8.** կիմանա մանկավարժի և հոգեբանի գործունեության էթիկական նորմերի, պահանջների և տարբեր բնագավառներում աշխատանքի առանձնահատկությունների մասին | |
| **Բ. Գործնական մասնագիտական կարողություններ**<br>Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.<br>**Բ1.** վերլուծելու առանցքային մանկավարժական և հոգեբանական տեսությունները, գնահատելու դրանց առավելություններն ու սահմանափակումները<br>**Բ2.** մեկնաբանելու և բացատրելու վարքի դրսևորման առանձնահատկությունները և հետազոտության արդյունքները՝ հիմնվելով հոգեբանական տեսությունների ու հայեցակարգերի վրա<br>**Բ3.** վերլուծելու հոգեկան տարբեր գործընթացներ, անհա- | **Դասավանդման/ուսումնառության մեթոդները**<br>Ուսանողները ձեռք են բերում Բ1-Բ7 կարողությունները հետևյալ մեթոդներով.<br>▪ դասախոսություն<br>▪ սեմինար<br>▪ գործնական պարապմունք<br>▪ ռեֆերատ/էսսե<br>▪ անհատական և խմբային առաջադրանքներ<br>▪ արտադրական և մանկավարժական պրակտիկա<br><br>**Գնահատման մեթոդները**<br>Ուսանողների Բ1-Բ7 գործնական կարողությունները գնահատվում են հետևյալ ձևերով.<br>▪ առաջադրանքների ստու- |

| | |
|---|---|
| տական առանձնահատկություններ, վարքի ձևեր տարբեր գործոնների (կենսաբանական և սոցիալական) ազդեցությամբ<br>**Բ4.** կիրառելու հետազոտության իրականացմանը համապատասխան մեթոդներ, վերլուծելու արդյունքները և մեկնաբանելու<br>**Բ5.** սահմանելու մանկավարժական և հոգեբանական ուսումնասիրության հիմնախնդիր, ձևակերպելու նպատակներ և իրականացման մեթոդներ<br>**Բ6.** մանկավարժական և հոգեբանական պատշաճ գրագիտությամբ ձևավորելու գրավոր և բանավոր խոսքը<br>**Բ7.** տարբերակելու հոգեբանի գործառույթները այլ մասնագետների հետ համատեղ աշխատանքում | գումներ<br>▪ թեստային առաջադրանք<br>▪ ընթացիկ և բանավոր քննություններ<br>▪ կուրսային և ավարտական աշխատանքի պաշտպանություն |
| **Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ**<br>Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.<br>**Գ1.** օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (գրադարաններ, ինտերնետ ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ)<br>**Գ2.** օգտվելու համակարգչային | **Դասավանդման/ուսումնառության մեթոդները**<br>Ուսանողները ձեռք են բերում Գ1-Գ5 ընդհանրական կարողությունները հետևյալ մեթոդներով.<br>▪ բանավոր ներկայացումներ<br>▪ գործնական պարապմունք<br>▪ ռեֆերատ/էսսե<br>▪ անհատական և խմբային առաջադրանքներ<br><br>**Գնահատման մեթոդները** |

| | |
|---|---|
| ծրագրերից (Word, Excel, Power Point)<br>**Գ3.** արդյունավետորեն պլանավորելու ժամանակն ու այլ ռեսուրսները.<br>**Գ4.** պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր.<br>**Գ5.** պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:<br>**Գ6.** արդյունավետորեն շփվելու և համագործակցելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում<br>**Գ7.** տիրապետելու ընդհանուր զարգացածություն և լայն մտահորիզոն ապահովող տեղեկություններին: | Ուսանողների Գ1-Գ5 ընդհանրական կարողությունները գնահատվում են հետևյալ ձևերով.<br>▪ առաջադրանքների ստուգումներ<br>▪ կուրսային և ավարտական աշխատանքի պաշտպանություն |

| 11. Ծրագրի կառուցվածքը |
|---|
| 11.1. Ծրագրի ընդհանուր կառուցվածքի նկարագրությունը |
| Բակալավրի ծրագիրը բաղկացած է 4 հիմնական կրթամասերից՝ ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (36 կրեդիտ աշխատածավալով), մաթեմատիկական և բնագիտական (10 կրեդիտ աշխատածավալով), ընդհանուր մասնագիտական (168 կրեդիտ աշխատածավալով) ինչպես նաև այլ կրթական մոդուլներ (26 կրեդիտ աշխատածավալով):<br>***1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս***<br>*Պարտադիր դասընթացներ (32 կրեդիտ)*<br>Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մոդուլ դասընթացներ, որոնք նպատակաուղղված են համալսարանական կրթության ընդհանուր տեսական հենքի ձևավորմանը: |

*Կամընտրական դասընթացներ (4 կրեդիտ)*

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մոդուլ դասընթացներ, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երկուսը:

**2. *Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթամաս***

*Պարտադիր դասընթացներ (8 կրեդիտ)*

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մոդուլ դասընթացներ, որոնք նպատակաուղղված են ընդհանուր մաթեմատկական և բնագիտական գիտելիքների մասնագիտական հենքի ձևավորմանը:

*Կամընտրական դասընթացներ (2 կրեդիտ)*

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մոդուլ դասընթացներ, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու մեկը:

**3. *Ընդհանուր մասնագիտական կրթամաս*** *(168 կրեդիտ)*

Ապահովում են մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումը:

**4. *Կրթական այլ մոդուլներ*** *(26 կրեդիտ)*

*Կուրսային աշխատանք (4 կրեդիտ)*

Ծրագրի այս հատվածում նախատեսվում է 2-ական կրեդիտ աշխատածավալով 2 կուրսային աշխատանքի կատարում:

*Արտադրական պրակտիկա (2 կրեդիտ)*

Նպատակն է ուսանողներին ծանոթացնել էքսպերիմենտալ հետազոտության կատարման հմտություններին, ծանոթացնել էքսպերիմենտալ աշխատանքի իրականացման սկզբունքներին և դրանց ներկայացվող պահանջներին:

*Մանկավարժական պրակտիկա (4 կրեդիտ)*

Նախատեսում է «հոգեբանություն» առարկայի դասավանդում դպրոցում, որի նպատակն է բալալավրերի մանկավարժական փորձի ձեռքբերումը:

*Ամփոփիչ ատեստավորում (4 կրեդիտ)*

*Ավարտական աշխատանք (12 կրեդիտ)*

Կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որի նպատակն է ամփոփ հետազոտություն ներկայացնել բակակալավրի ավարտական աշխատանքի թեմայի շրջանակում:

<table>
<tr><th colspan="3">11.2. Ուստարիներ և ուսումնական մոդուլներ</th></tr>
<tr><td colspan="3">1-ին ուստարի /1-2 կիսամյակներ/</td></tr>
<tr><th>ՊԱՐՏԱԴԻՐ</th><th>ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ</th><th>ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ</th></tr>
<tr><td>Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս<br>▪ 0302/B01. Հայոց լեզու և գրականություն -1 (2 կրեդիտ)<br>▪ 0305/ B01. Ռուսաց լեզու -1 (4 կրեդիտ)<br>▪ 0301/ B01. Հայոց պատմության հիմնահարցեր-1 (2 կրեդիտ)<br>▪ 0001/ B01. Ֆիզդաստիարակություն (0 կրեդիտ)<br>▪ 0302/ B02. Հայոց լեզու և գրականություն -2 (2 կրեդիտ)<br>▪ 0305/ B02. Ռուսաց լեզու - 2 (4 կրեդիտ)<br>▪ 0301/ B02. Հայոց պատմության հիմնահարցեր-2 (2 կրեդիտ)<br>Մաթեմատիկական և բնագիտական կրթամաս<br>▪ 0101/ B01. Համակարգչից օգտվելու հմտություններ (2 կրեդիտ)<br>▪ 0103/ B01. Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ (2</td><td>Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս<br>▪ 0305/ B01. Անգլերեն լեզու-1 (4 կրեդիտ)<br>կամ<br>▪ 0305/ B01. Ֆրանսերեն լեզու-1 (4 կրեդիտ)<br>▪ 0305/ B02. Անգլերեն լեզու-2 (4 կրեդիտ)<br>կամ<br>▪ 0305/ B02. Ֆրանսերեն լեզու-2 (4 կրեդիտ)<br>Մաթեմատիկական և բնագիտական կրթամաս<br>▪ 0102/B01. Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ (2 կրեդիտ)<br>կամ<br>▪ 0101/B05. Մաթեմատիկայի հիմունքներ (2 կրեդիտ)</td><td>Առնվազն 60 կրեդիտի կուտակում:</td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| կրեդիտ)<br>***Ընդհանուր մասնագի-տական կրթամաս***<br>▪ 0303/B01. Ընդհանուր հոգեբանություն (4 կրեդիտ)<br>▪ 0303/B02. Մանկա-վարժության տեսութ-յուն-1 (4 կրեդիտ)<br>▪ 0303/B03. ԲՆԳ ֆիզիո-լոգիա (4 կրեդիտ)<br>▪ 0303/B04. Մարդաբա-նություն և համեմա-տական հոգեբանութ-յուն (4 կրեդիտ)<br>▪ 0303/ B05. Անձի հոգե-բանություն (4 կրե-դիտ)<br>▪ 0303/B06. Մանկա-վարժության տեսութ-յուն-2 (4կրեդիտ)<br>▪ 0103/B07. Տարիքային անատոմիա, ֆիզիոլո-գիա և հիգիենա (2 կրեդիտ)<br>▪ 0303/B37. Մասնագի-տության ներածութ-յուն /մանկավարժութ-յուն, հոգեբանություն/ (4 կրեդիտ) | | |

| Ուստարիներ և ուսումնական մոդուլներ | | |
|---|---|---|
| *2-րդ ուստարի /3-4 կիսամյակներ/* | | |
| ՊԱՐՏԱԴԻՐ | ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ | ԱՌԱՋԱԴԻՄՈՒ-ԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ |

| | | |
|---|---|---|
| ***Ընդհանուր հումանի-տար և սոցիալ-տնտե-սագիտական կրթամաս***<br>▪ 0301/ B05. Փիլիսոփա-յության հիմունքներ (4 կրեդիտ)<br>▪ 0001/ B01. Ֆիզդաս-տիարակություն (0 կրեդիտ)<br>***Ընդհանուր մասնագի-տական կրթամաս***<br>▪ 0303/B08. Փորձարա-րական հոգեբանութ-յուն և հոգեձանաչում (7 կրեդիտ)<br>▪ 0303/B09. Հոգեֆիզիո-լոգիա (4 կրեդիտ)<br>▪ 0303/B10. Իմացական պրոցեսներ (7կրե-դիտ)<br>▪ 0303/B11. Սոցիոլո-գիա (2 կրեդիտ)<br>▪ 0303/B12. Ուսուցման տեղեկատվական տեխնոլոգիաների տեսություն և մեթո-դիկա (2 կրեդիտ)<br>▪ 0303/B13. Հուզակա-մային ոլորտի զար-գացում (6 կրեդիտ)<br>▪ 0303/B14. Սոցիալա-կան հոգեբանություն (4 կրեդիտ)<br>▪ 0303/B15. Տարիքային մանկավարժություն (6 կրեդիտ) | ***Ընդհանուր հումանի-տար և սոցիալ-տնտե-սագիտական կրթա-մաս***<br>▪ 0305/ B03. Անգլերեն -3 (4 կրեդիտ)<br>կամ<br>▪ 0305/ B03. Ռուսաց լեզու-3 (4 կրեդիտ)<br>կամ<br>▪ 0305/B03. Ֆրանսե-րեն -3 (4 կրեդիտ)<br>▪ 0201/ B01. Տնտեսա-գիտություն (2 կրե-դիտ)<br>կամ<br>▪ 0301/ B03. Քաղաքա-գիտություն (2 կրե-դիտ)<br>կամ<br>▪ 0301/ B04. Իրավա-գիտություն (2 կրե-դիտ)<br>▪ 0202/ B01. Մշակու-թաբանություն (2 կրեդիտ)<br>կամ<br>▪ 0301/ B06. Կրոնների պատմություն (2 կրե-դիտ) | Առնվազն 60 կրե-դիտի կուտա-կում: |

| | | |
|---|---|---|
| ▪ 0301/B16. Տրամաբանություն (2 կրեդիտ)<br>▪ 0303/B17. Կրթական համակարգերի կառավարում (2 կրեդիտ)<br>▪ 0303/B18. Կրթության և մանկավարժական մտքի պատմություն (4 կրեդիտ)<br>***Կրթական այլ մոդուլներ***<br>▪ Կուրսային աշխատանք 1 (2 կրեդիտ) | | |

| Ուստարիներ և ուսումնական մոդուլներ | | |
|---|---|---|
| *3-րդ ուստարի /5-6 կիսամյակներ/* | | |
| ՊԱՐՏԱԴԻՐ | ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ | ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ |
| ***Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս***<br>▪ 0001/ B01. Ֆիզդաստիարակություն (0 կրեդիտ)<br>***Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթամաս***<br>▪ 0001/ B05. Քաղաքացիական պաշտպանություն (2 կրեդիտ)<br>▪ 0001/ B06. Արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն | | Առնվազն 60 կրեդիտի կուտակում: |

| | | |
|---|---|---|
| (2 կրեդիտ)<br>***Ընդհանուր մասնագիտական կրթամաս***<br>▪ 0303/B19. Անհատական տիպոլոգիական առանձնահատկություններ (6 կրեդիտ)<br>▪ 0303/B20. Մանկավարժական հոգեբանություն (6 կրեդիտ)<br>▪ 0303/B21. Հոգեբանության դասավանդման մեթոդիկա (4 կրեդիտ)<br>▪ 0303/B 22. ՈՒսուցման տեսություն և մեթոդիկա (4 կրեդիտ)<br>▪ 0303/B23. Ստեղծագործական հոգեբանություն (6 կրեդիտ)<br>▪ 0303/B24. Աշխատանքային և կառավարման հոգեբանություն (5 կրեդիտ)<br>▪ 0303/B25. Հոգեբանական ծառայություն և հոգետեխնիկաներ (5 կրեդիտ)<br>▪ 0303/B26. Ընտանեկան հոգեբանություն (3 կրեդիտ)<br>▪ 0303/B27. Հոգեկարգավորում (3 կրեդիտ)<br>▪ 0303/B28. Էթնոհոգեբանություն (3 կրեդիտ) | | |

| | | |
|---|---|---|
| ▪ 0303/B29. Տարիքային հոգեբանություն(5 կրեդիտ)<br>***Կրթական այլ մոդուլ-ներ***<br>▪ Կուրսային աշխա-տանք-2 (2 կրեդիտ)<br>▪ Մանկավարժական) պրակտիկա (4 կրե-դիտ) | | |

| Ուստարիներ և ուսումնական մոդուլներ | | |
|---|---|---|
| *4-րդ ուստարի /7-8 կիսամյակներ/* | | |
| ՊԱՐՏԱԴԻՐ | ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ | ԱՌԱՋԱԴԻՄՈՒ-ԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ |
| ***Ընդհանուր մասնագի-տական կրթամաս***<br>▪ 0303/B30. Բժշկական հոգեբանություն (8 կրե-դիտ)<br>▪ 0303/B31. Ժամանակա-կից հոգեբանության հիմնահարցեր (8 կրե-դիտ)<br>▪ 0303/B32. Սոցիալական մանկավարժություն (5 կրեդիտ)<br>▪ 0303/B33. Հոգեթերա-պիա (5 կրեդիտ)<br>▪ 0303/B34. Հոգեբանութ-յան պատմություն (4 կրեդիտ)<br>▪ 0303/B35. Ժամանակա-կից մանկավարժութ-յան հիմնախնդիրներ (4 կրեդիտ) | ***Ընդհանուր մասնա-գիտական կրթամաս***<br>▪ 0303/B38. Քաղաքա-կան հոգեբանութ-յուն և քաղաքական տեխնոլոգիաներ (4 կրեդիտ)<br>կամ<br>▪ 0303/B39. Արտա-կարգ իրավիճակնե-րի և հոգեբանական ինքնակառավարում (4 կրեդիտ)<br>կամ<br>▪ 0303/B40. Ծնկողա-կան մանկավար-ժություն (4 կրեդիտ)<br>կամ<br>▪ 0303/B41. Ժամանա-կակից մանկավար-ժական տեխնոլո- | Առնվազն 240 կրեդիտի կու-տակում<br><br>Մինչև ծրագրի ամփոփիչ ա-տեստավորումն ընկած ժամա-նակահատվածը ուսանողի ՄՈԳ-ը պետք է կազմի առնվազն 9,0 |

| | | |
|---|---|---|
| ▪ 0303/B36. Կոնֆլիկտաբանություն (4 կրեդիտ)<br>***Կրթական այլ մոդուլներ***<br>▪ Արտադրական պրակտիկա (2 կրեդիտ)<br>▪ Ամփոփիչ ատեստավորում (4 կրեդիտ)<br>▪ Ավարտական աշխատանք (12 կրեդիտ) | գիաներ (4 կրեդիտ) | |

| **11. 2. Պրակտիկայի հնարավորությունները և պայմանները** |
|---|
| Պրակտիկան կազմակերպվում է գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Կարող է իրականացվել.<br>• հոգեբանական կենտրոններում,<br>• տարբեր պրոֆիլի բուժհաստատություններում,<br>• մանկապարտեզներում,<br>• դպրոցում,<br>• կառավարական և ոչ կառավարական կազմակերպություններ,<br>• արտադրական ձեռնարկություններում և բիզնես ոլորտում: |

| **11.3. Ավարտական ատեստավորումներ** | |
|---|---|
| **Ուստարի** | **Անվանումը** |
| 4-րդ ուստարի | Բակալավրի ավարտական աշխատանքի պաշտպանություն<br>Ամփոփիչ ատեստավորում |

| **12. Ուսումնական պլանի քարտեզը** |
|---|
| Կցված է: |

| **13. Տեղեկատվություն գնահատման կարգի վերաբերյալ** |
|---|
| Տե՛ս «ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք», Իջևան, 2012 թ., էջ 11-19: |

| **14. Ապագա կարիերայի հնարավորությունները** |
|---|
| «Մանկավարժություն և հոգեբանություն» բակալավրի ծրագրի շրջանավարտները հնարավորություն կունենան աշխատելու որպես՝<br>• հոգեբան, |

- մանկավարժ,
- հոգեբանության ուսուցիչ:

Շրջանավարտները կարող են աշխատել նաև հետևյալ հաստատություններում.

- հիմնական և ավագ դպրոցներում,
- հատուկ ծրագրով ուսուցմամբ կրթական հաստատություններում,
- հոգեբանական ծառայության կենտրոններում,
- ըստ պահանջի տարբեր կառույցներում:

Ծրագրի շրջանավարտները կարող են շարունակել իրենց ուսումը ԵՊՀ-ի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի մագիստրատուրայում, ԵՊՀ-ի մանկավարժության ամբիոնի ,,Կրթության կազմակերպում,, բաժնի մագիստրատուրայում:

**15. Ուսումնառության օժանդակության ռեսուրսներ և ձևեր (եթե կան)**

Ուսումնառության գործընթացում օգտագործվում են գրադարան և գրականության էլեկտրոնային ռեսուրսներ, լաբորատորիաներ, տեխնիկական ժամանակակից միջոցներ:

| | |
|---|---|
| **16. Համապատասխան կրթական չափորոշիչները կամ առարկայական կողմնորոշիչ(ներ)ը** | • Պետական կրթական չափորոշիչ «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտությամբ<br>• ՀՀ կրթական որակավորումների ազգային շրջանակ |

**17. Ծրագրային այլ կողմնորոշիչներ**

-------------------

**18. Լրացուցիչ տեղեկատվություն**

---------------------

Պետք է նկատի ունենալ, որ ծրագրի մասնագիրը տալիս է ծրագրի հիմնական բնութագրերի համառոտ նկարագրությունը և այն կրթական վերջնարդյունքները, որոնք ենթադրվում է, որ ձեռք կբերի ուսանողը, եթե նա լիարժեք կերպով օգտվի ծրագրի ընձեռած ուսումնառության հնարավորություններից: Ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն կարելի է գտնել ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի դասընթացների տեղեկագրքում:

## Ծրագրի կրթական վերջնարդյունքները

| Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն | | Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ | |
|---|---|---|---|
| Ա1 | մանկավարժության և հոգեբանության առարկայի, խնդիրների և հոգեբանա-մանկավարժական գիտելիքի կիրառման հնարավորությունների մասին | Գ1 | տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (գրադարաններ, ինտերնետ ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ) օգտվելու կարողություն |
| Ա2 | մանկավարժության և հոգեբանության մեթոդաբանության, ֆունդամենտալ և կիրառական բնագավառների և այլ գիտությունների հետ կապի մասին | Գ2 | համակարգչային ծրագրերից (Word, Excel, Power Point) օգտվելու կարողություն |
| Ա3 | մանկավարժության և հոգեբանության ձևավորման պատմության, զարգացման արդի միտումների մասին | Գ3 | ժամանակն ու այլ ռեսուրսները արդյունավետորեն պլանավորելու կարողություն |
| Ա4 | օնտոգենեզում և ֆիլոգենեզում հոգեկանի զարգացման առանձնահատկությունների, հոգեկան գործունեության բնագիտական հիմքերի մասին | Գ4 | զեկուցումներ պատրաստելու, հետազոտությունների արդյունքները ներկայացնելու, գիտական բանավեճեր վարելու կարողություն |
| Ա5 | մանկավարժական և հոգեբանական հետազոտություն իրականացնելու, մեթոդների և արդյունքների վերլուծության մասին | Գ5 | մասնագիտական էթիկայի նորմերը պահպանելու կարողություն |
| Ա6 | հոգեկան գործընթացների ընդհանուր օ- | Գ6 | անհատական և խմբային նախագծերում արդյու- |

| | | | |
|---|---|---|---|
| | րինաչափությունների և դրանց անհա-տական առանձնահատկությունների մասին | | նավետորեն շփվելու և համագործակցելու կարո-ղություն: |
| Ա7 | տարիքային և սոցիալական հոգեբա-նությունից, տարիքային և սոցիալական մանկավարժությունից, ինչպես նաև այլ կիրառական բնագավառներից | Գ7 | ընդհանուր զարգացածություն և լայն մտահորի-զոն ապահովող տեղեկություններին տիրապետե-լու կարողություն: |
| Ա8 | մանկավարժի և հոգեբանի գործունեու-թյան էթիկական նորմերի, պահանջնե-րի և տարբեր բնագավառներում աշխա-տանքի առանձնահատկությունների մասին | | |
| **Բ. Գործնական մասնագիտական կարողություններ** | | | |
| Բ1 | Մանկավարժական և հոգեբանական ա-ռանցքային տեսությունները, դրանց ա-ռավելություններն ու սահմանափա-կումները վերլուծելու և գնահատելու կարողություն | Բ4 | հետազոտության իրականացմանը համապա-տասխան մեթոդներ կիրառելու, արդյունքները վերլուծելու և մեկնաբանելու կարողություն |
| Բ2 | վարքի դրսևորման առանձնահատկութ-յունները և հետազոտության արդյունք-ները մեկնաբանելու և բացատրելու կա-րողություն՝ հիմնվելով մանկավարժա-կան և հոգեբանական տեսությունների | Բ5 | մանկավարժական և հոգեբանական ուսումնասի-րության հիմնախնդիրը սահմանելու, նպատակնե-րը և իրականացման մեթոդները ձևակերպելու կարողություն |

| | | | |
|---|---|---|---|
| | ու հայեցակարգերի վրա | | |
| Բ3 | հոգեկան տարբեր գործընթացների, անհատական առանձնահատկությունների, տարբեր գործոնների (կենսաբանական և սոցիալական) ազդեցությամբ վարքի ձևերի վերլուծության կարողություն | Բ6 | գրավոր և բանավոր խոսքը հոգեբանական պատշաճ գրագիտությամբ ձևավորելու կարողություն |
| Բ7 | այլ մասնագետների հետ համատեղ աշխատանքում մանկավարժի և հոգեբանի գործառույթները տարբերակելու կարողություն | | |

| Ծրագրի կրթական վերջնարդյունքները | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ա1 | Ա2 | Ա3 | Ա4 | Ա5 | Ա6 | Ա7 | Ա8 | Բ1 | Բ2 | Բ3 | Բ4 | Բ5 | Բ6 | Բ7 | Գ1 | Գ2 | Գ3 | Գ4 | Գ5 | Գ6 | Գ7 |
| Ուստարին, որի ավարտին կրթական վերջնարդյունքը ձեռք է բերվում բոլոր ուսանողների կողմից: | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1 | 1 | 2 | 1 | 3 | 2 | 3 | 4 | 2 | 3 | 2 | 3 | 4 | 4 | 4 | 1 | 1 | 4 | 3 | 4 | 4 | 2 |

| Ուսումնական մոդուլի անվանումը | Մոդուլի կրեդի-տը | Ծրագրի կրթական վերջնարդյունքները | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ա1 | Ա2 | Ա3 | Ա4 | Ա5 | Ա6 | Ա7 | Ա8 | Բ1 | Բ2 | Բ3 | Բ4 | Բ5 | Բ6 | Բ7 | Գ1 | Գ2 | Գ3 | Գ4 | Գ5 | Գ6 | Գ7 |
| Հայոց լեզու և գրա-կանություն-1 | 2 | | | | | | | | | | | | | | X | | X | | | X | | | X |
| Հայոց լեզու և գրա-կանություն-2 | 2 | | | | | | | | | | | | | | X | | X | | | X | | | X |
| Ռուսաց Լեզու-1 | 4 | | | | | | | | | | | | | | X | | X | | | X | | | |
| Ռուսաց Լեզու-2 | 4 | | | | | | | | | | | | | | X | | X | | | X | | | |
| Օտար լեզու (1-3) | 4+4+(4) | | | | | | | | | | | | | | X | | X | | | X | | | X |
| Հայոց պատմության հիմնահարցեր- 1 | 2 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | X |
| Հայոց պատմության հիմնահարցեր- 2 | 2 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | X |
| Փիլիսոփայության հիմունքներ | 4 | | | | | | | | | | | | | | | | | | | X | | | X |
| Ֆիզդաստիարակություն | 0 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Տնտեսագիտություն | 2 | | | | | | | X | | | | | | | | | | | | | | | X |
| Քաղաքագիտություն | | | | | | | | X | | | | | | | | | | | | | | | X |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Իրավագիտություն | | | | | | | | X | | | | | | | | | | | | | | | X |
| Մշակութաբանություն | 2 | | | | | | | X | | | | | | | | | | | | X | | | X |
| Կրոնների պատմություն | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | X |
| Համակարգչից օգտվելու հմտություններ | 2 | | | | | | | X | | | | | | | | | X | | | X | | | |
| Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ | 2 | | | | | | | X | | | | | | | | | | | | | | | X |
| Քաղաքացիական պաշտպանություն | 2 | | | | | | | X | | | | | | | | | | | | | | | X |
| Արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն | 2 | | | | | | | X | | | | | | | | | | | | | | | X |
| Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ | 2 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | X |
| Մաթեմատիկայի հիմունքներ | | | | | | | | X | | | | | | | | | | | | | | | X |
| ԲՆԳ ֆիզիոլոգիա | 4 | | | X | X | | | | | | | | | | | | | | | | | | |
| Մասնագիտության ներածություն | 4 | X | X | | | | | | X | | | | | | | | | X | | | X | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Տարիքային անատոմիա, ֆիզիոլոգիա և հիգիենա | 2 | | | X | X | | | | | | | | | | | | | | | | | | |
| Ընդհանուր հոգեբանություն | 4 | | | | | | X | | | | | X | | X | | | | | | X | | | |
| Մարդաբանություն և համեմատական հոգեբանություն | 4 | | | | X | | | | | | | | | | | X | | | | | | | |
| Իմացական պրոցեսներ | 7 | | | | | | X | | | X | X | | | | | | | | | | | | |
| Մանկավարժության տեսություն - 1 | 4 | X | | | | X | | | | | | | | | | | | | | X | | | |
| Անձի հոգեբանություն | 4 | | | | | | X | | | X | X | X | | | | | | X | | | | | |
| Մանկավարժության տեսություն - 2 | 4 | | | | | | | | | | | | | | | | | | | X | | | |
| Անհատական տիպոլոգիական առանձնահատկություններ | 6 | | X | X | | | | | | X | X | | | X | | | | | | X | | | |
| Սոցիոլոգիա | 2 | | | | | | | | | | | | X | | | | | | | | | | |
| Տրամաբանություն | 2 | | X | X | X | | | | | | | | | | | | | | | | | | |
| Հոգեբանության պատմություն | 4 | X | X | | | | | | | X | X | | | X | | | X | | | | X | | |
| Հոգեֆիզիոլոգիա | 4 | | | | | | X | | | | | X | | X | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ընտանեկան հոգեբանություն | 3 | | X | | | | | X | | | X | X | | | | | X | | | | | | |
| Հուզակամային ոլորտի զարգացում | 6 | | X | | | X | | | | | X | | | X | X | | | | X | | | | |
| Էթնոհոգեբանություն | 3 | | X | | | X | | X | | X | X | X | | | | | X | | | | X | | |
| Փորձարարական հոգեբանություն և հոգեճանաչում | 7 | | X | | | X | | | | | X | | | | | | | | X | | | | |
| Տարիքային հոգեբանություն | 5 | | | X | X | | X | X | | | X | X | | X | | | | | | | X | | |
| Տարիքային մանկավարժություն | 6 | | | X | X | | X | X | | | X | X | | X | | | | | | | X | | |
| Մանկավարժական հոգեբանություն | 6 | | X | | | | | X | | | | | | | | X | | | | X | | X | |
| Ուսուցման տեղեկատվական տեխնոլոգիաների տեսություն և մեթոդիկա | 2 | | | | | | | | | | | | | | | | | X | | | | X | |
| Սոցիալական հոգեբանություն | 4 | | | | | | | X | | | | | | | | | | | | | | | |
| Սոցիալական մանկավարժություն | 5 | | | | | | | X | | | | | | | | | | | | | | | |
| Հոգեթերապիա | 5 | X | X | | | | X | X | X | | X | X | X | | | X | X | | | X | | | |
| Հոգեբանական ծառայություն և հոգետեխնիկաներ | 5 | | | | | | | X | X | | | | | | | X | X | X | | | X | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Բժշկական հոգեբանություն | **8** | | X | | | X | | X | | X | X | X | | | | | X | | | | X | | |
| Աշխատանքային և կառավարման հոգեբանություն | **5** | | | X | | | | | | | | | | | | | | X | | | | | |
| Կրթական համակարգերի կառավարում | **2** | X | X | | | | | | | | | | | | | | X | | X | | | | |
| Արտակարգ իրավիճակների և հոգեբանական ինքնակառավարում | **4** | | | | | X | | X | | X | X | X | | | | | X | | | | X | | |
| Հոգեբանության դասավանդման մեթոդիկա | **4** | | | | | | X | X | X | X | X | X | | | | X | | | | | | | |
| Կոնֆլիկտաբանություն | **4** | | | | | | | X | X | | X | X | | | X | X | | | | | | | |
| Կրթության և մանկավարժական մտքի պատմություն | **4** | | | X | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Ռիսուցման տեսություն և մեթոդիկա | **4** | X | X | | | X | | | X | | X | | | | X | X | | | | X | X | X | |
| Ստեղծագործության հոգեբանություն | **6** | | | | | X | | X | | X | | | | | X | | X | | X | | | | |
| Հոգեկարգավորում | **3** | | | | | | X | X | | X | | | | | X | | | | | | X | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ժամանակակից հո-գեբանության հիմ-նահարցեր | 8 | | | X | | | | | | X | | | | | | | | | | | | | |
| Ժամանակակից մանկավարժության հիմնախնդիրներ | 4 | | | X | | | | | | X | | | | | | | | | | | | | |
| Շտկողական ման-կավարժություն | 4 | | | | | | | | | | X | | | | | | | | | | | | |
| Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներ | 4 | | | | | X | | | | | | | | | | | | | | | | | |
| Քաղաքական հոգե-բանություն և քաղա-քական տեխնոլո-գիաներ | 4 | | | | | X | | X | | X | X | X | | | | | X | | | | X | | |

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐԸ

| | | |
|---|---|---|
| 0302/B01. | ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ-1 | 2 կրեդիտ |
| 2 ժամ | 8 / 24 /0/ | |
| Կիսամյակը՝ 1–ին | ստուգարք | |

Դասընթացի նպատակն է ժամանակակից հայերենի հնչյունաբանության, բառագիտության, քերականության և ոճագիտության համակարգերի ուսուցումը նպատակաուղղել խոսքի մշակույթի զարգացմանը, գրավոր և բանավոր խոսք կառուցելու հմտությունների ամրակայմանը:

***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***

*Գիտելիք և իմացություն*

- ժամանակակից հայոց լեզվի հնչյունական և բառային առանձնահատկությունները մասին,
- հայ հեղինակների /5-19-րդ դարեր/ գեղարվեստական մի շարք հայտնի ստեղծագործությունների վերաբերյալ,
- մասնագիտական բառապաշարի, տերմինաբանության մասին,

*Ունակ կլինի.*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- կատարելու լեզվական և գրականագիտական վերլուծություններ,

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- գրական հայերենով կառուցելու բանավոր և գրավոր խոսք, շարադրելու մասնագիտական տեքստեր:

***Համառոտ բովանդակությունը***

Պատմական համառոտ ակնարկ հայերենի զարգացման փուլերի մասին: Հայերենի տեղը աշխարհի լեզուների շարքում*:* Հայ հին գրականություն: Հնչյունաբանություն*: Հայերենի* հնչյունական համակարգը: Ուղղագրություն և ուղղախոսություն: Բառագիտություն: Ստուգաբանություն, իմաստաբանություն, բառակազմություն, դարձվածաբանություն, բառարանագրություն: Ոճերի դասակարգումը: Հայ միջնադարյան գրականություն:

***Գնահատման մեթոդները և չափանիշները***

Ստուգարքն անցկացվում է նախօրոք տրվող ստուգարքային թեւադրության դրական գնահատականի և եզրափակիչ բանավոր պատասխանի հիման վրա:

***Հիմնական գրականության ցանկը***

1. Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն, Եր., 2010թ
2. Եզեկյան Լ., Հայոց լեզու, Եր., 2004:
3. Սարգսյան Ա., Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց, Եր., 2007:
4. Աղաջանյան Ջ., Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքների գործնական աշխատանքների ձեռնարկ, Եր., 2009:

| 0305/B07. | ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ-1 | 4 կրեդիտ |
|---|---|---|
| 4 ժամ | 0/64/0/ | |
| Կիսամյակը՝ 1–ին | ստուգարք | |

Դասընթացի նպատակն է ապահովել ուսանողի տիրապետումը ռուսաց լեզվի համակարգին, ապահովել բանավոր խոսքի և երկխոսության կառուցման ունակությունները՝ լեզվական տարբեր ոլորտներում հաղորդակցվելու համար:

***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***

*Գիտելիք և իմացություն*

- ծրագրով նախատեսված քերականական նյութի մասին,
- ծրագրով նախատեսված անհրաժեշտ բառապաշարի շրջանակում,
- ուղղագրության հիմնական սկզբունքների և կանոնների վերաբերյալ:

*Ունակ կլինի*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- կառուցելու բանավոր և գրավոր խոսք,
- վարելու երկխոսություն,
- ընկալելու և վերարտադրելու կարդացած և ունկնդրած նյութի բովանդակությունը,
- թարգմանելու հայերենից ռուսերեն միջին բարդության տեքստեր:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- ընթերցելու ռուս դասականների ստեղծագործությունները բնագրով
- պատկերացում կազմելու ռուսերենի և հայերենի ընդհանրությունների ու տարբերությունների մասին:

| |
|---|
| *Համառոտ բովանդակությունը*<br>Լեզվի դերը հասարակության կյանքում: Ժամանակակից ռուսաց լեզուն աշխարհի լեզուների շարքում: Հնչյունաբանություն. ձայնավորների և բաղաձայնների դասակարգումը, արտասանության և հնչեբանգային հիմնական նորմերը: Բառագիտություն. պատկերացում բառիմաստի մասին. մենիմաստ և բազմիմաստ բառեր, բառի ուղիղ և փոխաբերական իմաստը, հոմանիշներ և հականիշներ, համանուններ և հարանուններ: Ձևաբանություն. ձևաբանության հիմնական միավորները (բառ, ձևույթ), խոսքի մասերի դասակարգումը և նրանց քերականական կարգերը: Շարահյուսություն. շարահյուսական միավորները (բառակապակցություն, պարզ նախադասություն), նախադասության գլխավոր անդամները, նախադասության տեսակներն ըստ կառուցվածքի և հաղորդակցման ուղղվածության: |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները*<br>Ստուգարքը անցկացվում է բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանքների արդյունքների վրա: |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. Լ.Մ. Մկրտչյան, ՌԻսումնական ձեռնարկ, Երևան, 2003: |

| 0301/B01. | ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ-1 | 2 կրեդիտ |
|---|---|---|
| 2 ժամ | 24/ 8 /0/ | |
| Կիսամյակը՝ 1–ին | ստուգարք | |
| Դասընթացի առաջին մասի դասավանդումը նպատակ ունի ծանոթացնելու ուսանողին հայոց պատմության հին շրջանի և միջնադարի պատմությանը, Հայկական լեռնաշխարհի աշխարհագրությանը և սեր առաջացնելու մեր ժողովրդի բազմադարյան պատմության և նրա հերոսական անցյալի նկատմամբ՝ շեշտը դնելով հայոց պետականության պատմության ամբողջական լուսաբանման վրա: | | |
| *Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.*<br>*Գիտելիք և իմացություն*<br>• հայոց պատմության առանցքային հիմնախնդիրների վերաբերյալ,<br>• հայոց պետականության ժամանակափուլերի առանձնահատ- | | |

| |
|---|
| կությունների մասին,<br>• ազատագրական պայքարի հերոսական էջերի մասին,<br>*Ունակ կլինի.*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• գնահատելու հայոց պատմության դերը համաշխարհային պատմության մեջ,<br>• ինքնուրույն մտածելու և անհրաժեշտ դատողություններ անելու հայոց պատմության տարբեր հարցերի վերաբերյալ,<br>• անաչառ գնահատական տալու հայոց պատմության տարբեր հիմնահարցերին և ազգային-պետական գործիչների գործունեությանը,<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• ստեղծագործաբար կիրառելու ու զարգացնելու ունեցած գիտելիքները,<br>• վերլուծելու փաստերը և հետևություններ անելու,<br>• զեկուցումներ պատրաստելու ու գիտական բանավեճեր վարելու: |
| ***Համառոտ բովանդակությունը***<br>*Ներածություն.* Հայկական բնաշխարհը: Վարչական բաժանումները: Հայաստանը հնագույն շրջանում: Հայաստանի հին շրջանի պատմությունը. Վանի թագավորությունը (Ք.ա. IX-VIդդ.): Համահայկական պետության ստեղծումը (Երվանդունիների թագավորությունը): Մեծ Հայքի պետության վերելքը (Արտաշեսյանների թագավորությունը): Արշակունիների թագավորությունը (I-Vդդ.): Հայաստանը վաղ միջնադարում: Հայաստանը զարգացած միջնադարում: Հայաստանը ուշ միջնադարում: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները***<br>Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից: |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Դանիելյան Է., Մելքոնյան Ա., Հայոց պատմություն /հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը/, Երևան, 2008:<br>2. Հայոց պատմության հիմնահարցեր, Երևան, 2000:<br>3. Ժամկոչյան Հ., Աբրահամյան Ա., Մելիք-Բախշյան Ս., Պողոսյան Ս., Հայ ժողովրդի պատմություն /սկզբից մինչև 18-րդ դ. վերջ/, Երևան, 1975: |

| | | |
|---|---|---|
| **0302/B02.** | **ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ-2** | **2 կրեդիտ** |
| **2 ժամ** | **8 / 24/0/** | |
| **Կիսամյակը՝ 2–րդ** | **հանրագումարային քննություն** | |
| Դասընթացի նպատակն է ուսուցանել ժամանակակից հայերենի ձևաբանական և շարահյուսական համակարգերը, ձևաբանական և շարահյուսական ոճագիտության հիմնական հասկացությունները, ծանոթացնել հայ դասական գրականության նմուշներին: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.*** <br> *Գիտելիք և իմացություն* <br> • ժամանակակից հայերենի ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունների մասին, <br> • հայ հեղինակների /19-20-րդ դարեր/ գեղարվեստական մի շարք հայտնի ստեղծագործությունների վերաբերյալ, <br> *Ունակ կլինի.* <br> ✓ *(բուն մասնագիտական կարողություններ)* <br> • ճիշտ կազմելու քերականական ձևերը, գործնականում կիրառելու ձևաբանական և շարահյուսական լեզվաոճական հնարները. <br> ✓ *(ընդհանրական կարողություններ)* <br> • կառուցելու և վարելու երկխոսություն և բանավեճ: | | |
| ***Համառոտ բովանդակությունը*** <br> Ձևաբանություն. խոսքի մասերի դասակարգումը: Ժամանակակից հայերենի թեքվող խոսքի մասերը: Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը: Հայ նոր գրականություն: Շարահյուսություն. Պարզ նախադասություն: Հայ նորագույն գրականություն: Բարդ նախադասություն. փոխակերպում և դերբայական դարձված: Ուղղակի և անուղղակի խոսք: Ժամանակակից հայերենի կետադրությունը: | | |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները*** <br> Քննությունն անցկացվում է բանավոր՝ նախաքննական թելադրության դրական արդյունքի դեպքում: Քննատոմսը կազմված է չորս հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր: Առաջին երկու հարցերը հայոց լեզվին վերաբերող տեսական հարցեր են, երրորդը՝ հայ գրականությանը վերաբերող հարց, չորրորդը՝ գործնական առաջադրանք: | | |
| ***Հիմնական գրականության ցանկը*** <br> 1. Բադիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն, Եր., | | |

2010:
2. Եզեկյան Լ., Հայոց լեզու, Եր., 2004:
3. Սարգսյան Ա., Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց, Եր., 2007:
4. Աղաջանյան Զ., Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքների գործնական աշխատանքների ձեռնարկ, Եր., 2009թ.

| **0305/B08.** | **ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ-2** | **(4 կրեդիտ)** |
|---|---|---|
| **4 ժամ** | **0/64/0/** | |
| **Կիսամյակը՝ 2–րդ** | **ստուգարք** | |

Դասընթացի նպատակն է ապահովել ուսանողի բանավոր և գրավոր խոսքի կառուցման ունակությունները և մասնագիտական լեզվի տիրապետումը՝ հաղորդակցվելու համար լեզվական տարբեր ոլորտներում:

***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***

*Գիտելիք և իմացություն*

- ռուսաց լեզվի քերականական կառուցվածքի վերաբերյալ,
- լեզվի կառուցվածքի մակարդակների ու նրանց միավորների մասին,
- տվյալ մասնագիտության հիմնական տերմինների մասին:

*Ունակ կլինի*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- վերարտադրելու կարդացած տեքստի բովանդակությունը սեղմ և ընդարձակ,
- վերլուծելու և մեկնաբանելու գեղարվեստական և ճանաչողական բնույթի տեքստեր,
- ինքնուրույն կազմելու կապակցված տեքստ՝ ծրագրով նախատեսված թեմատիկայով:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- ինքնուրույն կատարելու ռուսերենի և այլ ուսումնասիրված լեզուների համակարգերի զուգադրական վերլուծություն:

***Համառոտ բովանդակությունը***

Բառագիտություն. դարձվածքներ և դարձվածքների դասակարգումը: Ձևաբանություն. խոսքի մասերի քերականական կարգերը: Բառակազմություն. բառի ձևաբանական կազմը: Շարահյուսություն. միա-

| |
|---|
| կազմ նախադասություն, միակազմ նախադասության դասակարգումը: Բարդ նախադասություն, բարդ նախադասության դասակարգումը: Ուղղագրություն. ուղղագրության հիմնական սկզբունքները և կանոնները: Մասնագիտական տեքստի կառուցվածքը. տվյալ մասնագիտության տերմինային համակարգը, մասնագիտական տեքստին բնորոշ շարահյուսական կառուցվածքները: |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները*<br>Ստուգարքը անցկացվում է բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանքների արդյունքների վրա: |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. Լ.Մ. Մկրտչյան, Ռուսումնական ձեռնարկ, Եր., 2003:<br>2. Հարությունյան Լ. Մ., Ռուսումնական ձեռնարկ/հոգեբանության բաժնի համար/, Եր., 2012: |

| | | |
|---|---|---|
| **0301/B02.** | **ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ-2** | **2 կրեդիտ** |
| **2 ժամ** | **24/ 8 /0/** | |
| **Կիսամյակը՝ 2–րդ** | **հանրագումարային քննություն** | |
| Դասընթացի երկրորդ մասի դասավանդումը նպատակ ունի ուսանողին մատուցել հայոց պատմության նոր և նորագույն շրջանը: Դասավանդման ընթացքում շեշտը դրվում է ազգային-ազատագրական շարժումների և Հայաստանի 1-ին, 2-րդ և 3-րդ Հանրապետությունների պատմության վերլուծության վրա: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• հայոց նոր և նորագույն շրջանի ազատագրական պայքարի կարևորագույն դրվագների վերաբերյալ,<br>• հայկական հարցի, հայոց ցեղասպանության և Սփյուռքի առանցքային հիմնախնդիրների վերաբերյալ,<br>• 20-րդ դարում հայոց նորագույն պետականության ձևավորման գործընթացների վերաբերյալ,<br>• նոր և նորագույն շրջանի հայ մշակույթի զարգացման օրինաչափությունների և առանձնահատկությունների մասին,<br>*Ունակ կլինի.* | | |

| |
|---|
| ✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• ավելի իրատեսորեն գնահատելու նոր և նորագույն շրջանի պատմության առանցքային իրադարձությունները,<br>• ճիշտ գնահատելու տարբեր ազգային-քաղաքական, հասարակական ուժերի և պատմական նշանավոր գործիչների իրական դերակատարությունը հայոց նոր և նորագույն շրջանի պատմության մեջ,<br>• ընկալելու նոր և նորագույն շրջանի մշակույթի անխզելի կապը հայոց պատմության նույն շրջանի առանցքային իրադարձությունների հետ,<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• ստեղծագործաբար կիրառելու և զարգացնելու ունեցած գիտելիքները,<br>• վերլուծելու փաստերը և հետևություններ անելու,<br>• զեկուցումներ պատրաստելու ու գիտական բանավեճեր վարելու: |
| ***Համառոտ բովանդակությունը***<br>Հայ ազատագրական շարժումները 17-18-րդ դդ.: Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին: Հայկական հարցի ծագումը և բովանդակությունը: Հայ ազգային-ազատագրական զինված պայքարի փուլը (1870-ական թթ. - 20–րդ դ. սկիզբ): Ազատագրական խմբակներն ու կազմակերպությունները: Հայ քաղաքական կուսակցությունների ձևավորումը: Ազգային-ազատագրական զինված պայքարի փուլը: Արևմտահայության Մեծ եղեռնը և ինքնապաշտպանական մարտերը: 1917թ. փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը: 1917թ Հոկտեմբերյան հեղափոխությունը և Հայաստանը: Հայաստանի առաջին հանրապետությունը (1918 -1920 թթ.): Խորհրդային Հայաստանը (1920-1991 թթ.): Հայաստանի երրորդ հանրապետությունը (1991-2000 թթ.): Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները***<br>Քննությունը անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 3 հարց՝ 7, 7, 6 միավոր արժեքով: |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Հայոց պատմության հիմնահարցեր, Եր., 2000:<br>2. Հայոց պատմություն, Եր., 2012: |

| 0301/B05. | ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ | 4 կրեդիտ |
|---|---|---|
| 4 ժամ | 48/16 /0/ | |
| Կիսամյակները՝ 3–րդ (4–րդ), | հանրագումարային քննություն | |
| Դասընթացի նպատակն է ներկայացնել փիլիսոփայության հիմնական օրենքները, կատեգորիաներն ու սկզբունքները, կեցության և իմացության էությունը, հիմնական ձևերն ու նրանց զարգացման օրինաչափությունները, որոնք թույլ են տալիս կերտել ազգային նկարագրով և գիտական աշխարհայացքով զինված մարդ, ձևավորել փիլիսոփայական մտածողության այն մակարդակը, որն անհրաժեշտ է յուրաքանչյուր կրթված մարդուն և մասնագետին: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• փիլիսոփայության գիտական - մեթոդաբանական, աշխարհայացքային և արժեքաբանական գործառույթներից,<br>• ճշմարտության և մոլորության, գիտելիքի և հավատի, ռացիոնալի և իռացիոնալի սահմանազատման սկզբունքներից,<br>• քաղաքակրթական զարգացումների օրինաչափություններից ու միտումներից:<br>*Ունակ կլինի.*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• պարզաբանելու բնական և հասարակական գիտությունների գործառույթները,<br>• տարբերակելու քաղաքակրթական հայեցակարգերն ու դրանց հարացույցները,<br>• գնահատելու փակ և բաց համակարգերի զարգացման առանձնահատկությունները,<br>• վերլուծելու հասարակության բնութենական և սոցիոմշակութային հիմունքները,<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• կատարելու սոցիալ-փիլիսոփայական ընդհանրացումներ և կիրառելու համապատասխան մեթոդներ,<br>• իմաստավորելու աշխարհի գիտական պատկերը և մարդու կոչումն ու կյանքի իմաստը: | | |
| ***Համառոտ բովանդակությունը*** | | |

| |
|---|
| Փիլիսոփայության առարկան: Կեցություն և մատերիա: Դիալեկտիկա: Բնություն: Մարդ և պրակտիկա: Գիտակցություն և ճանաչողություն: Գիտություն: Հասարակություն: Մշակույթ: Անձ: Ապագա: |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները*<br>Քննությունը անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 4 հարց: |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. Կյուրեղյան Է.Ա., Փիլիսոփայություն, Եր., 2004:<br>2. Բրուտյան Գ.Ա., Իմաստասիրական երկխոսություններ, Հ.-1, Հ.-2, Եր., 1985,1987:<br>3. Գաբրիելյան Հ.Գ., Հայ փիլիսոփայության պատմություն, Եր., 1976: |

| **0305/B04.** | **ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒ -1** | **4 կրեդիտ** |
|---|---|---|
| **4 ժամ** | **0/64/0/** | |
| **Կիսամյակը՝ 1–ին** | **ստուգարք** | |
| Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողների լեզվական գիտելիքները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում (ունկընդրել, կարդալ, խոսել, գրել): | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• ակտիվ բառապաշարի, քերականության հատուկ բարդություն ունեցող, իրողությունների վերաբերյալ:<br>*Ունակ կլինի*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• կառուցելու բանավոր և գրավոր խոսք,<br>• կիրառելու անգլերենի հիմնական բառակազմական միջոցները,<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• վերարտադրելու անգլերեն տեքստեր, ազատ հաղորդակցվելու անգլերենով՝ բանավոր և գրավոր ընդհանուր բնույթի տարբեր թեմաների շուրջ: | | |
| ***Համառոտ բովանդակությունը***<br>Արտասանություն, ուղղախոսություն. անգլերենի հնչյունական համակարգի ընդհանուր բնութագիրը, հնչյունների և հնչույթների արտասանական առանձնահատկությունները, նախադասության հնչերանգը: Բառապաշար, բառակազմություն. հիմնական բառակազմա- | | |

| |
|---|
| կան միջոցներ (ածանցում, բառաբարդում, փոխակարգում): Քերականություն. խոսքի մասերի քերականական կարգերը, նախադասության շարադասությունը (ուղիղ և շրջուն): Առաջարկվող թեմաներ. «Ընտանիք», «Ընտանեկան հարաբերություններ և ավանդույթներ», «Իմ հետաքրքրությունները», «Ճանապարհորդություն», «Երազանքներ», «Իմ ապագա մասնագիտությունը», «Շրջակա միջավայրը և նրա պահպանումը», «Հանրամշակութային երևույթներ» և այլն: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները***<br>Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից: |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Մխիթարյան Ե., Հիմնական անգլերեն համալսարանի ուսանողների համար, Եր., 2008:<br>2. Գասպարյան Ն., Մանուկյան Գ., Անգլերենի դասագիրք ձեզ համար, մաս 2, Եր., 2008:<br>3. Ցվետկովա Ի., Անգլերեն լեզու /ազատ թեմաներ և տեքստեր/, Մոսկվա, 2000: |

| **0305/B01.** | **ՖՐԱՆՍԵՐԵՆ ԼԵԶՈՒ -1** | **4 կրեդիտ** |
|---|---|---|
| **4 ժամ** | **0/64/0/** | |
| **Կիսամյակը՝ 1–ին** | **ստուգարք** | |
| Դասընթացի նպատակն է թարմացնել դպրոցում ստացած գիտելիքները՝ շեշտը դնելով ֆրանսերենի հնչյունաբանության, քերականական և բառապաշարի հիմնական առանձնահատկությունների վրա: Այս փուլում ստացած գիտելիքները հիմք են հետագա՝ առավել խորացված ուսումնասիրության համար: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• ֆրանսերենի արտասանական նորմերի, հնչյունական համակարգի և հնչյունական յուրահատկությունների մասին,<br>• տառադարձման սկզբունքների մասին,<br>• ուսուցման տվյալ փուլում նախատեսված բառապաշարի մասին,<br>• ֆրանսերենի քերականական կառույցների մասին,<br>• ուղղագրության հիմնական կանոնների մասին, | | |

| |
|---|
| *Ունակ կլինի*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• ճիշտ արտաբերելու ֆրանսերենի առանձին հնչյունները և դրանց արտասանական տարբերակները, ինքնուրույն կատարելու տառադարձում,<br>• ձեռք բերած քերականական գիտելիքների հիման վրա կառուցելու նախադասություններ և գործադրելու դրանք խոսքում,<br>• ազատորեն հաղորդակցվելու ֆրանսերենով, ընթերցելու մշակված տեքստեր,<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• ինքնուրույն կերպով կատարելու տեքստի ձևաբանական վերլուծություն: |
| ***Համառոտ բովանդակությունը***<br>Ռիթմիկ խմբեր: Շեշտ: Enchainement. Liaison. Հատուկ և հասարակ գոյական: Գոյականի սեռը, թիվը: Սեռի արտահայտությունը հոդերի և ածանցների միջոցով: Որոշյալ և անորոշ հոդ: Մասնական հոդը որպես անորոշ քանակ արտահայտելու միջոց: Միաձուլված հոդ: Հոդը չօգտագործելու դեպքերը: Ցուցական, ստացական, հարցական և բացականչական, անորոշ ածականներ: Ածականի համաձայնությունը գոյականի հետ: Քանակական և դասական թվական: Քանակական թվականի գործածությունը: Անձնական անշեշտ դերանուններ, դրանց գործածությունը որպես ենթակա, ուղիղ և անուղղակի խնդիր: Անձնական շեշտված դերանուններ: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները***<br>Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա: |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Պոպովա Ն, Կազակովա Գ., Ֆրանսերենի ձեռնարկ, Մոսկվա,2005:<br>2. Մոժե Գ., Ֆրանսերեն լեզվի և քաղաքակրթության կուրս, Փարիզ, 1992:<br>3. Զուլիակյան Մ., Մելիքսեթյան Ռ., Մուրադյան Ա., Ֆրանսերենի ձեռնարկ, Եր., 2005: |

| | | |
|---|---|---|
| **0305/B05.** | **ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒ -2** | **4 կրեդիտ** |
| **4 ժամ** | **0/64/0/** | |

| Կիսամյակը՝ 2–րդ | ստուգարք |
|---|---|
| Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողների լեզվական գիտելիքները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում՝ ուսումնասիրվող թեմաների շրջանակներում՝ հատուկ ուշադրություն դարձնելով ընդհանուր մասնագիտական բառապաշարին: | |
| *Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.*<br>*Գիտելիք և իմացություն*<br>• ակտիվ բառապաշարի վերաբերյալ,<br>• հանրամշակութային իրողություններից,<br>• քերականական նյութի վերաբերյալ:<br>*Ունակ կլինի*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• յուրացնելու մասնագիտական բառապաշար և մասնագիտական տեքստեր թարգմանելու,<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• վերարտադրելու մասնագիտական անգլերեն տեքստեր, ընկալելու լսված/կարդացած նյութի հիմնական բովանդակությունը, տարանջատելու հիմնական տեղեկատվությունը երկրորդականից: | |
| *Համառոտ բովանդակությունը*<br>Ուղղախոսություն, ուղղագրություն. անգլերենի արտասանական առանձնահատկությունները, տարբեր տիպի նախադասությունների հնչերանգն ու խոսքի առոգանությունը, ուղղագրական հիմնական կանոնները: Բառապաշար, բառակազմություն. վերարտադրողական և ընկալողական բառապաշարի ընդլայնում: Քերականություն. նախորդ փուլում յուրացրած քերականական նյութի (անվանական և բայական կարգերի) ամրակայում՝ հաղորդակցական սկզբունքի հիման վրա: Հանրամշակութային գիտելիքներ անգլախոս երկրների մշակույթի և լեզվակիր ժողովուրդների հասարակական կյանքի մասին: Մասնագիտական լեզվի տերմինաբանական համակարգ: | |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները*<br>Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից: | |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. Մխիթարյան Ե., Հիմնական անգլերեն համալսարանի ուսանող- | |

| |
|---|
| ների համար, Եր., 2008:<br>2. Գասպարյան Ն., Մանուկյան Գ., Անգլերենի դասագիրք ձեզ համար, մաս 2, Եր., 2008:<br>3. Ցվետկովա Ի., Անգլերեն լեզու /ազատ թեմաներ և տեքստեր/, Մոսկվա, 2000: |

| **0305/B02.** | **ՖՐԱՆՍԵՐԵՆ ԼԵԶՈՒ - 2** | **4 կրեդիտ** |
|---|---|---|
| **4 ժամ** | **0/64/0/** | |
| **Կիսամյակը՝ 2–րդ** | **ստուգարք** | |
| Դասընթացի նպատակն է խորացնել և զարգացնել նախորդ փուլում ձեռք բերված գիտելիքները, ֆրանսերենի քերականական կառուցվածքի և բառապաշարի հիմնական շերտի յուրացման հիման վրա ձևավորել խոսքային հմտություններ և գրավոր տեքստերից օգտվելու ունակություններ: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• ֆրանսերենի հնչյունաբանության, ուղղախոսական-ուղղագրական նորմերի, հիմնական քերականական կառուցվածքի մասին:<br>*Ունակ կլինի*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• վերարտադրելու ֆրանսերենի հնչերանգի առանձնահատկությունները,<br>• գործածելու ֆրանսերենի ձևաբանական և քերականական ընդարձակ կաղապարները,<br>• կիրառելու կոնկրետ թեմատիկ բառապաշարը,<br>• տեքստերը վերարտադրելու ու փոխադրելու,<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• ինքնուրույն կերպով կատարելու տեքստի շարահյուսական վերլուծություն,<br>• ազատորեն հաղորդակցվելու ֆրանսերենով, ընթերցելու միջին բարդության տեքստեր: | | |
| ***Համառոտ բովանդակությունը***<br>Գոյական անուն, միայն հոգնակի թվով գործածվող գոյականներ. Les funerailles, les entrailles. Բաղադրյալ գոյականների հոգնակի թվի կազմությունը (des cour- fleurs, des casse–croute և այլն): Ածականի իմաստի | | |

| |
|---|
| փոփոխությունը՝ կախված նրա դիրքից՝un homme grand-un grand homme. Անորոշ դերանվանական ածականներ: Հարաբերական դերանուններ, դրանց ձևերը և գործածությունը նախադասության մեջ՝ qui, que, dont, ou, lequel և այլն (դասակարգում): Պայմանական եղանակ, կազմությունը և գործածությունը համադաս և ստորադասական նախադասություններում: Ըղձական եղանակ: Սահմանական եղանակը ուրիշի ուղղակի խոսքում: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները***<br>Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա: |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Պոպովա Ն, Կազակովա Գ., Ֆրանսերենի ձեռնարկ, Մոսկվա,2005:<br>2. Մոժե Գ., Ֆրանսերեն լեզվի և քաղաքակրթության կուրս, Փարիզ, 1992:<br>3. Ջուլհակյան Մ., Մելիքսեթյան Ռ., Մուրադյան Ա., Ֆրանսերենի ձեռնարկ, Եր., 2005: |

| **0305/B06.** | **ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒ-3** | **4 կրեդիտ** |
|---|---|---|
| **4 ժամ** | **0/64/0/** | |
| **Կիսամյակը՝ 3–րդ,** | **հանրագումարային քննություն** | |
| Դասընթացի նպատակն է նոր, առավել հազեցած բառապաշարի և գիտելիքների ներմուծումը, մասնագիտական բառապաշարի խորացված ուսումնասիրությունը և մասնագիտական գրականությունից օգտվելու հմտությունների զարգացումը՝ զուգահեռաբար խորացնելով ուսանողների լեզվական հմտությունները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• խորացված մասնագիտական բառապաշարից բնագիր մասնագիտական տեքստեր ազատ վերարտադրելու համար:<br>*Ունակ կլինի*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• լիակատար կերպով հասկանալու և ամբողջապես ըմբռնելու լսված կամ կարդացած նյութի հիմնական բովանդակությունը,<br>• անգլերեն բանավոր և գրավոր խոսք կառուցելու, | | |

| |
|---|
| ✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• հաղորդակցվելու անգլերենով մասնագիտական բնույթի տարբեր թեմաների շուրջ,<br>• կատարելու գործարար նամակագրություն (համառոտագրություն, ինքնակենսագրություն /CV/, դիմում): |
| ***Համառոտ բովանդակությունը***<br>Բառապաշար (ռեցեպտիվ և պրոդուկտիվ)՝ հոմանիշներ, հականիշներ, նոր բառակապակցություններ: Քերականություն. բայի անդեմ ձևեր, մոդալ բայերի երանգավորված իմաստները և դրանց կիրառումը բանավոր և գրավոր խոսքում, բայի կրավորական սեռը: Գործարար նամակագրություն՝ համառոտագրություն, ինքնակենսագրություն (CV), դիմում: Առաջարկվող թեմաներ՝ «Սերունդների հակասություն», «Հոգևոր և մշակութային արժեքներ», «21-րդ դար. նոր մարտահրավերներ», «Տեղեկատվական տեխնոլոգիաներ և նրանց դերը մեր կյանքում», «Հայրենիք և հայրենասիրություն» և այլն: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները***<br>Քննությունը անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 3 հարց՝ համապատասխանաբար 7, 6 և 7 միավոր: |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Էվինյան Ս., Աբրահամյան Ս., Թեմրազյան Է., Անգլերեն հոգեբանների համար, Եր., 2013: |

| **0305/B09.** | **ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ-3** | **4 կրեդիտ** |
|---|---|---|
| **4 ժամ** | **0/64/0/** | |
| **Կիսամյակը՝ 3–րդ** | **հանրագումարային քննություն** | |
| Դասընթացի նպատակն է՝ զարգացնելով ուսանողի լեզվական հմտությունները՝ խորացնել մասնագիտական լեզվի իմացությունը և մասնագիտական գրականությունից ազատ օգտվելու կարողությունը: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• լեզվի գիտական ոճի ձևաբանական և շարահյուսական միջոցների վերաբերյալ,<br>• տվյալ մասնագիտության տերմինաբանության մասին,<br>• թարգմանության տեսության հիմնական խնդիրների վերաբեր- | | |

| |
|---|
| յալ,<br>• ուղղագրության և կետադրության կանոնների մասին:<br>*Ունակ լինի*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• ներկայացնելու մասնագիտական տեքստի բովանդակությունը սեղմ և ընդարձակ,<br>• կազմելու մասնագիտական տեքստի պլան, անոտացիա,<br>• թարգմանելու մասնագիտական տեքստ հայերենից ռուսերեն,<br>• ինքնուրույն կազմելու կապակցված տեքստ մասնագիտական թեմատիկայով,<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• հաղորդակցվելու ռուսական մշակույթի ստեղծագործություններին,<br>• ինքնուրույն կատարելու ռուսերենի և այլ ուսումնասիրված լեզուների համակարգերի զուգադրական վերլուծություն,<br>• մասնակցելու լեզվական նյութին առնչվող քննարկումներին: |
| ***Համառոտ բովանդակությունը***<br>Ոճաբանություն. լեզվի գիտական ոճ, գիտական ոճին բնորոշ շարահյուսական կառուցվածքներ, գիտական կապակցված տեքստի կառուցման միջոցներ՝ բառային, ձևաբանական և շարահյուսական: Ուղղագրություն. ուղղագրության հիմնական կանոնները: Մասնագիտական տեքստի թարգմանություն. գիտական տեքստի թարգմանության տեսության հիմնական խնդիրներ: Գիտական զեկույցների և մասնագիտական ռեֆերատների կառուցման հիմնական սկզբունքներ: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները***<br>Քննությունը բանավոր է՝ 20 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց. 1-ին և 2-րդ հարցերը՝ 6-ական միավոր, 3-րդ հարցը /մասնագիտական տեքստի թարգմանություն հայերենից ռուսերեն/՝ 8 միավոր: |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Հարությունյան Լ. Մ., Ուսումնական ձեռնարկ /հոգեբանության բաժնի համար/, Եր., 2012: |

| | | |
|---|---|---|
| **0305/B03.** | **ՖՐԱՆՍԵՐԵՆ ԼԵԶՈՒ-3** | **4 կրեդիտ** |

| | |
|---|---|
| 4 ժամ | 0/64/0/ |
| Կիսամյակը՝ 3–րդ | հանրագումարային քննություն |

Դասընթացի նպատակն է հանրագումարի բերել նախորդ մակարդակներում ստացված գիտելիքները՝ դրանք ուղղորդելով դեպի համապատասխան մասնագիտական ոլորտները:

***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***

*Գիտելիք և իմացություն*

- ֆրանսերենի ձևաբանության և շարահյուսության մասին:

*Ունակ կլինի*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- կատարելու տեքստի շարահյուսական վերլուծություն,

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- բառարանի օգնությամբ ընթերցելու գեղարվեստական գրականություն և մասնագիտական տեքստեր:

***Համառոտ բովանդակությունը***

Գոյականների իգական սեռի կազմության տարբեր միջոցների դասակարգում՝ քերականորեն (հոդի և այլ մասնիկների օգնությամբ), ձևաբանորեն (բառի ձևի փոփոխություն, ածանցներ), բառային միջոցներով (բառի տարբեր ձևեր): Երկու սեռ ունեցող գոյականներ: Եղանակավորման քերականական արտահայտությունը, ֆրանսերեն լեզվի խոնարհման բնութագիրը՝ indicatif (սահմանական եղանակ), conditionnel (պայմանական եղանակ), subjonctif (ըղձական եղանակ), imperatif (հրամայական եղանակ): Նախդիրների համակարգային դասակարգում, տարբեր հարաբերություններ արտահայտող նախդիրներ:

***Գնահատման մեթոդները և չափանիշները***

Քննությունը անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 3 հարց: Առաջին առաջադրանքն է՝ կարդալ, թարգմանել անծանոթ տեքստը մասնագիտական թեմայով, երկրորդը՝ մեկնաբանել ծանոթ մասնագիտական տեքստը. երրորդը՝ խոսել մասնագիտական ոլորտի վերաբերյալ:

***Հիմնական գրականության ցանկը***


1. Պոպովա Ն, Կազակովա Գ., Ֆրանսերենի ձեռնարկ, Մոսկվա,2005:
2. Մոժե Գ., Ֆրանսերեն լեզվի և քաղաքակրթության կուրս, Փարիզ, 1992:
3. Զուլիակյան Մ., Մելիքսեթյան Ռ., Մուրադյան Ա., Ֆրանսերենի ձեռնարկ, Եր., 2005:

<table>
<tr><td>0301/B04.</td><td>ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ</td><td>2 կրեդիտ</td></tr>
<tr><td>2 ժամ</td><td colspan="2">32/0/0/</td></tr>
<tr><td>Կիսամյակը՝ 3–րդ,</td><td colspan="2">ստուգարք</td></tr>
<tr><td colspan="3">Սովորեցնել հասարակական կյանքի տարբեր ոլորտների օրենսդրական կարգավորման հիմունքները: Նպատակներից է նաև ստացած իրավական գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունների մշակումը, ինչպես նաև իրավական աշխարհայացքի ու մշակույթի ձևավորումը:</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.<br>Գիտելիք և իմացություն<br>• պետության և իրավունքի հիմնական հասկացությունների մասին,<br>• պետության և իրավունքի վերաբերյալ,<br>• իրավունքի հատկանիշների վերաբերյալ, իրավունքի բնորոշման մասին,<br>• իրավունքի արդի ձևերի մասին,<br>• իրավական կարգավորման կառուցակարգի, իրավունքի կենսագործման մասին,<br>• իրավունքի համակարգի, իրավունքի հիմնական ճյուղերի, դրանց կարգավորման հիմնական աղբյուրների մասին,<br>• իրավական տեքստերի մեկնաբանման կանոնների և հնարքների վերաբերյալ,<br>• օրինականության վերաբերյալ, իրավաչափ և իրավախախտ վարքագիծ հասկացություններ մասին,<br>• իրավաբանական պատասխանատվության և դրա տեսակների մասին,<br>• կոռուպցիայի դեմ պայքարի իրավական հիմնահարցերի վերաբերյալ,<br>• սահմանադրական, դատական, քաղաքացիական, աշխատանքային, ընտանեկան, էկոլոգիական, քրեական, դատավարական իրավունքի, միջազգային իրավունքի հիմնական հասկացությունների կարգավորման առարկայի հիմնադրույթների մասին:<br>Ունակ կլինի.<br>✓ (բուն մասնագիտական կարողություններ)<br>• համեմատելու և տարբերակելու պետաիրավական հիմնական հասկացությունները,</td></tr>
</table>

- մեկնաբանելու պետություն և իրավունք հասկացությունները, թվարկել դրանց ձևերը,
- քննարկելու և ընդհանրացնելու իրավունքի աղբյուրները, դրանց աստճանակարգությունը,
- իրականացնելու իրավական տեքստերի պարզաբանում և բացատրում՝ օգտագործելով մեկնաբանողական տեխնիկան և տեխնոլոգիան, վեր հանելու իրավական դրույթների տառացի բովանդակությունը, ոգին,
- տարբերակելու իրավակիրառման փուլերը, կատարելու դրանցից ամեն մեկին բնորոշ գործողությունները և քայլերը,
- մեկնաբանելու և գնահատելու իրավաբանական պատասխանատվության հասկացությունը, հիմքերը, սկզբունքերը,
- արժևորելու իրավական և սոցիալական պետության հայեցակարգերը,
- իրականացնելու իրավական գործողություններ և սեփական իրավունքների պաշտպանության գործողություններ՝ օգտագործելով սահմանադրական, դատական, քաղաքացիական, աշխատանքային, ընտանեկան, էկոլոգիական, քրեական, դատավարական իրավունքի, միջազգային իրավունքի հիմնադրույթները,
- տիրապետելու իրավաբանի մասնագիտական արհեստավարժության ընդհանուր հիմունքներին, տիրապետելու իրավական հիմնական եզրույթներին,
- դրսևորելու իրավական աշխարհայացք, ձեռք բերելու մասնագիտական իրավական մշակույթ:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- ինքնուրույն ուսումնասիրելու իրավական կարգավորման աղբյուրները,
- օգտվելու իրավական տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետ ռեսուրսներ, օրենսգրքեր, օրենքներ),
- արտահայտելու մտքերն իրավաբանորեն ճիշտ, տրամաբանորեն հետևողական և հասկանալի, բանավիճելու և պաշտպանելու իր տեսակետը սահմանված կանոնակարգի և էթիկայի կանոնների պահպանմամբ,
- օժանդակելու օրինականության ապահովմանը, իրականացնելու իրավական քարոզչություն, ցուցաբերել քաղաքացիական հասունություն, ակտիվություն, հարգելու օրենքը և իրավական պետության արժեքները, ունենալու բարոյաիրավական պատ-

| |
|---|
| շաճ գիտակցություն, պատասխանատվության զգացում: |
| *Համառոտ բովանդակությունը*<br>Հասարակություն և պետություն: Իրավունքի ձևերը: Օրինականություն, իրավաչափ վարքագիծ, իրավախախտում: Կոռուպցիայի դեմ պայքարի իրավական հիմնահարցերը: Սահմանադրական իրավունք: Դատական իշխանություն և դատական համակարգ: Քաղաքացիական իրավունք: Աշխատանքային իրավունք: Ընտանեկան իրավունք: Էկոլոգիական իրավունք: Քրեական իրավունք: Դատավարական իրավունք: Միջազգային իրավունք: |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները*<br>Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց (նախապես տրամարդված հարցաշարից), որոնցից առնվազն երկուսին դրական պատասխանող ուսանողը ստանում է «ստուգված»: |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. ՀՀ քրեական իրավունք. ընդհանուր մաս, դասագիրք բուհերի համար, խմբ.՝ Գ. Ղազինյան, Եր., 2007:<br>2. ՀՀ քրեական դատավարություն. ընդհանուր մաս, դասագիրք բուհերի համար, հեղ.խմբի ղեկավար և խմբագիր՝ ի.գ.դ.Գ. Ղազինյան, Եր., 2006:<br>3. ՀՀ սահմանադրական իրավունք, Այվազյան Ն. և ուրիշներ, Եր., 2008:<br>4. ՀՀ քաղաքացիական իրավունք, Բարսեղյան Ս. Կ., Մաս 1, դասագիրք բուհերի համար, Եր., 2006: |

| | | |
|---|---|---|
| **0201/B01.** | **ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ** | **2 կրեդիտ** |
| **2 ժամ** | **32/0/0/** | |
| **Կիսամյակները՝ 4–րդ (3–րդ)** | **ստուգարք** | |
| ՈՒսանողների մոտ ձևավորել տնտեսագիտության մեթոդաբանության, շուկայական տնտեսության բովանդակության, սեփականատիրական հարաբերությունների, միկրոտնտեսական և մակրոտնտեսական զարգացման օրինաչափությունների, պետական բյուջեի ու պետության տնտեսական քաղաքականության արդյունավետության բարձրացման մասին պատկերացումներ: | | |

***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***

*Գիտելիք և իմացություն*

- հիմնական տնտեսագիտական հասկացությունների վերաբերյալ,
- արտադրողների և սպառողների վարքագծերի վերաբերյալ,
- տնտեսական մեխանիզմի գործունեության առանձնահատկությունների վերաբերյալ:

*Ունակ կլինի.*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- հասկանալու իր մասնագիտության շրջանակներում առաջացող տնտեսագիտական տարատեսակ խնդիրները և միջոցներ ձեռնարկելու դրանց լուծման ուղղությամբ,
- վերլուծելու երկրում իրականացվող տնտեսական քաղաքականությունը և կանխատեսելու դրա հավանական ազդեցությունը իր մասնագիտական գործունեության ոլորտի վրա:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- վերլուծելու առկա խնդիրները և առաջարկել դրանց լուծման եղանակներ:

***Համառոտ բովանդակությունը***

Տնտեսագիտության առարկան և մեթոդները: Տնտեսական զարգացման ընդհանուր խնդիրները: Տնտեսության շուկայական համակարգը և եկամտի շրջապտույտը: Անհատական շուկաների վերլուծությունը, պահանջարկ և առաջարկ: Սպառողի վարքի տեսություն: Արտադրության ծախքերը: Շուկայի կառուցվածքը և գնի ու արտադրության ծավալի որոշումը: Ձեռնարկությունների և կազմակերպությունների տիպերը և տեսակները: Ռեսուրսների գների ձևավորումը: Մակրոտնտեսական ցուցանիշներ: Ազգային հաշիվների համակարգը: Մակրոտնտեսական կայունություն և տատանումներ: Մակրոտնտեսական վերլուծություն: Փողը և բանկային համակարգը. դրամավարկային քաղաքականություն: Պետական բյուջեն և ֆիսկալ քաղաքականությունը: Տնտեսական աճ: Միջազգային առևտրի տեսություն: Միջազգային տնտեսական գործակցություն: Անցումային տնտեսության հիմունքներ: Կոռուպցիայի տնտեսական պատճառները և դրա դեմ պայքարի մեթոդները անցումային տնտեսությունում:

***Գնահատման մեթոդները և չափանիշները***

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին

| |
|---|
| տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված: |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. Փոլ Ա.Սամուելսոն, Տնտեսագիտություն, 1-ին հատոր, Եր., 1995:<br>2. ՋեյմսԴ. Գոռթնի և ուրիշներ, Տնտեսագիտություն, Եր., 1999:<br>3. Կ. Մարքս, Կապիտալ, հատոր 1, Եր., 1933, 1956:<br>4. Ядгаров Я. С. История экономических учений, М., ИНФРАМ, 2000. |

| | | |
|---|---|---|
| **0301/B03.** | **ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ** | **2 կրեդիտ** |
| **2 ժամ** | **32/0/0/** | |
| **Կիսամյակը՝ 4–րդ ( 3–րդ)** | **ստուգարք** | |
| Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել քաղաքագիտության ձևավորման տեսական և գաղափարական ակունքներին, հիմնական կատեգորիաների ու քաղաքագիտության ուսումնասիրության առարկայական տիրույթին, ձևավորել ուսանողների մոտ քաղաքական իրականության վերլուծության պրակտիկ հմտություններ: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• քաղաքագիտության տեսական և կիրառական նշանակություն ունեցող հիմնահարցերի մասին:<br>*Ունակ կլինի*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• քաղաքագիտական վերլուծություններ կատարելու ,<br>• կողմնորոշվելու գործնական քաղաքականության առանձնահատկությունների մեկնաբանման հարցերում,<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• պատկերացում կազմելու քաղաքագիտության առարկայական տիրույթի ու մեթոդաբանության մասին: | | |
| ***Համառոտ բովանդակությունը***<br>Քաղաքագիտության ինստիտուցիոնալ կայացման գործընթացը: Քաղաքականությունը որպես սոցիալական երևույթ. բնորոշ գծերն ու առանձնահատկությունները: Քաղաքական իշխանության էությունն ու կառուցվածքը: Հասարակության քաղաքական համակարգը: Պետությունը որպես քաղաքական համակարգի գլխավոր ինստիտուտ: | | |

| |
|---|
| Քաղաքական կուսակցություններ և կուսակցական համակարգեր: Ընտրություններ և ընտրական համակարգեր: Քաղաքական գաղափարախոսություններ: Կոռուպցիան և նրա դրսևորման տեսակները, նրա դեմ պայքարի ձևերն ու մեթոդները: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները***<br>Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց (նախապես տրամարդված հարցաշարից), որոնցից առնվազն երկուսին դրական պատասխանող ուսանողը ստանում է «ստուգված»: |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Մանուչարյան Հ., Դրվագներ հայ քաղաքական մտքի պատմություն, Եր., 2002:<br>2. Քաղաքագիտության ներածություն, Եր., 1996:<br>3. Алмонд Г., Паузлл Д., Сравнительная политология сегодня, М., 2003. |

| **0301/B06.** | **ԿՐՈՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ** | **2 կրեդիտ** |
|---|---|---|
| **2 ժամ** | **32/0/0/** | |
| **Կիսամյակը՝ 3–րդ** | **ստուգարք** | |
| Դասընթացի նպատակն է ձևավորելու ընդհանուր գիտելիքներ ու պատկերացումներ ժամանակակից կրոնների, կրոնական տարատեսակ ուղղությունների, դրանց դավանաբանական ու պաշտամունքային առանձնահատկությունների, Հայ Առաքելական եկեղեցու պատմության հիմնահարցերի, արդի կրոնական ներփակ հոսանքների ու դենոմինացիաների վերաբերյալ: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• կրոնների և Հայ եկեղեցու պատմության ձևավորման, զարգացման և դավանաբանական ու ծիսապաշտամունքային առանձնահատկությունների մասին:<br>*Ունակ կլինի.*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• ճանաչելու, գնահատելու և արժևորելու արդի տարբեր կրոններն ու դրանց տարատեսակները, Հայ Առաքելական եկեղեցու պատմությունն ու դավանանքը, | | |

| |
|---|
| ✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• տալու կրոնների համակարգային վերլուծության և ընդհանրացման սահմանները: |
| ***Համառոտ բովանդակությունը***<br>Դասընթացի առարկան, կրոնի պատմական ձևերը: Ժամանակակից կրոնները: Ազգային և համաշխարհային կրոններ: Բուդդայականություն, իսլամ. դավանանքը, պաշտամունքը, հիմնական ուղղությունները: Քրիստոնեություն: Դավանաբանությունը և պաշտամունքը: Աստվածաշունչ: Արդի կրոնական միավորումներն ու համայնքները: Քրիստոնեությունը Հայաստանում I-IV դարերում: Հայ Առաքելական եկեղեցին V-IX դարերում: Հայ Առաքելական եկեղեցին X-XIV դարերում: Հայ Առաքելական եկեղեցին XV-XVIII դարերում: Հայ Առաքելական եկեղեցին XIX-XX դարերում: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները***<br>Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 3 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից: |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Ալիշան Ղ., Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Եր., 2002:<br>2. Աստվածաշունչ<br>3. Алов А.А., Владимирон Н. Г., Овсиенко Ф.Г.,Мировые религии, М., 1998. |

| **0202/B01.** | **ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ** | **2 կրեդիտ** |
|---|---|---|
| **2 ժամ** | **32/0/0/** | |
| **Կիսամյակը՝ 3–րդ** | **ստուգարք** | |
| Դասընթացի նպատակն է կայուն գիտելիքներ ձևավորել մշակութաբանության առարկայի և «մշակույթ» հասկացության վերաբերյալ, արմատավորել համակարգված պատկերացում մշակույթի բաղադրիչների, երևույթների, գործընթացների և մեխանիզմների մասին: Հատուկ ուշադրություն դարձնել համաշխարհային և հայ մշակույթների ընդհանուր բնութագրերի և ներկա գործընթացների վրա: | | |
| **Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.**<br>*Գիտելիք և իմացություն.*<br>• «մշակույթ» հասկացության ամենատարածված սահմանումնե- | | |

րի, մշակույթի առաջացման և զարգացման տեսությունների մասին,

- մշակույթի կառուցվածքի, բաղադրիչների, մշակույթի ծագման և զարգացման հիմնական օրինաչափությունների մասին,
- համաշխարհային և հայ մշակույթների պատմական զարգացումների օրինաչափությունների վերաբերյալ:

*Ունակ կլինի.*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- ներկայացնելու մշակույթի ընդհանրական բնութագիրը, նրա առանձին բաղադրիչներն ու դրսևորումները,
- ճանաչելու և զանազանելու իրարից համաշախարհային մշակութային գործընթացի պատմական և լոկալ դրսևորումները,
- հասկանալու մերօրյա մշակութային երևույթները և գործընթացները,

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- ընկալելու սեփական մասնագիտական գործունեությունը որպես ընդհանրական մշակութային գործընթացի բաղկացուցիչ,
- կիրառելու մշակույթի մասին ստացած գիտելիքները կոնկրետ մասնագիտական ոլորտում:

***Համառոտ բովանդակությունը***

Դասընթացի ուսումնասիրման օբյեկտը, առարկան և խնդիրները: «Մշակույթ» հասկացության սահմանումներն ու մշակույթի էության, ծագման և զարգացման վերաբերյալ տեսությունները: Մշակույթի կառուցվածքը, բաղադրիչները, գործառույթները և մեխանիզմները: Մշակութային գործընթացներ: Մշակույթը «անհատ», «բնություն», «հասարակություն», «էթնոս», «քաղաքակրթություն» կատեգորիաների համատեքստում: Համաշխարհային և հայ մշակույթների պատմական զարգացումները՝ մոտեցումներ, հարցադրումներ, օրինաչափություններ: Ժամանակակից մշակութային գործընթացները և գլոբալիզացիայի խնդիրը:

***Գնահատման մեթոդները և չափանիշները***

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

***Հիմնական գրականության ցանկը***


1. Գուրևիչ Պ. Ս., Մշակութաբանություն, Եր., 2002:
2. Մելքումյան Գ., Մշակութաբանություն, Եր., 2001:
3. Актуальные проблемы культуры 20-ого в., М., 2002.

| | | |
|---|---|---|
| 0101/B02. | ՀԱՄԱԿԱՐԳՉԻՑ ՕԳՏՎԵ-ԼՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 2 կրեդիտ |
| 2 ժամ | 8/24/0/ | |
| Կիսամյակը՝ 1–ին | ստուգարք | |

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ անհրաժեշտ գիտելիքներ համակարգչների, դրանց տեխնիկական, ծրագրային և ինֆորմացիոն ապահովման մասին, ինչպես նաև ստեղծել անհրաժեշտ հիմքեր համակարգչի օգնությամբ մասնագիտության մեջ գործնական հետազոտություններ ու վերլուծություններ կատարելու համար:

***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա***

*Գիտելիք և իմացություն*

- համակարգչի կառուցվածքից և նրա աշխատանքի հիմնական սկզբունքներից,
- օպերացիոն համակարգից, բազմախնդրայնությունից, տեքստային և գրաֆիկական խմբագիրների աշխատանքների սկզբունքների տարբերությունից:

*Ունակ կլինի*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- ինքնուրույն կատարել իր թղթավարությունը (կուրսային, ավարտական աշխատանքներ, հաշվարկների կատարում, զեկուցումների համար սլայդների պատրաստում և այլն),

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- ստեղծագործաբար կիրառելու ունեցած գիտելիքները առկա խնդիրները լուծելիս:

***Համառոտ բովանդակությունը***

Համակարգչի կառուցվածքը և աշխատանքի հիմնական սկզբունքները: Օպերացիոն համակարգի հասկացություն և բազմախնդրայնության գաղափար: Windows օպերացիոն համակարգի գրաֆիկական ինտերֆեյսի հետ աշխատելու հիմնական սկզբունքները: Microsoft Word փաստաթղթի ստեղծում և ձևավորում: Microsoft Excel էլեկտրոնային աղյուսակներ: Microsoft PowerPoint ներկայացման ստեղծում:

***Գնահատման մեթոդները և չափանիշները***

Դասընթացն ավարտվում է ստուգարքով: Ուսանողին տրվում են հանձնարարություններ, որոնք հիմնված են դասընթացի ընթացքում անցած թեմաների վրա:

***Հիմնական գրականության ցանկը***

| |
|---|
| 1. Microsoft Word 2000. Эйткен, Вильямс, Питер, 2000<br>2. Microsoft Excel 2000. Рычков В., Питер, 2000<br>3. Microsoft Word 2000. Справочник, Ю. В. Колесников, Питер, 2000<br>4. Microsoft Excel 2000. Справочник, Б. Карпов, Питер, 2000 |

| 0103/B01. | ԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԲՆԱՊԱՀ-ՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ | 2 կրեդիտ |
|---|---|---|
| 2 ժամ | 32/0/0/ | |
| Կիսամյակները՝ 1-ին (2-րդ) | ստուգարք | |
| Դասընթացի նպատակն է ձևավորել պատկերացում էկոլոգիա գիտության տեսական հիմնահարցերի, բնապահպանության առկա խնդիրների և հիմնահարցերի լուծման առաջարկվող եղանակների և կիրառվող մեթոդների ու մոդելների մասին: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• էկոլոգիայի՝ որպես գիտության ձևավորման, կենդանիների և բույսերի էկոլոգիայի, էկոհամակարգի, կենսացենոզի և նոոսֆերայի ուսմունքների, մարդկության կայուն զարգացման սկզբունքների մասին:<br>*Ունակ կլինի*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• էկոլոգիայի հիմունքներ առարկայից ստացած տեսական գիտելիքները օգտագործելու բնության պահպանության բնագավառում կիրառվող բնապահպանական միջոցառումները ճիշտ վերլուծելու և կիրառելու գործընթացներում,<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• վերլուծություններ կատարելու էկոլոգիական վիճակի մասին և կատարելու համապատասխան եզրակացություններ: | | |
| ***Համառոտ բովանդակությունը***<br>էկոլոգիայի զարգացման պատմական ուղին, տեղն ու դերը մյուս գիտությունների համակարգում: Օրգանիզմներ և էկոհամակարգ: Էկոլոգիական հիմնական օրենքները և կանոնները: Էկոհամակարգի տարրերը և տրոֆիկ մակարդակները: Օրգանիզմների և միջավայրի փոխհարաբերությունը, էկոգործոններ: Էներգիան էկոհամակարգե- | | |

| |
|---|
| րում: Սննդային շղթաներ: Կենսաերկրաքիմիական ցիկլեր: Մարդու էկոլոգիա: Շրջակա միջավայր: Մարդածին համակարգեր: Բնական պաշարների դասակարգումը: Գլոբալ արտադրություն և քայքայում: Շրջակա միջավայրի ոլորտների նկարագրություն: Պոպուլյացիոն էկոլոգիա: Շրջակա միջավայրի աղտոտվածության հիմնահարցերը: Գլոբալ էկոլոգիական պրոբլեմներ: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները***<br>Ստուգարքին տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրված հարցաշարից: |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. Գրիգորյան Կ., Եսայան Ա., Ժամհարյան Հ., Խոյեցյան Ա., Մովսեսյան Հ., Փիրումյան Գ., Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ, Եր., 2010:<br>2. Մելքոնյան Լ., Էկոլոգիայի հիմունքներ, Եր., 2008:<br>3. Գրիգորյան Կ., Եսայան Ա., Բնապահպանություն և աստվածաբանություն, Եր., 2007: |

| 0001/B05. | ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | 2 կրեդիտ |
|---|---|---|
| 2 ժամ | (24/8/0/ | |
| Կիսամյակը՝ 5–րդ | ստուգարք | |
| Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել արտակարգ իրավիճակներում *(երկրաշարժ, ջրհեղեղ, հրդեհներ, արտադրական և տրանսպորտային վթարներ, թունավոր նյութեր, ճառագայթային ախտահանում և այլն)* և պատերազմական պայմաններում պաշտպանվելու ձևերին և մեթոդներին, նաև փրկարարական աշխատանքների ծավալներին, բովանդակությանը և կատարմանը: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• ստեղծված ԱԻ-ում և պատերազմական պայմաններում պաշտպանվելու ձևերն ու մեթոդները ժամանակին և ճիշտ իրականացնելու վերաբերյալ:<br>*Ունակ կլինի*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• ստեղծված ԱԻ-ում և պատերազմական պայմաններում ժամա- | | |

| |
|---|
| նակին և ճիշտ իրականացնելու պաշտպանվելու ձևերն ու մե-<br>թոդները:<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• ստեղծված ԱԻ-ում և պատերազմական պայմաններում ժամա-<br>նակին և ճիշտ իրականացնելու պաշտպանվելու ձևերն ու մե-<br>թոդները: |
| ***Համառոտ բովանդակությունը***<br>Արտակարգ իրավիճակների նախարարության կառուցվածքն ու խնդիրները: Արտակարգ իրավիճակները, նրանց բնութագրերն ու կանխարգելման միջոցառումները: Բնակչության գործողությունները աղետների և նրանց սպառնալիքի ժամանակ: Հակառակորդի հարձակման ժամանակակից միջոցների բնութագրերը, նրանց վարակման օջախները և գնահատման մեթոդները: Բնակչության պաշտպանության կազմակերպումը արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ: Արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ բնակչության բարոյահոգեբանական պատրաստվածության հիմնական ուղղությունները: Փրկարարական աշխատանքների կազմակերպումը արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ, տեղեկատվության կազմակերպումը: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները***<br>Ստուգարքը ընթանում է բանավոր՝ հարցատոմսերով: Հարցատոմսը ներառում է երեք հարց. երկուսը՝ տեսական, մեկը՝ գործնական: |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Եգորով Պ.Տ., Շլյախով Ի.Ա., Մորդվինով Դ., Սիմոնենկո Ի.Վ., Սիպայլո Յու. Ա., Քաղաքացիական պաշտպանություն, Եր., 1968:<br>2. Զայցև Ա.Պ., Կորժավին Ա.Վ., Կոնյև Ա.Ի., Քաղաքացիական պաշտպանություն, Եր,, 1984: |

| 0001/B06. | ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ | 2 կրեդիտ |
|---|---|---|
| 2 ժամ | 8/24/0/ | |
| Կիսամյակը՝ 5–րդ | ստուգարք | |
| Դասընթացների նպատակն է ուսանողներին սովորեցնել էքստրեմալ պայմաններում (երկրաշարժ, թունավոր նյութեր, ճառագայթային | | |

ախտահարում, ոսկորների կոտրվածքներ, արյունահոսություն, շոկային իրադրություն, վնասվածքներ) մինչբժշկական օգնության ցուցաբերում:

***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***

*Գիտելիք և իմացություն*

- էքստրեմալ պայմաններում (երկրաշարժ, թունավոր նյութեր, ճառագայթային ախտահանում, ոսկորների կոտրվածքներ, արյունահոսություն, շոկային իրադրություն, վնասվածքներ) առաջին և մինչբժշկական օգնություն ցուցաբերելու վերաբերյալ:

*Ունակ կլինի*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- էքստրեմալ պայմաններում (երկրաշարժ, թունավոր նյութեր, ճառագայթային ախտահանում, ոսկորների կոտրվածքներ, արյունահոսություն, շոկային իրադրություն, վնասվածքներ) ցուցաբերելու առաջին և մինչբժշկական օգնություն,

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- էքստրեմալ պայմաններում (երկրաշարժ, թունավոր նյութեր, ճառագայթային ախտահանում, ոսկորների կոտրվածքներ, արյունահոսություն, շոկային իրադրություն, վնասվածքներ) ցուցաբերելու առաջին և մինչբժշկական օգնություն:

***Համառոտ բովանդակությունը***

Առաջին բուժօգնությունն ու մինչբժշկական օգնությունն արտակարգ իրավիճակներում: Ախտահարվածների ու հիվանդների բժշկական տեսակավորումը արտակարգ իրավիճակների պայմաններում: Սուր հիվանդություններ և թունավորումներ: Հակահամաճարակային միջոցառումներն արտակարգ իրավիճակներում: Վնասվածքներ և սուր վիրաբուժական հիվանդություններ:

***Գնահատման մեթոդները և չափանիշները***

Ստուգարքը ընթանում է բանավոր՝ հարցատոմսերով: Հարցատոմսը ներառում է երեք հարց. երկուսը՝ տեսական, մեկը՝ գործնական:

***Հիմնական գրականության ցանկը***


1. Առաջին օգնության հիմունքները:
2. Առաջին օգնության տարրերը: Հայկական կարմիր խաչի ընկերություն. մարդասիրության ուժը:
3. В. М. Буонов, <Первич. Медицинская помощь>.
4. В. В. Юуенич, <Первич. помощь при травмах>.

<table>
<tr><td>0102/B01.</td><td>ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՈՆՑԵՊՑԻԱՆԵՐ</td><td>2 կրեդիտ</td></tr>
<tr><td>2 ժամ</td><td colspan="2">32/0/0/</td></tr>
<tr><td>Կիսամյակը՝ 1–ին,</td><td colspan="2">ստուգարք</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացի նպատակն է ձևավորել բնագիտական աշխարհայացք՝ ծանոթացնելով նրանց բնագիտության զարգացման պատմությանը, բնության համակարգերի կազմավորման, կառուցվածքի և զարգացման օրինաչափություններին, բնագիտության զարգացման ներկա միտումներին:</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.<br>Գիտելիք և իմացություն<br>• բնագիտության զարգացման հիմնական փուլերի, բնագիտության հիմնական սկզբունքների, բնության համակարգերի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաների մասին:<br>Ունակ կլինի<br>✓ (բուն մասնագիտական կարողություններ)<br>• հասկանալու բնության համակարգերի կառուցվածքի և զարգացման ընդհանուր սկզբունքները և օրինաչափությունները,<br>✓ (ընդհանրական կարողություններ)<br>• կատարելու համապատասխան եզրակացություններ բնության առավել ընդհանուր համակարգերի վերաբերյալ:</td></tr>
<tr><td colspan="3">Համառոտ բովանդակությունը<br>Բնագիտության առարկան: Օրինաչափությունները և զարգացման հիմնական փուլերը: Բնագիտական և հումանիտար մշակույթներ: Աշխարհի մեխանիստական պատկերը: Դասական թերմոդինամիկայի և վիճակագրական ֆիզիկայի կոնցեպցիաները: Նյութի կառուցվածքի կոնցեպցիաները: Հարաբերականության հատուկ և ընդհանուր սկզբունքները: Միկրոաշխարհի կառուցվածքների և փոխազդեցությունների կոնցեպցիաները: Անորոշությունը աշխարհում: Անորոշությունների առնչություն: Լրացման սկզբունք: Տարրական մասնիկները: Հիմնարար փոխազդեցությունները: Աստղերի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները: Մոլորակների կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները: Տիեզերքի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները: Քվանտային կոսմոլոգիա: Անթրոպային սկզբունք: Կենդանի նյութի ձևերը,</td></tr>
</table>

| |
|---|
| հատկությունները և կազմավորման մակարդակները: Էվոլյուցիոն կենսաբանության կոնցեպցիաները: |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները*<br>Ստուգարքին տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրված հարցաշարից: |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. Գրիգորյան Կ.Վ. և ուրիշներ, Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ , Ուսումնական ձեռնարկ, Եր., 2010:<br>2. Канке В.А., Концепции современного естествознания, М.: Логос. 2002.<br>3. Буданов В.Г., Мелехова О.П. Концепции современного естествознания. МГТУГА. 1998. |

| 0101/B01. | ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ | 2 կրեդիտ |
|---|---|---|
| 2 ժամ | 32/0/0/ | |
| Կիսամյակները՝ 1–ին (2–րդ կամ 3–րդ) | ստուգարք | |
| Դասընթացի նպատակն է ուսանողների մտածողության զարգացումը, վերացական մտածողության ձևավորումը: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• բազմությունների տեսությանը, կոորդինատների մեթոդին, մաթեմատիկական մոդելավորմանը և դասական հավանականությանը վերաբերող անհրաժեշտ դրույթների մասին:<br>*Ունակ կլինի*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• տիրապետելու պարզագույն օրենքների և բանաձևերի ,<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• անհրաժեշտության դեպքում կիրառելու պարզագույն օրենքներն ու բանաձևերը մասնագիտական որոշ հարցերի հետազոտման մեջ: | | |
| *Համառոտ բովանդակությունը*<br>Բազմությունների տեսության տարրերը: Մատրիցներ և որոշիչներ: Մաթեմատիկական ինդուկցիա: Կոորդինատների մեթոդը: Ոչ էվկլի- | | |

| |
|---|
| դեսյան երկրաչափություն: Մաթեմատիկական մոդելավորում: Աքսիոմային մոտեցումը մաթեմատիկայում: Հավանականությունների տեսության տարրերը: Մաթեմատիկական վիճակագրության տարրերը: Մաթեմատիկա առարկան և մաթեմատիկական լեզուն: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները***<br>Ստուգարքն անց է կացվում բանավոր հարցազրույցի ձևով: |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Խոլլ Մ., Կոմբինատորիկա, Մոսկվա, 1969:<br>2. Վեյլ Գ., Մաթեմատիկական տրամաբանություն, Մոսկվա, 1985: |

| | | |
|---|---|---|
| **0303/B01** | **ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ** | **4 կրեդիտ** |
| **4 ժամ** | **48/0/16** | |
| **I կիսամյակ** | **եզրափակիչ գնահատմամբ** | |
| Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել մարդու հոգեկան երևույթների առանցքային օրինաչափություններին և մեխանիզմներին, անձի հոգեկան զարգացմանն ու անհատական առանձնահատկություններին: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• ընդհանուր հոգեբանության տեսազործնական հիմունքներից,<br>• հոգեկան գործընթացներից,<br>• անձնավորության տարբեր կողմերի զարգացման մեխանիզմներից,<br>• հոգեկան տարբեր վիճակներից, վարքի կարգավորման հնարներից:<br>*Ունակ կլինի.*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• բանավոր և գրավոր հասուն խոսքով ներկայացնելու իր գիտելիքները<br>• համադրելու հոգեբանական նոր ինֆորմացիան իր գիտելիքների հետ, գտնելու միջթեմատիկ կապեր<br>• կատարելու ոչ լայնածավալ գիտահետազոտական աշխատանքներ,<br>✓ *(ընդհանրական կարողություններ)* | | |

| |
|---|
| • տիրապետելու հոգեբանական ուսումնասիրությունների և այդ բնագավառի նոր ձեռքբերումների գործնական կիրառման մեթոդներին |
| *Համառոտ բովանդակությունը*<br>Հոգեբանության առարկան, նպատակը, խնդիրները, ճյուղերը, կապը այլ գիտությունների հետ:Ժամանակակից հոգեբանության ուղղությունները, սկզբունքները, հետազոտության մեթոդները: Հոգեկանի զարգացումը, մակարդակները:Գործունեության կառուցվածքը, հրմտությունները, տեսակները: Անձ, միջանձնային հարաբերություններ, խումբ, տեսակներ: Իմացական գործընթացներ: Հուզակամային գործընթացներ: Անձի անհատական տիպոլոգիական առանձնահատկություններ: |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները.*<br>Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:<br>*Եզրափակիչ քննություն*<br>Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. Արզումանյան Ա., Մկրտչյան Ս. Կիրառական հոգեբանության պրակտիկում, Եր., 2002:<br>*2.* Խուդոյան Ս. Անձի զարգացման ճգնաժամային տարիքները, Եր., 2004: |

| **0303/B02** | **ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ - 1** | **4 կրեդիտ** |
|---|---|---|
| **4 ժամ** | **48/0/ 16** | |
| **I կիսամյակ** | **եզրափակիչ գնահատմամբ** | |
| Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել մանկավարժություն գիտության ժամանակակից հիմնախնդիրները, նրա զարգացումը՝ գիտական հարացույցների հիմքի վրա, և ցույց տալ մանկավարժություն գիտության տեղն ու դերը մարդուն ուսումնասիրող գիտությունների շարքում: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.*** | | |

*Գիտելիք և իմացություն*

- մանկավարժության ուսումնասիրության առարկայի, նրա ծագման,
- զարգացման և առանձնահատկությունների վերաբերյալ,
- մանկավարժության հիմնական կատեգորիաների մասին,
- մանկավարժական գիտությունների համակարգի մասին, մանկավարժության այլ գիտությունների կապի մասին,
- մանկավարժական հետազոտության հիմնական մեթոդների վերաբերյալ,
- *ՀՀ* կրթության համակարգի, դիդակտիկայի հիմունքների,
- դաստիարակության գործընթացի առանձնահատկությունների, օրինաչափությունների և սկզբունքների վերաբերյալ:

*Ունակ կլինի.*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- վերլուծելու և գնահատելու մանկավարժագիտության տեսական մեթոդաբանական հիմունքները
- բացատրելու և հիմնավորելու դաստիարակության պատմական բնույթը,
- տալու մանկավարժական գործունեության հիմնական բնութագրերը,
- իրականացնելու դիտում, ամփոփելու հետազոտության ստացված արդյունքները,
- ըստ դաստիարակության նպատակների՝ ձևակերպելու իր
- դաստիարակչական խնդիրները և ուրվագծելու դրանց լուծման ուղիները:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- կիրառելու ուսուցման և դաստիարակության գիտատեսական հիմունքները,
- կիրառելու ուսուցման և դաստիարակության տեխնոլոգիան,
- տիրապետելու դասղեկի դաստիարակչական աշխատանքի մեթոդիկային և դպրոցի կառավարման հիմունքներին:

***Համառոտ բովանդակությունը***

*Մանկավարժության ընդհանուր հիմունքներ*: Մանկավարժության ծագումն ու զարգացումը: Մանկավարժության հիմնական հասկացությունները: Մանկավարժական գիտության համակարգը: Մանկավարժության կապը այլ գիտությունների հետ: Գիտամանկավարժական մեթոդները: Մանկավարժական մտքի պատմության զարգացու-

| |
|---|
| մը: Անձի ձևավորումը և զարգացումը: Անձի համակողմանի և ներդաշնակ զարգացումը: *Դիդակտիկայի հիմունքներ:* Ուսուցման նպատակը, խնդիրները: Կրթական բովանդակությունը, ուսուցման մեթոդաբանական և հոգեբանական հիմունքները: Ուսուցման գործընթացի կառուցվածքը, սկզբունքները և կանոնները: Ուսուցման մեթոդները և հնարները, ինտերակտիվ մեթոդները: Ուսուցման եղանակները և միջոցները: Դաս-դասարանային համակարգ: Դասը որպես ուսուցման կազմակերպման ձև: Աշակերտների գիտելիքների վերահսկումը, ստուգումն ու գնահատումը: Ուսուցիչը և նրան ներկայացվող պահանջները: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները.***<br>Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:<br>*Եզրափակիչ քննություն*<br>Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Ղույումչյան Գ.Ե., Մանկավարժություն, Գիրք I, Եր., 2005:<br>*2.* Ղույումչյան Գ.Ե., Մանկավարժություն, Գիրք II, Եր., 2005:<br>3. Ամիրջանյան Յու. Ա.,Սահակյան Ա.Ս., Մանկավարժություն, Եր., 2005:<br>4. Մախչանյան Հ., Մանուկյան Ա., Մանկավարժության ընդհանուր հիմունքներ, Եր., 2001:<br>5. Подласый И.П., Педагогика, М., 2003.<br>6. Сластенин В.А., Исаев И.Ф.,Шиянов Е.Н., Педагогика, М., 2003.<br>7. Реан А., Бордовская Н.,Розум С., Психология и педагогика, М., 2007.<br>8. Осмоловская И. М., Дидактика, М., 2008. |

| | | |
|---|---|---|
| **0303/B03** | **ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՆՅԱՐԴԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՖԻԶԻՈԼՈԳԻԱ** | **4 կրեդիտ** |
| **4 ժամ** | **48/16/0** | |
| **II կիսամյակ** | **առանց եզրափակիչ գնահատման** | |
| Բարձրագույն նյարդային գործունեության ֆիզիոլոգիա առարկայի | | |

| |
|---|
| նպատակն է ուսումնասիրել ԲՆԳ-ն տարբեր ֆիզիոլոգիական պրոցեսների հետազոտությունների ժամանակ՝ միաժամանակ տալով տարբեր ֆիզիոլոգիական պրոցեսների գիտական բացատրությունը, անատոմո-մորֆոլոգիական կառուցվածքը, ֆիզիոլոգիական առանձնահատկությունները և տարբեր օրգան–համակարգերի գործունեության ժամանակ բարձրագույն նյարդային գործունեության (ԲՆԳ-ի) դերը: |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• մարդու նյարդային համակարգի կառուցվածքաձևաբանական հիմքերից և բարձրագույն նյարդային գործունեության մեխանիզմներից,<br>• մարդու նյարդային համակարգի կառուցվածքի հիմնական սկզբունքներից:<br>*Ունակ կլինի.*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• բացատրելու ԿՆՀ-ի կառուցվածքը ըստ հիերարխիական մոտեցման:<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• վերլուծելու առկա խնդիրները և առաջարկելու դրանց լուծման եղանակները: |
| ***Համառոտ բովանդակությունը***<br>Ներածություն, ԲՆԳ-ի ֆիզիոլոգիայի զարգացման պատմությունը, առարկայի խնդիրները, նպատակը և ուսումնասիրման մեթոդները: Գլխուղեղի աշխատանքի ուսումնասիրման մեթոդները: Պայմանական և ոչ պայմանական ռեֆլեքսները և նրանց կենսաբանական նշանակությունը: Նյարդային կենտրոնի ֆունկցիաները: Քնի, հիպնոզի, երազատեսության ֆիզիոլոգիան: Նյարդային համակարգի, արյան, ավիշի ինտեգրատիվ ֆունկցիան: Ֆունկցիաների լոկալիզացիան մեծ կիսագնդերում: Մարդու և կենդանիների նյարդային գործունեության ֆիլոգենեզը: Ժամանակավոր կապերի ձևավորման ու պահպանման քիմիական և ֆիզիկական մեխանիզմները: Բարձրագույն նյարդային գործունեության վրա արտակեղևային գործոնների ազդեցությունը: Մարդու բարձրագույն նյարդային գործունեության սպեցիֆիկ առանձնահատկությունները: Մարդու բարձրագույն նյարդային գործունեության տիպաբանական առանձնահատկությունները: Հիշո- |

| |
|---|
| դության ֆիզիոլոգիան: Հույզերի և մոտիվացիաների ֆիզիոլոգիան: Գլխուղեղի էլեկտրական ակտիվությունը և ժամանակավոր կապերը: Երեխաների բարձրագույն նյարդային գործունեության զարգացման առանձնահատկությունները: Արտաքին գործոնների ազդեցությունը բարձրագույն նյարդային գործունեության վրա: Բարձրագույն նյարդային գործունեությունը տարբեր բնույթի աշխատանքների դեպքում: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները.*** <br>Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: <br>*Ստուգման ձևերն են.* <br>*1-ին ստուգում.* Գրավոր /ստուգողական աշխատանք/: <br>*2-րդ ստուգում.* Անհատական առաջադրանք (ռեֆերատ): |
| ***Հիմնական գրականության ցանկը*** <br>1. Батуев А.С. Физиология высшей нервной деятельности и сенсорных систем, С-Пб: Питер, 3-е издание, 2008. <br>2. Данилова Н.Н., Крылова А.Л. Физиология высшей нервной деятельности. Ростов-на-Дону: Феникс, 2002. <br>3. Смирнов В.М., Будылина С.М. Физиология сенсорных систем и высшая нервная деятельность, М: Академия, 3-е переиздание, 2007. |

| **0303/B04.** | **ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ** | **4 կրեդիտ** |
|---|---|---|
| **4 ժամ** | **48/0/16** | |
| **II կիսամյակ** | **եզրափակիչ գնահատմամբ** | |
| Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին հոգեկանի առաջացման էվոլյուցիային, տալ տեղեկություններ զոոհոգեբանական և էտոլոգիական հետազոտությունների ժամանակակից նվաճումների վերլուծությունների և ընդհանրացումների վերաբերյալ: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.*** <br>*Գիտելիք և իմացություն* <br>• համեմատական հոգեբանության և էթոլոգիայի վերաբերյալ, <br>• հոգեկանի զարգացման և գործունեության օրինաչափությունների վերաբերյալ՝ սկսած ստորակարգ կենդանիներից մինչև մարդ: <br>*Ունակ կլինի.* | | |

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- համակարգելու և ընդհանրացնելու կենդանիների հոգեկանի գործունեության վերաբերյալ հետազոտությունների արդյունքները,
- կատարելու համեմատական վերլուծություններ հիվանդությունների վերաբերյալ, որոնք փորձարկված են կենդանիների վրա,

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- կիրառելու գիտելիքները հետագա գիտական հետազոտություններում:

***Համառոտ բովանդակությունը***

Մարդաբանությունը որպես գիտություն, խնդիրները: Կյանքի ծագումը երկրի վրա: Մարդու ծագումը և հոգեկանի էվոլյուցիան: Ռասայաբանություն և էթնիկական մարդաբանություն: Համեմատական հոգեբանություն: Մարդը որպես անհատ: Մարդը որպես սուբյեկտ: Մարդը որպես անձ և անհատականություն:

***Գնահատման մեթոդները և չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

***Հիմնական գրականության ցանկը***

1. Պապոյան Վ.Ռ., Դասախոսություններ մարդաբանությունից, Եր. 2004:
2. Антропология, Хрестоматия, М., 2002.
3. Вагнер В.А. Сравнительная психология. Москва – Воронеж, 1998.
4. Зорина З.И., Полетаева И.И., Зоопсихология. Экспериментальное мышление животных\\ Учебное пособие по ВНД и зоопсихологии. М, 2001.
5. Хрисанорова Е.Н., Перевозчиков И.И., Антропология, М. 1999.
6. Хомутов А.А., Антропология, М.2002.
7. Фабри К.Э., Основы зоопсихологии, Москва 1986.
8. Филиппова Г.Г., Зоопсихология и сравнительная психология, Москва, 2004.

| 0303/B05 | ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ | 4 կրեդիտ |
|---|---|---|
| 4 ժամ | 48/8/8 | |
| II կիսամյակ | եզրափակիչ գնահատմամբ | |

Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել անձի հոգեբանության մեթոդաբանական սկզբունքներին, անձի հիմնախնդրի վերաբերյալ տարբեր մեկնաբանություններին:

***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***

*Գիտելիք և իմացություն*

- անձի հոգեբանության առարկայի և պատմության և ուսումնասիրման հիմնական ուղղությունների մասին,
- անձի հոգեբանության հիմնական գիտական հասկացություններից, ժամանակակից տերմինաբանությունից,
- անձի ուսումնասիրման անհրաժեշտ մեթոդաբանական հիմքերից,
- անձի կառուցվածքի և ինքնագիտակցության վերաբերյալ,
- անձի զարգացման սոցիալ-հոգեբանական օրինաչափությունների և դետերմինանտների մասին,
- անձի դրդապատճառապահանջմունքային ոլորտի և դրա ձևավորման առանձնահատկությունների մասին,
- անձի արժեհիմաստային համակարգի կայացման օրինաչափությունների վերաբերյալ,
- անձի հոգեկան առողջության և պաթոլոգիայի չափանիշների հարցերի մասին:

*Ունակ կլինի.*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- անձի հոգեբանության դիրքերից մեկնաբանելու մարդկանց հոգեկան հատկանիշները, խնդիրները, վարքագծի և շփման առանձնահատկությունները:
- առաջ քաշելու անձի հոգեբանության տեսակետից կիրառական նշանակություն ունեցող հետազոտական խնդիրներ և ընտրելու դրանք ուսումնասիրելու համապատասխան մեթոդներ ու մեթոդիկաներ:
- վերլուծել անձի հոգեբանությանն առնչվող գրականություն և դրանք ըստ համապատասխանության ինքնուրույն կիրառելու անհատական աշխատանքներում (օրինակ՝ կուրսային աշխատանքում):

| |
|---|
| ✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• համագործակցելու և թիմային աշխատելու՝ խմբային հանձնարարությունների իրականացման միջոցով: |
| ***Համառոտ բովանդակությունը***<br>Անձի հասկացությունը հոգեբանության մեջ: Անձի հոգեկան ակտիվության աղբյուրները: Անձի ձևավորումը գործունեության մեջ: Անձի ձևավորումը հաղորդակցման մեջ: Ինքնագիտակցման նշանակությունը անձի ձևավորման գործում: Դասական հոգեվերլուծություն: Նեոֆրեյդիզմ: Հումանիստական հոգեբանություն: Գեշտալտ հոգեբանություն: Վարքագիտություն և սոցիալ կոգնիտիվիզմ: Անձի դիսպոզիցիոն տեսություն: Կոգնիտիվ հոգեբանություն: Անձի ինտելեկտուալ զարգացման տեսությունները: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները.***<br>Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:<br>*Եզրափակիչ քննություն*<br>Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Фрейджер Р., Фэйдитен Дж., Теории личности и личностный рост, 2002.<br>2. Хьелл Л., Зиглер Д., Теории личности, Питер: 1997. |

| | | |
|---|---|---|
| **0303/B06** | **ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ-2** | **4 կրեդիտ** |
| **4 ժամ** | **48/0/16/** | |
| **II կիսամյակ** | **եզրափակիչ գնահատմամբ** | |
| Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել մանկավարժություն գիտության ժամանակակից հիմնախնդիրները, նրա զարգացումը՝ գիտական հարացույցների հիմքի վրա, և ցույց տալ մանկավարժություն գիտության տեղն ու դերը մարդուն ուսումնասիրող գիտությունների շարքում: | | |

***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***
*Գիտելիք և իմացություն*

- մանկավարժության ուսումնասիրության առարկայի, նրա ծագման,
- զարգացման և առանձնահատկությունների վերաբերյալ,
- մանկավարժության հիմնական կատեգորիաների մասին,
- մանկավարժական գիտությունների համակարգի մասին, մանկավարժության այլ գիտությունների կապի մասին,
- մանկավարժական հետազոտության հիմնական մեթոդների վերաբերյալ,
- ՀՀ կրթության համակարգի, դիդակտիկայի հիմունքների,
- դաստիարակության գործընթացի առանձնահատկությունների, օրինաչափությունների և սկզբունքների վերաբերյալ:

*Ունակ կլինի.*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- վերլուծելու և գնահատելու մանկավարժագիտության տեսական մեթոդաբանական հիմունքները
- բացատրելու և հիմնավորելու դաստիարակության պատմական բնույթը,
- տալու մանկավարժական գործունեության հիմնական բնութագրերը,
- իրականացնելու դիտում,ամփոփելու հետազոտության ստացված արդյունքները,
- ըստ դաստիարակության նպատակների՝ ձևակերպելու իր դաստիարակչական խնդիրները և ուրվագծելու դրանց լուծման ուղիները:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- կիրառելու ուսուցման և դաստիարակության գիտատեսական հիմունքները,
- կիրառելու ուսուցման և դաստիարակության տեխնոլոգիան,
- տիրապետելու դասղեկի դաստիարակչական աշխատանքի մեթոդիկային և դպրոցի կառավարման հիմունքներին:

***Համառոտ բովանդակություն***

*Դաստիարակության ընդհանուր հիմունքները:* Դաստիարակության նպատակը, խնդիրները, մեթոդները: Դաստիարակության համակարգը, սկզբունքները: Դաստիարակության բաղադրամասերը՝ մտավոր, ֆիզիկական, ընտանեկան, գեղագիտական, աշխատանքա-

| |
|---|
| յին, սեռական և իրավաբանական: Կոլեկտիվի դաստիարակության տեսությունը: *Մանկավարժական կառավարում: ՀՀ* կրթական համակարգը: Դպրոցի տնօրենի գործունեությունը, կառավարման ոճերը: Դասղեկը, նրա աշխատանքի մեթոդիկան: Աշակերտական կազմակերպությունները դպրոցում: Արտադասարանային և արտադպրոցական աշխատանքը: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները.***<br>Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:<br>*Եզրափակիչ քննություն*<br>Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Ղույումչյան Գ.Ե., Մանկավարժություն, Գիրք I, Եր., 2005:<br>*2.* Ղույումչյան Գ.Ե., Մանկավարժություն, Գիրք II, Եր., 2005:<br>3. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա.Ս., Մանկավարժություն, Եր., 2005:<br>4. Մախչանյան Հ., Մանուկյան Ա., Մանկավարժության ընդհանուր հիմունքներ, Եր., 2001:<br>5. Подласый И.П., Педагогика, М., 2003.<br>6. Сластенин В.А., Исаев И.Ф., Шиянов Е.Н., Педагогика, М., 2003.<br>7. Реан А., Бордовская Н., Розум С., Психология и педагогика, М., 2007.<br>8. Осмоловская И. М., Дидактика, М., 2008. |

| **0303/B07** | **ՏԱՐԻՔԱՅԻՆ ԱՆԱՏՈՄԻԱ, ՖԻԶԻՈԼՈԳԻԱ ԵՎ ՀԻԳԻԵՆԱ** | **2 կրեդիտ** |
|---|---|---|
| **2 ժամ** | **24/0/8/** | |
| **II կիսամյակ** | **առանց եզրափակիչ գնահատման** | |
| Տարիքային ֆիզիոլոգիա առարկայի նպատակն է ուսումնասիրել ֆիզիոլոգիական ֆունկցիաների զարգացման և դրսևորման առանձնահատկությունները օնտոգենեզի տարբեր փուլերում, այն է՝ նորածնության, վաղմանկության, առաջին և երկրորդ մանկության, դեռահասության, պատանեկության, հասունության և ծերության փուլե- | | |

| |
|---|
| րում: |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• սեփական օրգանիզմի տարբեր օրգան-համակարգերի մորֆո-ֆունկցիոնալ և տարիքային առանձնահատկությունների մասին,<br>• օրգանիզմում նրանց գործունեության ախտահարման հետ կապված որոշ կլինիկ ախտանիշների մասին,<br>• տարիքային տարբեր խմբերում ընդգրկված աշակերտների օրգանիզմի բազմաթիվ վեգետատիվ ֆունկցիաների, օրգանների տարիքային առանձնահատկությունների մասին:<br>*Ունակ կլինի.*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• օգտվելու փորձարարական նյութից և պատրաստուկներից:<br>• ճիշտ մեկնաբանելու ուսումնասիրվող նյութերը:<br>• տեսական դասընթացը համադրելու լաբորատոր և գործնական աշխատանքների հետ:<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• փորձարարական կենդանիների հետ վարվելու մեթոդներին, նրանց խնամքի պայմաններին,<br>• փորձարարական կենդանիների հետազոտման այս կամ այն ֆունկցիոնալ գործընթացին կամ երևույթին,<br>• նյութը առավել հստակ յուրացնելու համար լաբորատոր, գործնական պարապմունքների կազմակերպման նպատակով իրականացվող որոշակի հետազոտական մեթոդների, մասնավորապես արյան խմբերի, ռեզուս գործոնի, մակարդելիության ժամանակի և այլն): |
| ***Համառոտ բովանդակությունը***<br>Ներածություն, ֆիզիոլոգիա առարկայի խնդիրները, ուսումնասիրման մեթոդները և ճյուղերը: Սիրտ–անոթային համակարգի գործունեության ֆիզիոլոգիան և նրա ընդհանուր ու տարիքային առանձնահատկությունները: Արյան ընդհանուր և տարիքային ֆիզիոլոգիան, իմունիտետի տեսակները և տարիքային առանձնահատկությունները: Շնչառության համակարգի ընդհանուր և տարիքային ֆիզիոլոգիան: Շնչառության ֆիզիոլոգիայի նյարդային և հումորալ կարգավորումը: Մարսողության համակարգի ընդհանուր և տարիքային ա- |

| |
|---|
| ռանձնահատկությունները, նրա նյարդային և հումորալ կարգավորումը: Նյութերի և էներգիայի փոխանակության ընդհանուր և տարիքային առանձնահատկությունները: Օրգանական նյութերի և վիտամինների տարիքային նշանակությունը: Ջերմակարգավորման ֆիզիոլոգիան, քիմիական և ֆիզիկական ջերմակարգավորման ընդհանուր և տարիքային առանձնահատկությունները: Արտաթորության համակարգի ընդհանուր և տարիքային ֆիզիոլոգիական առանձնահատկությունները: Ներզատական գեղձերի ընդհանուր և տարիքային ֆիզիոլոգիական առանձնահատկությունները: Հենաշարժական համակարգի գործունեության ընդհանուր և տարիքային առանձնահատկությունները: Անալիզատորների (տեսողական, լսողական, համի, հոտառության, մաշկային) զարգացման տարիքային առանձնահատկությունների ֆիզիոլոգիան: Գլխուղեղի մեծ կիսագնդերի տարիքային ֆիզիոլոգիան: Առաջին և երկրորդ ազդարարային համակարգերի ընդհանուր և տարիքային ֆիզիոլոգիան: Բարձրագույն նյարդային գործունեության տիպերը և ձևավորման տարիքային առանձնահատկությունները: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները.***<br>Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:<br>*Ստուգման ձևերն են.*<br>*1-ին ստուգում.* Գրավոր /ստուգողական աշխատանք/:<br>*2-րդ ստուգում.* Անհատական առաջադրանք (ռեֆերատ): |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Казинова Л.Ф., Возрастная анатомия, физиология и гигиена: методические рекомендации /Л.Ф. Седокова., Е.А. Каюмова; поод ред. С.В. Низкодубовой. Томск: Центр учевно-методической литературы ТГПУ, 2004.<br>2. Хрипкова, А.Г., Возрастная физиология и школьная гигиена : пособие для студентов пединститутов /А. Г. Хрипкова, М. В. Антропова, Д. А. Фарбер – М. : Просвещение, 1990.<br>3. Безруких М. М., Возрастная физиология (физиология развития ребенка): учебное пособие для студентов высших пед. уч. заведений /М.М. Безруких, В.Д. Сонькин, Д.А. Фарбер - М.: “Academa”, 2003. .<br>4. Сапин М. Р., З. Г. Брыксина Анатомия и физиология детей и подростков: Академия: 2000. |

| | | |
|---|---|---|
| 0303/B08 | ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵՃԱՆԱՉՈՒՄ | 7 կրեդիտ |
| 6 ժամ | 64/24/8/ | |
| III կիսամյակ | եզրափակիչ գնահատմամբ | |
| Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հոգեբանության մեջ փորձարարական հետազոտությունների տեսություններին, մեթոդաբանության հիմքերին, կողմնորոշել հոգեբանական հետազոտությունների մեթոդների համակարգում, ձևավորել գիտելիքներ հոգեբանական գիտափորձերի պլանավորման համար: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• հոգեբանական գիտափորձի կազմակերպման ձևերից ու հետազոտությունների հիմնական ծրագրերից,<br>• հոգեբանական հետազոտության կազմակերպման տրամաբանության վերաբերյալ:<br>*Ունակ կլինի.*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• կողմնորոշվելու հոգեբանական հետազոտության մեթոդաբանական հիմնախնդիրներում և իրականացնելու հետազոտություն,<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• ինքնուրույն օգտագործելու գիտելիքները գիտափորձերի կազմակերպման, ծրագրավորման և այլ էմպիրիկ հետազոտությունների համար: | | |
| ***Համառոտ բովանդակությունը***<br>Փորձարարական հոգեբանության և հոգեճանաչման ձևավորման, զարգացման պատմությունը: Փորձարարական հոգեբանության մեթոդոլոգիայի հիմնական սկզբունքները: Հոգեբանական մեթոդների կիրառման պահանջները և դժվարությունները: Հոգեբանության հետազոտության մեթոդիկաների դասակարգման սկզբունքները և տեսակները: Ոչ էքսպերիմենտալ մեթոդներ: Փորձարարական հոգեբանության կազմակերպչական մեթոդները: Ոչ էքսպերիմենտալ մեթոդներ: Հոգեբանական թեսթ: Տվյալների հիմնական տիպերը-LTQ: Վալիդություն, տեսակները, չափման հիմնական սկզբունքները: Հոգեբանական էքսպերիմենտ: Էքսպերիմենտալ տվյալների ինտերպրետացիա: Չափման սանդղակները, տեսակները և կիրառման ոլորտները: | | |

| |
|---|
| Փոփոխականների միջև կապերի չափումը: Տվյալների բազմաչափ վերլուծության մեթոդներ: Դիագնոստիկ մեթոդներով աշխատող անձանց և նրանց մասնագիտական հմտություններին վերաբերող էթիկական պահանջները: Դիագնոստիկայի ենթարկվող անձանց իրավունքների պահպանման հետ կապված էթիկական պահանջները: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները.***<br>Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:<br>*Եզրափակիչ քննություն*<br>Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Ավանեսյան Հ. Մ., Փորձարարական հոգեբանություն: Ուսումնական ձեռնարկ, Էդիթ Պրինտ, Եր., 2010:<br>2. Дружинин В. Н., Экспериментальная психология. Изд.2: Питер, 2000.<br>3. Зароченцев К. Д., Худяков А. И., Экспериментальная психология/ Учебник. М., 2005. |

| **0303/B09** | **ՀՈԳԵՖԻԶԻՈԼՈԳԻԱ** | **4 կրեդիտ** |
|---|---|---|
| **4 ժամ** | **48/0/16/** | |
| **III կիսամյակ** | **առանց եզրափակիչ գնահատման** | |
| Դասընթացի նպատակն է ձևավորել հոգեկան գործընթացների ֆիզիոլոգիական օրինաչափությունների, հոգեֆիզիոլոգիական տարբեր դպրոցների կողմից ընդունված տեսությունների և հայեցակարգերի մասին լիարժեք մասնագիտական պատկերացումներ: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• հոգեֆիզիոլոգիական գիտության տեսական խնդրացանկից,<br>• հոգեկան գործընթացների ուղեղային ապահովման մեխանիզմներից:<br>*Ունակ կլինի.*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• բացատրելու հիմնական հոգեկան գործընթացների ձևավորման | | |

| |
|---|
| և զարգացման նյարդաֆիզիոլոգիական հիմքերը,<br>• օգտագործելու հոգեֆիզիոլոգիական ցուցանիշների գրանցման մեթոդները,<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• վերլուծելու առկա խնդիրները և առաջարկելու դրանց լուծման եղանակներ, կատարելու հետազոտական աշխատանք հոգեֆիզիոլոգիայի հայեցակարգերին հիմնվելով: |
| ***Համառոտ բովանդակությունը***<br>Հոգեֆիզիոլոգիայի առարկան, դասակարգումը, մեթոդները: Ֆունկցիոնալ վիճակների հոգեֆիզիոլոգիա: Քնի հոգեֆիզիոլոգիա: Քնի տեսություններ: Ստրեսի հոգեֆիզիոլոգիա: Ընդհանուր ադապտացիոն համախտանիշ: Պահանջմունքների և մոտիվացիաների հոգեֆիզիոլոգիա: Հույզերի հոգեֆիզիոլոգիա: Ուշադրության հոգեֆիզիոլոգիա: Խոսքի հոգեֆիզիոլոգիա: Մտածողական գործունեության հոգեֆիզիոլոգիա: Շարժողական ակտիվության հոգեֆիզիոլոգիա: Գիտակցությունը որպես հոգեֆիզիոլոգիական ֆենոմեն: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները.***<br>Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:<br>*Ստուգման ձևերն են.*<br>*1-ին ստուգում.* Գրավոր /ստուգողական աշխատանք/:<br>*2-րդ ստուգում.* Անհատական առաջադրանք (ռեֆերատ): |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Марютина Т. М., Кондаков И.М. Психофизиология: Учебник для вузов, Москва МГППУ, 2004.<br>2. Психофизиология – под редакцией Ю. И. Александрова, ЦПБ, 2007 |

| 0303/B10 | ԻՄԱՑԱԿԱՆ ՊՐՈՑԵՍՆԵՐ | 7 կրեդիտ |
|---|---|---|
| 6 ժամ | 6416/16/ | |
| III կիսամյակ | եզրափակիչ գնահատմամբ | |
| Դասընթացի հիմնական նպատակն է ուսանողներին ծանոթացնել բարձրագույն իմացական գործընթացների հոգեբանական ուսումնասիրություններին, ցույց տալ հոգեկան արտացոլման բարձրագույն ձևերի յուրակերպությունը, ներկայացնել դասական և ժամանակակից տեսությունները, տալ հիմնական հարցադրումների և խնդիրնե- | | |

րի գիտական բացատրությունները:

***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա***

*Գիտելիք և իմացություն*

- հոգեկանի ծագման և զարգացման մեխանիզմների և օրինաչափությունների մասին,
- աշխարհի մասին իմացության և գիտելիքի ձևավորման ակունքների վերաբերյալ,
- մարդու ճանաչողական համակարգի մասին,
- ճանաչողության մեխանիզմների ժամանակակից մեկնաբանությունների մասին,
- մարդու և բնության կապի ու հարաբերության և դրանց զարգացման միտումների մասին,
- հիշողության, մտածողության, խոսքի և երևակայության պատմական և ժամանակակից հոգեբանական տեսությունների, կոգնիտիվ հոգեկան գործընթացների հիմնական օրինաչափությունների մասին:

*Ունակ կլինի.*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- բացատրելու իմացական գործընթացների առանձնահատկությունները և մեխանիզմները,
- ներկայացնելու մարդու ճանաչողական ոլորտի համակարգը և կապերը զգայական ու վերացական մակարդակների միջև,
- մեկնաբանելու իմացության դերը մարդու կենսագործունեության տարբեր ոլորտներում,
- ճանաչելու կոգնիտիվ գործընթացների առանձնահատկությունները,
- քննադատաբար վերլուծելու կոգնիտիվ հոգեկան գործընթացների հիմնական մոտեցումները,

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- համակարգված ներկայացնելու իմացական գործընթացի մակարդակները, օրինաչափությունները, մեխանիզմները,
- վերլուծելու հոգեբանական գրականության սկզբնաղբյուրները,
- հասկանալու հոգեբանության զարգացման միտումները տարբեր դպրոցներում:

***Համառոտ բովանդակությունը***

Հասկացություն ուշադրության մասին: Հասկացություն զգայությունների մասին: Հասկացություն ընկալման մասին: Հասկացություն հի-

| |
|---|
| շողության մասին: Հասկացություն երևակայության մասին: Հասկացություն խոսքի մասին: Հասկացություն մտածողության մասին: Գիտակցությունը որպես իմացական գործընթացները ինտեգրող սկիզբ: Ինտելեկտի տեսությունները: Իմացական գործընթացները քննարկող տեսությունները: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները.***<br>Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Магазов С.С., «Когнитивные процессы и модели» М.: Издательство ЛКИ, 2007.<br>2. Роберт Солсо., Когнитивная психология. Питер. 2011.<br>3. Когнитивная психология: история и современность / Фаликман М. и Спиридонова В., Ломоносов, 2011.<br>4. И.А. Бескова. КАК ВОЗМОЖНО ТВОРЧЕСКОЕ МЫШЛЕНИЕ? М., 1993<br>5. Величковский Б.М., Когнитивная наука : Основы психологии познания : в 2 т - Т. 2 / Борис М. Величковский. М. : Смысл : Издательский центр «Академияե, 2006. |

| **0303/B11** | **ՍՈՑԻՈԼՈԳԻԱ** | **2 կրեդիտ** |
|---|---|---|
| **2 ժամ** | **24/0/8/** | |
| **III կիսամյակ** | **առանց եզրափակիչ գնահատման** | |
| Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել սոցիոլոգիական հետազոտությունների անցկացման հմտություններին: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• սոցիոլոգիայի առարկայի, սոցիոլոգիական գիտելիքների զարգացման, դրանց առանձնահատկությունների, սոցիոլոգիայի մեթոդների, սոցիոլոգիայի միջառարկայական կապերի ու կառուցվածքի մասին,<br>• հասարակության սահմանման կառուցվածքի, հասարակության զարգացման տիպաբանության աստիճանների մասին, | | |

- անձնավորության, անձնավորության սոցիալականացման, սոցիալական կարգավիճակների և դերերի մասին,
- սոցիալական խմբերի կազմավորման դասակարգերի և դասերի մասին,
- սոցիալական կազմակերպությունների, սոցիալական տեղաշարժերի, հարկադրական արտահոսքերի, գաղթականների, փախստականների, մարգինալների, սոցիալական ինստիտուտների, նրանց ֆունկցիաների ու դինամիկայի, սոցիալական վերահսկողության մասին,
- շեղված վարքաձևերի, սոցիալական կոնֆլիկտների, ընտանիքի ինստիտուտի, մինչամուսնական վարքի, ամուսնության, ընտանիքի տիպերի, ամուսնալուծության վերաբերյալ,
- հասարակության քաղաքական ինստիտուտների, նրանց պատմական դրսևորումների, պետության, կառավարման ձևերի ու քաղաքական ռեժիմների, ընտրությունների՝ որպես քաղաքական ինստիտուտ, ժողովրդավարության, քաղաքացիական հասարակության, իրավական պետության վերաբերյալ,
- հասարակության սահմանման, կառուցվածքի, հասարակության զարգացման, նրա տիպաբանության ու աստիճանների մասին:

*Ունակ կլինի.*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*
- գիտակցելու սոցիալական և մշակութային զարգացման առանձնահատկությունները,
- տալու տնտեսության, քաղաքականության, իրավունքի, պետության, բարոյականության հիմնահարցերի վերլուծությունը,

✓ *(ընդհանրական կարողություններ)*
- կիրառելու սոցիալական, հումանիտար և տնտեսագիտական գիտությունների հիմունքները՝ մասնագիտական և սոցիալական խնդիրների լուծման համար:

***Համառոտ բովանդակությունը***

Սոցիոլոգիան որպես գիտություն: Անձ: Սոցիալական գործողություն և վարք: Սոցիալական փոխհարաբերություններ և սոցիալական կառուցվածք: Սոցիալիզացիա: Սոցիալական վերահսկողություն: Մշակույթ և լեզու: Սոցիալական խմբեր: Սոցիալական ստրատիֆիկացիա: Վերնախավ: Աղքատություն և անհավասարություն: Սոցիալական մոբիլություն: Սոցիալական կազմակերպություն և կառավա-

| |
|---|
| րում: Տնտեսական սոցիոլոգիա: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները.*** <br>Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: <br>*Ստուգման ձևերն են.* <br>*1-ին ստուգում.* Ստուգողական աշխատանք: <br>*2-րդ ստուգում.* Ստուգողական աշխատանք: |
| ***Հիմնական գրականության ցանկը*** <br>1. Կրավչենկո Ա., Սոցիոլոգիա, Եր., 2004: <br>2. Կյուրեղյան Է., Կիրառական սոցիոլոգիա, Եր., 2006: |

| | | |
|---|---|---|
| **0303/B12** | **ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ** | **2 կրեդիտ** |
| **2 ժամ** | **24/0/8** | |
| **III կիսամյակ** | **առանց եզրափակիչ գնահատման** | |
| Դասընթացի նպատակն է ուսանողներին զինել ինֆորմացիոն տեխնոլոգիաների համար անհրաժեշտ դիդակտիկ նյութերի պատրաստման և գործածման հմտություններով: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.*** <br>*Գիտելիք և իմացություն* <br>• ուսումնական տեխնոլոգիայի մասնագիտական առանձնահատկությունների, ժամանակակից ուսումնական տեխնիկական միջոցների և աշխատանքի սկզբունքների, հատուկ մասնագիտական քիմիական ծրագրերի կիրառության մասին, <br>• ինտերնետ ծառայությունները և նրանց գործածումը ուսուցման գործընթացում, <br>• ուսումնական տեխնիկական միջոցների հետ աշխատանքի անվտանգության կանոնների վերաբերյալ: <br>*Ունակ կլինի.* <br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)* <br>• ճիշտ շահագործելու ուսումնական տեխնիկական միջոցները և ժամանակակից ինֆորմացիոն տեխնոլոգիաները, կիրառելու բոլոր այն տեխնիկական միջոցները և նորագույն տեխնոլոգիաները, որոնք անհրաժեշտ են գիտելիքների ընկալման, կուտակ- | | |

| |
|---|
| ման և կուտակված ինֆորմացիաների մշակման կամ վերարտադրման համար:<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• ինֆորմացիոն տեխնոլոգիաների համար անհրաժեշտ դիդակտիկ նյութեր պատրաստելու և գործածելու,<br>• գնահատելու, ընկալելու և մշակելու ուսումնական տեղեկատվության հիմնական հատկությունները: |
| ***Համառոտ բովանդակությունը***<br>Առարկայի նպատակը, հիմնախնդիրները: Միջառարկայական կապեր: Ուսումնական ինֆորմացիայի հիմնական հասկացությունների գնահատումը, ընկալումը և մշակումը: Ժամանակակից ուսումնական տեխնիկական միջոցներ և աշխատանքի սկզբունքների իմացություն: Ինֆորմացիոն տեխնոլոգիաների համար անհրաժեշտ դիդակտիկ նյութերի կիրառումն ուսուցման գործընթացում: Ինտերնետ ծառայությունները և նրանց գործածումը ուսուցման գործընթացում: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները.***<br>Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:<br>*Ստուգման ձևերն են.*<br>*1-ին ստուգում.* Գրավոր /ստուգողական աշխատանք/:<br>*2-րդ ստուգում.* Անհատական առաջադրանք (ռեֆերատ): |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Պետրոսյան Հ.Հ., Մանկավարժական տեխնոլոգիայի գործառնային կառուցվածքը, Մխիթար Գոշ, 3, 2007:<br>2. Պետրոսյան Հ.Հ., Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ, <<Ան-Ջոն>>հրատ., Եր., 2008:<br>3. Прокольев И.И., Михалкович Н.В., Педагогика, Минск, 2002. |

| | | |
|---|---|---|
| **0303/B13** | **ՀՈՒՋԱԿԱՄԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ** | **6 կրեդիտ** |
| **6 ժամ** | **64/16/16/** | |
| **IV կիսամյակ** | **եզրափակիչ գնահատմամբ** | |
| Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ գիտելիքներ ձևավորել հույզերի ծագման, հույզերի մեկնաբանման տեսությունների, գործունեության և առօրյա փոխհարաբերություններում անձի կենսագոր- | | |

ծունեության վրա անդրադարձող առանձնահատուկ հոգեվիճակների վերաբերյալ:

***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա***

*Գիտելիք և իմացություն*

- հույզերի, հուզական վիճակների, զգացմունքների, կամքի առկա գիտական հայեցակարգերի մասին,
- հույզերի, հուզական վիճակների, կամքի հիմնական հոգեբանական, հոգեֆիզիոլոգիական, սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների և օրինաչափությունների մասին:

*Ունակ կլինի.*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- ախտորոշելու համապատասխան հուզական երևույթներն ու վիճակները,
- հոգեբանական շտկողական և խորհրդատվական աշխատանք կազմակերպելու նշված ոլորտում,
- համապատասխան մեթոդիկաների միջոցով հետազոտելու հուզակամային ոլորտի դրսևորման առանձնահատկությունները:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- տարբերակելու տարբեր հույզերը, հուզական վիճակները և հոգեբանական վերլուծության ենթարկելու դրանք,
- տարբերակելու կամային տարբեր հատկությունները և դրանց զարգացման միտումները:

***Համառոտ բովանդակությունը***

Հուզակամային հոգեբանության առարկան, նպատակը, խնդիրները, դրվածքը: Հուզական երևույթների գործառույթները: Հուզական ոլորտի հիմնական տարրերը և նրանց ուսումնասիրությունը: Հուզական երևույթների դրսևորումները և դրանց ուսումնասիրման մեթոդները: Հուզական ոլորտի զարգացումը: Սոցիալական հուզական երևույթները: Զգացմունքներ և երջանկություն: Հույզերի սեռային պայմանավորվածությունը: Հուզական ոլորտում մշակութային գործոնները: Կամքի տեսություններ: Վարքի և գործունեության կամածին ղեկավարման հոգեֆիզիոլոգիական մեխանիզմները: Կամային կարգավորում և կամային ճիգեր (ինքնամոբիլիզացում):

***Գնահատման մեթոդները և չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունա-

| |
|---|
| կում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:<br>*Եզրափակիչ քննություն*<br>Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Вилюнас В. Психология эмоций. СПб.: Питер, 2008.<br>2. Изард К.Э. Психология эмоций. СПб.: Питер, 2008.<br>3. Ильин Е.П. Психология воли. СПб.: Питер, 2002.<br>4. Психология состояний. Хрестоматия / Составители Т.Н. Васильева, Г.Ш. габдреева, А.О. Прохоров / Под ред. Проф. А.О. Прохорова. М.: ПЕР СЭ; СПб.: Речь, 2004.<br>5. Френкель Я. Психология страха. М.: Профит Стайл, 2010. |

| **0303/B14** | **ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ** | **4 կրեդիտ** |
|---|---|---|
| **4 ժամ** | **48/0/16/** | |
| **IV կիսամյակ** | **առանց եզրափակիչ գնահատման** | |
| Դասընթացի նպատակն է ուսանողներին մատուցել գիտելիքներ ներխմբային փոխհարաբերությունների, շփման ու հաղորդակցման առանձնահատկությունների, վարքի, անձի բարոյական զարգացման, մտավոր հասունացման հետ նրա ունեցած կապերի և մի շարք այլ երևույթների մասին: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• հասարակական հոգեբանության հիմնական դրույթների մասին,<br>• հասարակական կառույցների, գործընթացների, փոխազդեցությունների հոգեբանական մեխանիզմների մասին,<br>• հասարակական գործընթացներում ներգրավված անձի հոգեբանական դրսևորումների մասին:<br>*Ունակ կլինի.*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• տարբերակելու և մեկնաբանելու հասարակական երևույթները,<br>• հայտնաբերելու հասարակական երևույթների հիմքում ընկած հոգեբանական մեխանիզմները,<br>• մեկնաբանելու և կանխատեսելու հասարակական երևույթների | | |

| |
|---|
| հնարավոր զարգացումները,<br>• կանխատեսելու անձի խմբային վարքը:<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• կառուցելու հասարակական արդյունավետ փոխազդեցություն-ներ,<br>• կառավարելու և կարգավորելու սեփական, ինչպես նաև մերձավոր միջավայրի հասարակական դսևորումները: |
| ***Համառոտ բովանդակությունը***<br>Սոցիալ-հոգեբանական գաղափարների ձևավորման պատմությունը: Շփման սոցիալ-հոգեբանական բնութագիրը: Միջանձնային շփում, դրա տեսակները և գործառույթները: Մարդկային հաղորդակցման առանձնահատկությունները: Շփման գործընթացում մարդկանց կողմից միմյանց ճանաչումը և հասկացումը: Փոխներգործությունը շփման գործընթացում: Խմբի սոցիալական հոգեբանություն: Ընդհանուր գաղափար սոցիալական խմբի վերաբերյալ: Սոցիալական խմբերի դասակարգումը: Սոցիալական մեծ խմբերի հոգեբանության ուսումնասիրման սկզբունքները: Փոքր խմբի սոցիալական հոգեբանությունը, կառուցվածքային բնութագրերը: Փոքր խմբի սոցիալական հոգեբանությունը, դինամիկ բնութագրերը: Անձի սոցիալական հոգեբանություն: Անձի սոցիալ-հոգեբանական բնութագիրը: Մարդու վարքի սոցիալ-հոգեբանական կարգավորիչները: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները.***<br>Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:<br>*Ստուգման ձևերն են.*<br>*1-ին ստուգում.* Գրավոր /ստուգողական աշխատանք/:<br>*2-րդ ստուգում.* Բանավոր հարցում: |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Խաչատրյան Ն. Գ., Գենդերի սոցիալական հոգեբանություն: ՈՒսումնական ձեռնարկ: Եր., 2007:<br>2. Андреева Г.М., Социальная психология. М.,1988.<br>3. Битянова М.П., Социальная психология: наука, практика и образ мыслей. Учебное пособие / М.: Изд-во ЭКСМО-Пресс. 2001.<br>4. Гримак Л.П., Общение с собой: Начала психологии активности. – М.: Политиздат. 1991.<br>5. Майерс Дэвид, Социальная психология. СПб.: Питер, 1997. |

| |
|---|
| 6. Психология конфликта / Сост. и общ. ред. Н.В.Гришиной. СПб.: Питер. 2001. |

| | | |
|---|---|---|
| 0303/B15 | ՏԱՐԻՔԱՅԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒ-ԹՅՈՒՆ | 6 կրեդիտ |
| 6 ժամ | 64/16/16/ | |
| IV կիսամյակ | եզրափակիչ գնահատմամբ | |

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել մանկավարժության գիտության համակարգի տեղն ու դերը տարբեր տարիքային խմբերի երեխաների անձի ձևավորման գործընթացում: Տարիքային մանկավարժության պատմական զարգացումը, գիտական հարացույցները, տեղն ու դերը ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացման գործում:

***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***

*Գիտելիք և իմացություն*

- տարբեր տարիքի երեխաների առանձնահատկությունների մասին
- ուսանողների հետաքրքրության, հատկապես աշակերտների տարիքային, հոգեբանական և անհատական առանձնահատկությունների խոր ուսումնասիրության խթանման մասին,
- նպաստելու համար մանկավարժ – հոգեբանների մասնագիտական որակի բարձրացմանը:

*Ունակ կլինի.*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- կիրառելու տարբեր տարիքի երեխաների դաստիարակության մեթոդները,

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- ախտորոշելու և գնահատելու ,,դժվար,, դաստիարակվող երեխաներին և աշխատանքը նրանց հետ:

***Համառոտ բովանդակությունը***

Ներածական մաս: Պատմական ակնարկ տարիքային մանկավարժությունից: Տարիքային մանկավարժության առարկան, խնդիրները, մեթոդաբանական և հոգեբանական հիմունքերը, կապը այլ գիտությունների հետ: Անձը որպես դաստիարակության առարկա, նրա զարգացման հիմնական գործոնները: Երեխաների զարգացման ճգնաժա-

| |
|---|
| մային և սենզիտիվ փուլերի օրինաչափությունները, տարբեր տարիքային փուլերում զարգացման անհամաչափությունները, աքսելերացիայի մանկավարժական իմաստը: Մանկիկային տարիքի առանձնահատկությունները: Նախադպրոցական տարիքի առանձնահատկությունները: Կրտսեր դպրոցականի տարիքային բնութագիրը, առանձնահատկությունները: Միջին դպրոցական տարիքի առանձնահատկությունները: Ժամանակակից դեռահասի առանձնահատկությունները: Ավագ դպրոցական տարիքի ընդհանուր բնութագիրը: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները.***<br>Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:<br>*Եզրափակիչ քննություն*<br>Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Եր., 1980:<br>2. Կրուտեցկի Վ. Ա., Մանկավարժական հոգեբանության հիմունքները, Եր., 1976:<br>3. Ղուլումյան Գ.Ե., Մանկավարժություն, Գիրք I, Եր., 2005:<br>4. Ղուլումյան Գ.Ե., Մանկավարժություն, Գիրք II, Եր., 2005: |

| **0301/B16** | **ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ** | **2 կրեդիտ** |
|---|---|---|
| **2 ժամ** | **32 /0/0/** | |
| **IV կիսամյակ** | **առանց եզրափակիչ գնահատման** | |
| Դասընթացի հիմնական նպատակն է բարձրացնել ուսանողի մտածական որակները, զարգացնել վերլուծական մտածողություն: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• բարձրացնելու մտածողական որակները, զարգացնելու վերլուծական մտածողությունը, մտքի կառուցվածքը<br>• սահմանելու այն տրամաբանական կանոններն ու օրենքները, որոնք կշռադատության ընթացքում ապահովում են մտքի կանոնավորությունը և հետևողականությունը, ճշմարիտ եզրակացությունների ստացումը և գիտական գիտելիքների հիմնավոր- | | |

| |
|---|
| վածությունը:<br>*Ունակ կլինի.*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• գործնականում իրականացնելու տրամաբանության ճանաչողական և մեթոդաբանական գործառույթների անհրաժեշտությունը գիտատեսական և գործնական ուսումնասիրությունների ժամանակ<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• բարձրացնելու տրամաբանական գիտելիքների և հմտությունների միջոցով իմացական գործընթացների և հատկապես գիտական հետազոտությունների արդյունավետությունը: |
| ***Համառոտ բովանդակությունը***<br>Տրամաբանության առարկան և նշանակությունը: Լեզվի տրամաբանական վերլուծությունը: Հասկացողությունը որպես տրամաբանական ձև և հասկացության ընդհանուր բնութագրությունը: Դատողություն: Մտածողության ձևական տրամաբանական հիմնական օրենքները: Դեդուկտիվ մտահանգում: Մտահանգման ընդհանուր բնութագիրը: Ինդուկտիվ մտահանգումներ: Փաստարկման տրամաբանական հիմունքներ: Տրամաբանական սխալներ: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները***<br>Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:<br>*Ստուգման ձևերն են.*<br>*1-ին ստուգում.* Բանավոր հարցում:<br>*2-րդ ստուգում.* Բանավոր կարճ հարցում: |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Բրուտյան Գ. Ա., Տրամաբանության դասընթաց, Եր., 1987:<br>2. Бакрадзе Г. С.,Логика, М., 1951.<br>3. Гетманов А. Д. Логика, М., Высшая школа, 1993. |

| **0303/B17** | **ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ** | **2 կրեդիտ** |
|---|---|---|
| **2 ժամ** | **32/0/0/** | |
| **IV կիսամյակ** | **առանց եզրափակիչ գնահատման** | |
| Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել գիտական | | |

| |
|---|
| մանկավարժության կրթական համակարգի ոլորտում տեղի ունեցող բարեփոխումները և դրանց կառավարման առանձնահատկությունները, ցույց տալ նրա գիտական հարացույցները, տեղն ու դերը ժամանակակից մանկավարժության գիտության համակարգում: |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.*** <br> *Գիտելիք և իմացություն* <br> • կրթական համակարգի կառուցվածքի, զարգացման փուլերի, հիմնական հասկացությունների մասին, <br> • նոր հասարակական գիտությունների համակարգում կառավարման դերի մասին: <br> *Ունակ կլինի.* <br> ✓ *(բուն մասնագիտական կարողություններ)* <br> • կիրառելու կրթության համակարգի զարգացման հիմնական ուղղությունները, դպրոցավարման ժամանակակից եղանակները, ձևերը, մեթոդները <br> ✓ *(ընդհանրական կարողություններ)* <br> • կիրառելու մանկավարժական կոլեկտիվի արդյունավետ կառավարման մեխանիզմները: |
| ***Համառոտ բովանդակությունը*** <br> Կրթական համակարգի կառուցվածքը, զարգացման փուլերը, էությունը, կառավարման սկզբունքները, գործառույթները, մեթոդները: Կառավարման գործընթացի սոցիալ-հոգեբանական տեսանկյունները, գիտական դրույթները: Նախադպրոցական կառույցի և ներդպրոցական կառավարման առանձնահատկությունները, գործառույթները, սկզբունքները և մեթոդները: Դպրոցի կառավարման իրավական և տնտեսական հիմքերը:Դպրոցի զարգացման կառավարում, նորամուծություններ, ինովացիաներ: Բարեփոխումները բարձրագույն դպրոցում, նրա կառավարման առանձնահատկությունները: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները*** <br> Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: <br> *Ստուգման ձևերն են.* <br> *1-ին ստուգում.* Փոքրածավալ գրավոր /թեստ/: <br> *2-րդ ստուգում.* Բանավոր կարճ հարցում: |
| ***Հիմնական գրականության ցանկը*** <br> 1. Լ.Թ. Ասատրյան, Կրթության համակարգի կառավարման հի- |

| |
|---|
| մունքներ, Եր.,2003:<br>2. Т.И.Шамова, Управление образовательными системами, М.,2002.<br>3. Сластенин В.А., Исаев И.Ф.,Шиянов Е.Н., Педагогика, М., 2003.<br>4. Настольная книга директора школы, М., 2002.<br>5. Настольная книга руководителя дошколного образования, М., 2002.<br>6. С.А.Езопова, Менеджмент в дошкольном образовании, М., 2002. |

| 0303/B18 | ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ | 4 կրեդիտ |
|---|---|---|
| 4 ժամ | 48/0/16/ | |
| IV կիսամյակ | եզրափակիչ գնահատմամբ | |

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել համաշխարհային մանկավարժական մտքի զարգացման պատմությանը, հայ մանկավարժական մտքի զարգացման պատմությանը, կրթության բովանդակությանը, ուսուցման հիմնական օրենքների, օրինաչափությունների, մեթոդների, սկզբունքների զարգացման պատմությանը:

***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***

*Գիտելիք և իմացություն*

- «Մանկավարժական մտքի պատմություն» դասընթացի խնդիրների ուսումնասիրության աղբյուրների, ծագման ու զարգացման վերաբերյալ,
- հնագույն շրջանի արևմտաեվրոպական ու հայկական դպրության ու մանկավարժական մտքի, վաղ քրիստոնեության շրջանի արևմտաեվրոպական ու հայկական դպրության ու մանկավարժական մտքի, Վերածննդի շրջանի դպրոցի ու մանկավարժական մտքի մասին,
- նոր շրջանի արևմտաեվրոպական, ռուսական ու հայկական դպրության ու մանկավարժական մտքի, նորագույն շրջանի արևմտաեվրոպական, ամերիկյան և հայկական դպրության ու մանկավարժական մտքի, կրթության համակարգերի ձևավորման և զարգացման պատմության մասին:

*Ունակ կլինի.*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- ուսումնասիրելու պատմամանկավարժական աղբյուրները,

- կատարելու պատմամանկավարժական ուսումնասիրություն, պատմական երևույթների և փաստերի վերլուծություն, գիտական համադրումներ և եզրահանգումներ, հետազոտական, ստեղծագործական, պատմամանկավարժական աշխատանք:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- կիրառելու կրթության և մանկավարժական մտքի պատմության վերաբերյալ գիտելիքների որոշակի ծավալը, պատմական երևույթների և փաստերի վերլուծության կարողությունները, հետազոտական, ստեղծագործական կարողությունները:

***Համառոտ բովանդակությունը***

Դաստիարակության ծագումը: Դաստիարակությունը Հին Հռոմում: Դպրոցը և մանկավարժական միտքը միջնադարում: Վերածննդի դպրոցն ու մանկավարժական միտքը: Նոր շրջանի դպրոցն ու մանկավարժական միտքը: Նոր շրջանի ռուսական դպրոցն ու մանկավարժական միտքը: Մանկավարժական միտքն ու դաստիարակությունը մինչմեսրոպյան հայազիր դպրոցը: Դպրոցն ու դաստիարակությունը 5–11-րդ դարերում: Հայկական Վերածննդի դպրոցն ու մանկավարժական միտքը (10-րդ դարավերջից մինչև 12-րդ դարասկիզբ): Դպրոցն ու մանկավարժական միտքը 12-րդ դարից 18-րդ դարերում: Նոր շրջանի հայ դպրոցն ու մանկավարժական միտքը (19-րդ դար): Մանկավարժական միտքն ու դպրոցը հայ գաղթօջախներում և սփյուռքում: Խորհրդային դպրոցի ձևավորումը և ժամանակակից հայ մանկավարժները:

***Գնահատման մեթոդները և չափանիշները***

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

***Հիմնական գրականության ցանկը***

1. Ղույումչյան Գ.Ե., Մանկավարժություն, Գիրք I, Եր., 2005:
2. Ղույումչյան Գ.Ե., Մանկավարժություն, Գիրք II, Եր., 2005
3. Ամիրջանյան Յու. Ա.,Սահակյան Ա.Ս., Մանկավարժություն, Եր., 2005:
4. Կոնստանտինով Ն. Ա., Մանկավարժության պատմություն, Եր.,

|  |
|---|
| 2007:<br>5. Սիմոնյան Ց. Ռ., Հայ մանկավարժության պատմություն /19-20 դարեր/, Եր., 2000: |

| **0303/B19** | **ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏԻՊՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | **6 կրեդիտ** |
|---|---|---|
| **5 ժամ** | **48/16/16/** | |
| **V կիսամյակ** | **եզրափակիչ գնահատմամբ** | |

|  |
|---|
| Դասընթացի նպատակն է ձևավորել գիտելիքներ անհատական տարբերությունների /խառնվածք, բնավորություն, ընդունակություններ/ հոգեբանության արդի հիմնախնդիրների վերաբերյալ: |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• անհատական տարբերությունների ձևավորման հիմնական օրինաչափությունների և դրանց հոգեբանական առանձնահատկությունների, անհատական առանձնահատկությունների չափանիշների վերաբերյալ,<br>*Ունակ կլինի.*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• նկարագրելու խառնվածքի, բնավորության և ընդունակությունների զարգացման մեխանիզմները և օրինաչափությունները<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• վերլուծելու անհատական տիպոլոգիական առանձնահատկությունները, ինչպես նաև դրանց ձևավորման նախադրյալները և պայմանները |
| ***Համառոտ բովանդակությունը***<br>Մարդու անհատականությունը գիտական ուսումնասիրության օբյեկտ հոգեբանության մեջ: Անհատական տարբերությունների զարգացման աղբյուրները: Անհատական առանձնահատկությունները, կիսագնդերի ասիմետրիան և խառնվածքը: Բնավորության հոգեբանություն: Ընդունակությունների հոգեբանություն: Տիպաբանական մոտեցումները անձի և բնավորության ուսումնասիրության նկատմամբ: Անձի հատկանիշների հոգեբանություն: Սեռի հոգեբանություն: Մասնագիտական անհատական առանձնահատկությունները: Հաղորդակցման անհատական տիպաբանական առանձնահատկութ- |

| |
|---|
| յունները: Գործունեության և վարքի անհատական տիպաբանական առանձնահատկությունները: Բարոյական գիտակցության անհատական տիպաբանության առանձնահատկությունները: Անհատականության ոճային առանձնահատկությունները: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները***<br>Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:<br>*Եզրափակիչ քննություն*<br>Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Аллахвердов В.М. Сознание как парадокс. СПб, 2000.<br>2. Брушлинский А. В., Психология субъекта. М.: ИП РАН, СПб: А-летейя, 2003.<br>3. Величковский Б. М., Когнитивная наука : Основы психологии познания : в 2 т. Т. 1 / М. : Смысл : Издательский центр «Академия», 2006.<br>4. Величковский Б. М., Когнитивная наука : Основы психологии познания : в 2 т. Т. 2 /М. : Смысл : Издательский центр «Академия», 2006.<br>5. Гараи Л., Кечке М. Еще один кризис в психологии! // Вопросы философии. N 4. 1997.<br>6. Мазилов В.А. Психология на пороге XXI века: методологические проблемы. Ярославль: МАПН, 2001.<br>7. Мазилов В.А., Актуальные методологические проблемы современной психологии. Ярославль: МАПН, 2002.<br>8. Майерс Д., Социальная психология. Издательство: Питер, 2007. |

| | | |
|---|---|---|
| **0303/B20** | **ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ** | **6 կրեդիտ** |
| **5 ժամ** | **64/8/8/** | |
| **V կիսամյակ** | **եզրափակիչ գնահատմամբ** | |
| Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ուսումնական գործընթացի վերլուծության ժամանակակից մոտեցումներին: | | |

| |
|---|
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• մանկավարժական հոգեբանության առարկայի, սկզբունքների, խնդիրների ու մեթոդների, տեսամեթոդաբանական հիմունքների, համակարգի, զարգացման հիմնական օրինաչափությունների և ուղղությունների, գիտությունների համակարգում նրա տեղի մասին:<br>*Ունակ կլինի.*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• հստակ ձևակերպելու մանկավարժության առարկան, դաստիարակության և զարգացման արդի խնդիրները, կողմնորոշվելու մանկավարժական իրադրություններում և ընտրելու դրանց արդյունավետ լուծման մեթոդներն ու եղանակները:<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• կիրառելու կրթության, դաստիարակության, ուսուցման և զարգացման ժամանակակից հոգեբանական տեխնոլոգիաները, մանկավարժական խնդիրներ լուծելու հոգեբանական մեթոդիկան, մեխանիզմներն և հնարները: |
| ***Համառոտ բովանդակությունը***<br>Մանկավարժական հոգեբանության առարկան և խնդիրները: Ուսումնական գործունեության կառուցվածքը: Մանկավարժական հոգեբանության մեթոդները: Մանկավարժի անձնային որակների և մասնագիտական պատրաստվածության հիմնախնդիրները: Մանկավարժական գործունեության շարժառիթները, մանկավարժական կոլեկտիվի հոգեբանություն: Մանկավարժական կարողություններ և հմտություններ: Մանկավարժական գործունեության կառուցվածքը: Դաստիարակության հոգեբանություն: Կրթության հոգեբանություն: Ուսուցման հոգեբանություն: Ուսուցչի անձի հոգեբանություն: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները***<br>Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:<br>*Եզրափակիչ քննություն*<br>Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: |
| ***Հիմնական գրականության ցանկը*** |

1. Мананикова Е.Н., Педагогическая психология, М., 2007.
2. Столяренко Л.Д., Педагогическая психология, М., 2004.
3. Габай Т.В., Педагогическая психология, М., 2003.
4. Зумняя И.А., Педагогическая психология, М., 2008.
5. Мудрик А.В., Психология и воспитание, М., 2006.
6. Мудрик А.В., Социалная педагогика, М., 2005.


| 0303/B21 | ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱ-ՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ | 4 կրեդիտ |
|---|---|---|
| 4 ժամ | 48/0/16/ | |
| V կիսամյակ | առանց եզրափակիչ գնահատման | |

Դասընթացը նպատակ ունի ուսանողներին ծանոթացնելու արդի ուսուցման հոգեբանության հիմունքներին, հիմնական տեսություններին, որոնք ընկած են դպրոցում և բուհում դասավանդման կազմակերպման հիմքում:

***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***

*Գիտելիք և իմացություն*

- ուսուցման հոգեբանության հիմնական տեսությունների մասին,
- ուսուցման կազմակերպման հոգեբանական յուրահատկությունների մասին:

*Ունակ կլինի*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- կիրառելու դպրոցում և բուհում ուսուցման կազմակերպման հիմնական եղանակները,

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- տիրապետելու հոգեբանության տարբեր բնագավառների դասավանդման պահանջներին և հմտություններին:

***Համառոտ բովանդակությունը***

Հոգեբանության դասավանդման մեթոդիկա առարկան, նպատակը, խնդիրները, մեթոդները: Ժամանակակից հոգեբանական կրթությունը: Հանրակրթական ծրագրեր և հոգեբանության դասավանդումը: ՈՒսուցման հոգեբանության հիմնական տեսությունները: Ակտիվ դասավանդման մեթոդները: ՈՒսուցման կազմակերպումը և հոգեբանության ուսուցման տեսակները: Հոգեբանության առարկաների դասավանդման իմացության ստուգումն ու գնահատումը: ՈՒսուցիչը

| |
|---|
| որպես ուղղորդող: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները***<br>Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:<br>*Ստուգման ձևերն են.*<br>*1-ին ստուգում.* Գրավոր /ստուգողական աշխատանք/:<br>*2-րդ ստուգում.* Բանավոր հարցում: |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Карандашев В. Н., Основы психологии общения. Челябинск, 1990.<br>2. Санкт-Петербург, 18-20 мая 1999 г.СПб.: Изд-во РГПУ им. А. И. Герцена, 1999.<br>3. Карандашев В. Н., Психология: Введение в профессию. М.: Смысл, 2000.<br>4. Карандашев В. Н., Психология: Введение в профессию. 2-е изд. М.: Смысл, 2003.<br>5. Карандашев В. Н., Преподавание психологии: Опыт международного исследования и перспективные проекты сотрудничества // Психологический журнал. 2001. Т. 22. № 2.<br>6. Карандашев В. Н., Подготовка профессиональных психологов в европейских странах и США // Психология как профессия (исследователь, практик): Ежегодник Российского психологического общества. Т. 9, вып. 3. М., 2002. |

| | | |
|---|---|---|
| **0303/B22** | **ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ** | **4 կրեդիտ** |
| **3 ժամ** | **32/0/16** | |
| **V կիսամյակ** | **առանց եզրափակիչ գնահատման** | |
| Դասընթացի նպատակն է ուսանողներին զինել մասնագիտական գիտելիքներով և հմտություններով, որոնք անհրաժեշտ են ժամանակակից մանկավարժական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• դիդակտիկայի գիտության, մասնավոր և ընդհանուր խնդիրների, կրթության բովանդակության, ուսուցման օրենքների, օրնաչափությունների և սկզբունքների, մեթոդների, ձևերի և եղանակ- | | |

ների մասին
*Ունակ կլինի.*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- կազմակերպելու ուսուցման գործընթաը՝ հաշվի առնելով նրա օրինաչափություններն ու սկզբունքները , կիրառելով ժամանակակից դիդակտիկայի մեթոդներն ու տեխնոլոգիաները,

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- կիրառելու դիդակտիկայի մեթոդաբանական հիմքերը՝ կրթության գործընթացի կազմակերպման ընթացքում:

***Համառոտ բովանդակությունը***

Ուսուցման գործընթացի էությունը, շարժիչ ուժերը, հակասություններն ու տրամաբանությունը: Ուսուցման օրինաչափություններն ու սկզբունքները: Ժամանակակից դիդակտիկական համակարգերի վերլուծությունը: Ուսուցման կրթական, դաստիարակչական և զարգացնող ֆունկցիաների միասնությունը: Ուսումնադաստիարակչական գործընթացի ամբողջականության խնդիրները:
Ուսուցման երկկողմանի և անհատական բնույթը: Դասավանդելու և սովորելու միասնությունը: Ուսուցումը որպես ուսուցչի և աշակերտի համատեղ գործունեություն: Կրթության բովանդակությունը որպես անձնավորության բազային մշակույթի հիմք: Պետական կրթական չափորոշիչ: Կրթության բովանդակության բազային և լրացնող բաղադրիչները: Ուսուցման մեթոդները: Ուսուցման կազմակերպման ժամանակակից մոդելները: Կրթական հաստատությունների բազմազանությունն ու տիպաբանությունը: Հեղինակային դպրոցներ: Նորարարական կրթական գործընթացները: Ուսուցման միջոցների դասակարգումը:

***Գնահատման մեթոդները և չափանիշները***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:
*Ստուգման ձևերն են.*
*1-ին ստուգում.* Փոքրածավալ գրավոր /ստուգողական աշխատանք/:
*2-րդ ստուգում.* Բանավոր կարճ հարցում:

***Հիմնական գրականության ցանկը***


1. Осмоловская И. М.,Дидактика, М., 2008.
2. Прокольев И.И., Михалкович Н.В., Педагогика, Минск,2002.

<table>
<tr><td>0303/B23</td><td>ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՀՈԳԵԲԱ-ՆՈՒԹՅՈՒՆ</td><td>6 կրեդիտ</td></tr>
<tr><td>5 ժամ</td><td colspan="2">64/16/0/</td></tr>
<tr><td>V կիսամյակ</td><td colspan="2">եզրափակիչ գնահատմամբ</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին ստեղծագոր-ծական գործընթացի օրինաչափություններին, ստեղծագործական մտածողությանը, ստեղծագործության հոգեբանական տերմինոլո-գիային, ստեղծագործ անձի որակներին, ստեղծագործականությանը /կրեատիվություն/:</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.<br>Գիտելիք և իմացություն<br>• Ստեղծագործության հոգեբանության տեսություններից:<br>Ունակ կլինի.<br>✓ (բուն մասնագիտական կարողություններ)<br>• Օգտագործելու ստեղծագործության հոգեբանության գիտելիք-ները հոգեթերապևտիկ և զարգացնող աշխատանքներում,<br>✓ (ընդհանրական կարողություններ)<br>• մշակելու և ներկայացնելու հանձնարարված մենագրություննե-րը:</td></tr>
<tr><td colspan="3">Համառոտ բովանդակությունը<br>Ստեղծագործական հոգեբանության առարկան, խնդիրները, ուսում-նասիրության մեթոդները: Հոգեկան երևույթների ստեղծագործական բնույթը: Ստեղծագործությունը որպես անձի գործունեություն: Ստեղ-ծագործողի անձի հոգեբանական առանձնահատկությունները: Ար-վեստը որպես կատարսիս: Անձի ստեղծագործական ընդունակութ-յունների ձևավորման մեթոդաբանություն:</td></tr>
<tr><td colspan="3">Գնահատման մեթոդները և չափանիշները<br>Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրա-քանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունա-կում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:<br>Եզրափակիչ քննություն<br>Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն ար-ժեքով</td></tr>
<tr><td colspan="3">Հիմնական գրականության ցանկը<br>1. Ильин Е. П., Мотивация и мотивы. СПб., 2000.<br>2. Ильин Е. П., Дифференциальная психофизиология. СПб., 2001.<br>3. Ильин Е. П., Психология индивидуальных различий. СПб., 2004.</td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| 0303/B24 | ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐ-ՄԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ | 5 կրեդիտ |
| 6 ժամ | 48 /0/24/ | |
| VI կիսամյակ | առանց եզրափակիչ գնահատման | |

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել աշխատանքի և կառավարման հոգեբանության հիմնական խնդիրներին, քննարկել աշխատանքային և կառավարման գործունեության հոգեբանական առանձնահատկությունները և դրանց կապը տարբեր գործոնների հետ, վերլուծել կառավարիչի անձի հոգեբանական կերպարը:

***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***

*Գիտելիք և իմացություն*

- անձի սոցիալիզացիայի (կամ սոցիալականացման), բարոյական և իրավական սոցիալականացման տեսամեթոդաբանական հիմքերի և հիմնական հոգեբանական օրինաչափություններ մասին,
- այլ անձանց հետ մարդու շփման, հաղորդակցման հոգեբանական առանձնահատկությունների, շփման հիմնական գործառույթների և նորմերի, աշխատանքային գործունեության մեջ անձի ձևավորման պայմանները,
- աշխատանքային հիմնական գործառույթների և դիտավորության բաղադրիչների կազմավորման վերաբերյալ,
- կառավարման, մարկեթինգի մասին, կառավարման հոգեբանության ուսումնասիրության առարկայի, կառավարման ոճերի հոգեբանական բնութագրի մասին:

*Ունակ կլինի.*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- սոցիալականացման, սոցիալական շփումների և գիտակցության ձևավորման գործում աշխատանքի հոգեբանության շուրջ ուսումնասիրություններ կատարելու,
- յուրացված գիտելիքները, ունակություններն ու հմտությունները օգտագործելու սոցիալականության և շփման գործընթացները և անձի աշխատանքային գործունեությունը արդյունավետ կազմակերպելիս,

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- տիրապետելու այն հոգեբանական տեխնոլոգիաներին և ուսուցման նորագույն մեթոդներին, որոնք ուղղված են անձի սոցիալական կայացման,

| |
|---|
| • սոցիալական և հաղորդակցական հմտությունների ձևավորմանը, ինչպես նաև աշխատանքի նկատմամբ զիտակցված վերաբերմունքի ստեղծմանը: |
| *Համառոտ բովանդակությունը*<br>Աշխատանքի հոգեբանության առարկան, խնդիրները, տեսությունները, հետազոտության մեթոդները: Մասնագիտական գործունեություն: Անձի իմացական, անհատական հոգեբանական առանձնահատկությունների հաշվառումը աշխատանքային գործունեության մեջ: Բացասական հոգեվիճակները և անձի ադապտացիայի ոճերը աշխատանքային գործունեության մեջ: Մասնագիտության ընտրություն, մասնագիտական կողմնորոշում: Սոցիալ-աշխատանքային վերականգնման հոգեբանական խնդիրները: Կառավարման հոգեբանության առարկան, խընդիրները, տեսությունները, ուսումնասիրության մեթոդները: Կառավարման սոցիալ-հոգեբանական մեխանիզմները: Կառավարման ոճերը, իշխանության տեսակները: Մարդկային փոխհարաբերությունները կառավարման համակարգում: Խոսքային և ոչ խոսքային հաղորդակցություն: Կոնֆլիկտները կառավարման համակարգում, հաղթահարման ուղիները: Որոշումների ընդունումը ղեկավարի կողմից և նրա հոգեբանական առանձնահատկությունները: Կառավարում և ինքնակառավարում, կառավարման դժվարությունները և դրանց հաղթահարման հոգեբանական ուղիները: Կառավարման պրոֆեսիոգրամա և պսիխոգրամա: |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները*<br>Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:<br>*Ստուգման ձևերն են.*<br>*1-ին ստուգում.* Գրավոր /ստուգողական աշխատանք/:<br>*2-րդ ստուգում.* Բանավոր հարցում: |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. Եղիզարյան Վ. Մ., Կառավարման հոգեբանություն, Եր., 2008:<br>2. Карпова А.В., Психология труда, М., 2004.<br>3. Урбанович А.А., Психология управления, М.,1997.<br>4. Кишкель Е.Н.,Управленческая психология, М.,2002. |

| | | |
|---|---|---|
| **0303/B25** | **ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵՏԵԽՆԻԿԱՆԵՐ** | **5 կրեդիտ** |

| 6 ժամ | 36/36/0/ |
|---|---|
| VI կիսամյակ | եզրափակիչ գնահատմամբ |

Դասընթացի նպատակն է ուսանողներին տեղեկություններ հաղորդել հոգեբանի աշխատանքի հիմնական ուղղությունների մասին:

***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***

*Գիտելիք և իմացություն*

- հոգեբանական խորհրդատվության նպատակների, խնդիրների և ձևերի վերաբերյալ,
- հոգեբանական խորհրդատվության կազմակերպման սկզբունքների վերաբերյալ,
- հոգեբանական խորհրդատվության ընթացքում հոգեբանի կողմից կիրառվող մեթոդների և տեխնիկաների վերաբերյալ,

*Ունակ կլինի.*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- վերլուծելու հոգեբանական խորհրդատվության ծառայության կազմակերպման հիմնահարցերը:
- վերլուծելու հոգեբան-խորհրդատուի անձին ներկայացվող պահանջները, աշխատանքի էթիկական չափանիշները, հնարավորությունները և սահմանափակումները:
- տարբերակելու հոգեբանական խորհրդատվության գործընթացի փուլերը և յուրաքանչյուրի նշանակությունը:
- տարբերակելու հոգեբանական խորհրդատվության ընթացում կիրառվող տեխնիկաները և հնարները:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- կիրառելու խորհրդատվական զրույցի հնարները այլ տիպի միջանձնային հարաբերություններում /գործնական, մասնագիտական/
- ճանաչելու մարդկանց հաղորդակցման մեջ առաջացող դժվարությունները՝ պայմանավորված անձնային գործոններով և ներհոգեբանական խնդիրներով:
- զարգացնելու մասնագիտական դերը և հոգեբանին անհրաժեշտ անձնային առանձնահատկությունները:

***Համառոտ բովանդակությունը***

Հոգեբանական ծառայության նպատակը, խնդիրները, տեսակը, կառուցվածքը: Հոգեճանաչումը հոգեբանական ծառայության կառուցվածքում: Հոգեբանական ծառայության տեսակները: Ընդհանուր գաղափար հոգեբանական խորհրդատվության վերաբերյալ: Հոգեբանա-

կան խորհրդատվության տեխնիկան: Հոգեբանական շտկում և կանխարգելում: Հոգեկարգավորում և հոգեբանական վերականգնում: Հոգեբան-խորհրդատուին ներկայացվող պահանջները: Հոգեբանական օգնության կազմակերպման փուլերը: Հոգեբանական ծառայության կազմակերպում: Անհատական աշխատանքի ուղղվածությունը: Խմբային աշխատանքների առավելությունները: Հոգեբանական ծառայության կազմակերպման դժվարությունները: Հոգեբանական ծառայության խնդիրները, կառուցվածքը և գործառույթները կրթության համակարգում: Կրթության համակարգում հոգեբանական ծառայության ստեղծման անհրաժեշտությունը, նրա հիմնական նպատակները: Հոգեբանական ծառայության կառուցվածքը: Հոգեբանական ծառայության վիճակը և զարգացման միտումները կրթության համակարգում: Երեխաների տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառումը հոգեբանական ծառայության կազմակերպման ընթացքում: Մանկավարժների հետ իրականացվող հոգեբանական ծառայության պահանջները: Հոգեբանական ծառայության կազմակերպումը հատուկ ուսումնական հաստատություններում (մանկական գաղութի, մանկատան և հատուկ կարիքներով երեխաներ):

***Գնահատման մեթոդները և չափանիշները***

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

***Հիմնական գրականության ցանկը***


1. Практическая психология образования. Под ред. И.В.Дубровиной, Питер, 2004.
2. Овчарова Р.В.,Технологии практического психолога образования, М, 2000.
3. А. Г. Шмелев., Основы психодиагностики. Москва, Ростов- на-Дону, 1996.


| | | |
|---|---|---|
| **0303/B26** | **ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ** | **3 կրեդիտ** |

<table>
<tr><td>3 ժամ</td><td>24/0/12/</td></tr>
<tr><td>VI կիսամյակ</td><td>եզրափակիչ գնահատմամբ</td></tr>
<tr><td colspan="2">Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ազգային և ընտանեկան հոգեբանության խնդիրների պարզաբանմանն ուղղված հիմնական մոտեցումներին, ներկայացնել ընտանիքի ֆունկցիաները, պարզաբանել ընտանիքում փոխհարաբերությունների հոգեբանական հիմքերն ու օրինաչափությունները, կոնֆլիկտները, դրանց ախտորոշման ձևերը:</td></tr>
<tr><td colspan="2">Դասընթացի ավարտին ուսանողը կունենա<br>Գիտելիք և իմացություն<br>• ընտանիքի կառուցվածքի և ֆունկցիաների մասին,<br>• ամուսինների համատեղելիության ոլորտների, հարաբերությունների համակարգի վերաբերյալ,<br>Ունակ կլինի.<br>✓ (բուն մասնագիտական կարողություններ)<br>• վերլուծելու ընտանիքում առաջացած կոնֆլիկտների պատճառները,<br>• գտնելու կոնֆլիկտների լուծման ուղիներ,<br>• բացահայտելու այն խոչընդոտները, որոնք ամուսնական կյանքում ազդում են բավարարվածության վրա<br>• պարզաբանելու հոգևոր և ինտիմ կյանքի փոխկապակցվածության խնդիրը,<br>✓ (ընդհանրական կարողություններ)<br>• ապահովելու ընտանիքի առողջ և բարեկեցիկ մթնոլորտ:</td></tr>
<tr><td colspan="2">Համառոտ բովանդակությունը<br>Ազգային հոգեբանության առարկան, խնդիրները: էթնիկական խմբերի ձևավորման նախադրյալները և հիմնական հատկանիշները: Էթնոսի մշակույթը և ինքնապաշտպանության խնդիրները: Էթնոպաշտպան հոգեբանական մեխանիզմները և բարդույթները: Միջէթնիկ փոխհարաբերություններ և պաշտպանական բարդույթներ: Էթնիկական /ազգային/ սիմվոլներ: Էթնիկական հոգեկերտվածք և մտածելակերպ: Ազգային /էթնիկական/ բնավորություն: Հոգևոր ճգնաժամ և էթնովարքագիծ: Էթնոհոգեբանական հարմարվողականություն և ձուլում:</td></tr>
<tr><td colspan="2">Գնահատման մեթոդները և չափանիշները<br>Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրա-</td></tr>
</table>

| |
|---|
| քանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:<br>*Եզրափակիչ քննություն*<br>Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Целуйко В.М., Психология современной семьи, М.,2004.<br>2. Шнейдер Л.Б., Семейная психология. Учебная пособия. М. 2006. |

| **0303/B27** | **ՀՈԳԵԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ** | **3 կրեդիտ** |
|---|---|---|
| **3 ժամ** | **24/12/0/** | |
| **VI կիսամյակ** | **առանց եզրափակիչ գնահատման** | |
| Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին գիտելիքներ հաղորդել ժամանակակից հոգեբանական կարգավորման խնդիրների, հիմնական սկզբունքների, առաջատար ուղղությունների և հայեցակարգերի վերաբերյալ, ներկայացնել դրանց կիրառական դաշտը, ծանոթացնել պրակտիկ հոգեկարգավորման մեթոդներին և տեխնիկաներին: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• ինքնակարգավորման ընդհանուր տեսական, պատմական, էթիկական, մեթոդական տեսանկյունների մասին,<br>• դասընթացի գիտական հասկացությունների վերաբերյալ,<br>*Ունակ կլինի.*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• վերլուծելու և համեմատելու ինքնակարգավորման մեթոդներն ու մեթոդիկաները,<br>• իմաստավորելու և արժևորելու ինքնադիտարկման հմտությունները,<br>• գիտակցելու ինքնահետազոտման և ինքնակարգավորման կարևորությունը<br>• մանկավարժի և հոգեբանի աշխատանքում, մասնագիտական ինքնորոշման մեջ, ձեռք բերելու ինքնադիտարկման կարողություններ,<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• ձեռք բերելու ինքնակարգավորման հիմնահարցերին վերաբե- | | |

| |
|---|
| րող գիտական գրականության մշակման հմտություններ: |
| ***Համառոտ բովանդակությունը***<br>Հոգեկարգավորումը և դրա տեսակները. Հոգեկարգավորման նպատակներն ու խնդիրները, հիմնական սկզբունքները: Հիմնական ուղղությունները ժամանակակից հոգեբանական կարգավորման պրակտիկայում: Պրակտիկ հոգեկարգավորման մեթոդները: Անհատական և խմբակային հոգեկարգավորում: Հոգեկարգավորման խմբերի տեսակները: Երեխա-ծնող կամ ընտանեկան փոխհարաբերությունների հոգեկարգավորում:<br>***Գնահատման մեթոդները և չափանիշները***<br>Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:<br>*Ստուգման ձևերն են.*<br>*1-ին ստուգում.* Գրավոր /ստուգողական աշխատանք/:<br>*2-րդ ստուգում.* Բանավոր հարցում: |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Некрасов В., Методы психорегуляции, М., 2010.<br>2. Никифоров Ю.Б., Применение психорегуляции в занятиях физическими упражнениями, М., 1989.<br>3. Александрова В.В., Оптимальное управление движением, М., 2005. |

| **0303/B28** | **ԷԹՆՈՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ** | **3 կրեդիտ** |
|---|---|---|
| **3 ժամ** | **24/0/12/** | |
| **VI կիսամյակ** | **առանց եզրափակիչ գնահատման** | |
| Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ծանոթացնել էթնոհոգեբանական հետազոտությունների հիմնական տեսական ուղղություններին, ներկայացնել անձի ուսումնասիրության էթնոհոգեբանական հիմնախնդիրները և սոցիալական վարքի կարգավորման մշակութային տարբերությունները, ինչպես նաև գիտելիքներ հաղորդել միջէթնիկական հարաբերություններում միջխմբային ընկալման մեխանիզմների և էթնիկական կոնֆլիկտների առաջացման պատճառների վերաբերյալ: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• էթնոսի կառուցվածքի, էթնոսի տեսակների և զարգացման փու- | | |

| |
|---|
| լերի մասին,<br>• էթնիկական նույնականացման մասին,<br>• էթնիկական կարծրատիպերի վերաբերյալ,<br>• էթնիկական գիտակցության, անգիտակցականի ու նրանց կառուցվածքի մասին,<br>• էթնիկական հանդուրժողականության մասին,<br>• տարբեր էթնոսների հոգեբանական նկարագրերի վերաբերյալ,<br>*Ունակ կլինի.*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• ուսումնասիրելու և վերլուծելու էթնիկական բնույթի խնդիրները,<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• վերլուծելու առկա խնդիրները և առաջարկելու դրանց լուծման եղանակները: |
| ***Համառոտ բովանդակությունը***<br>Էթնոհոգեբանությունը որպես գիտելիքի միջառարկայական ոլորտ: Էթնոհոգեբանության ձևավորման և զարգացման պատմությունը: Էթնոհոգեբանական հետազոտությունների հիմնական տեսական ուղղությունները: Սոցիալականացման էթնոմշակութային վարիատիվությունը: Անձի ուսումնասիրության էթնոհոգեբանական հիմնահարցերը: Սոցիալական վարքի կարգավորման մշակութային տարբերությունները: Հաղորդակցության ունիվերսալ և սպեցիֆիկ-մշակութային ասպեկտները: Էթնիկական նույնականացման զարգացումը և փոփոխությունները: Միջէթնիկական հարաբերություններում միջխմբային ընկալման մեխանիզմները: Էթնիկական կոնֆլիկտներ. առաջացման պատճառները և կարգավորման եղանակները: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները***<br>Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:<br>*Ստուգման ձևերն են.*<br>*1-ին ստուգում.* Գրավոր /ստուգողական աշխատանք/:<br>*2-րդ ստուգում.* Բանավոր հարցում: |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Белик А. А., Культура и личность. М., 2001.<br>2. Платонов Ю.П., Основы этнической психологии. Санкт-Петербург, 2003. |

| | |
|---|---|
| 3. | Стефаненко Т.Г., Этнопсихология. М. 2003. |
| 4. | Этническая психология под редакцией А. И. Егоровой, Санкт-Петербург, 2003. |

<table>
<tr><td>0303/B29</td><td>ՏԱՐԻՔԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ</td><td>5 կրեդիտ</td></tr>
<tr><td>5 ժամ</td><td colspan="2">48/0/12/</td></tr>
<tr><td>VI կիսամյակ</td><td colspan="2">եզրափակիչ գնահատմամբ</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացի նպատակն է ձևավորել մարդու նկատմամբ անալիտիկ մոտեցում հոգեբանական տարիքի ըմբռնման տեսանկյունից, նպաստել տարիքային ճգնաժամերի ընթացքում հոգեբանական օգնության արդյունավետ ձևերի կազմակերպմանը:</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.<br>Գիտելիք և իմացություն<br>• տարիքի, այդ թվում ճգնաժամային տարիքի հոգեբանական վերլուծությունների մասին,<br>• տարիքային հոգեբանության տեսական և գործնական խնդիրների լուծման համար ստեղծված մեթոդաբանությունից,<br>• հիմնական հասկացություններից ու եզրութաբանությունից:<br>Ունակ կլինի.<br>✓ (բուն մասնագիտական կարողություններ)<br>• կազմակերպելու տարբեր տարիքային ճգնաժամերի ընթացքում հոգեբանական աջակցության արդյունավետ գծեր և ուղիներ,<br>• ուսումնասիրելու յուրաքանչյուր տարիքային փուլին բնորոշ զարգացման հիմնահարցերը,<br>• մշակելու զարգացման հիմնահարցի վերլուծության ալգորիթմը, որը կարտացոլի զարգացման հիմնահարցի լուծման և կանխարգելման հնարավորությունը:<br>✓ (ընդհանրական կարողություններ)<br>• իմանալով հոգեբանական առանձնահատկությունները՝ արդյունավետ հաղորդակցվելու տարիքային տարբեր խմբերի հետ,<br>• հասկանալու և տարբերակելու անձի զարգացման տարիքային օրինաչափությունները:</td></tr>
<tr><td colspan="3">Համառոտ բովանդակությունը<br>Տարիքային հոգեբանության ընդհանուր հարցեր: Հոգեկան զարգացման պայմաններն ու շարժիչ ուժերը: Հոգեկան զարգացման պարբե-</td></tr>
</table>

| |
|---|
| րացման հիմնախնդիրները: Հոգեկան զարգացման առանձնահատկությունները մինչծննդյան /պրենատալ/ և մանկիկության /նորածնություն, բուն մանկիկություն/ շրջաններում: Հոգեկան զարգացման առանձնահատկությունները վաղ տարիքում: Անձնային ոլորտի զարգացում: Նախադպրոցականի հոգեկան զարգացումն ու անձնավորության ձևավորումը: Դպրոցի նախապատրաստման հիմնախնդիրը: Հոգեկան զարգացումն ու անձնավորության ձևավորումը կրտսեր դպրոցական տարիքում: Անձնավորության ձևավորման ու զարգացման հոգեբանական առանձնահատկությունները դեռահասության շրջանում: Անձնավորության ձևավորման ու զարգացման հոգեբանական առանձնահատկությունները պատանեկան շրջանում: |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները*<br>Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:<br>*Եզրափակիչ քննություն*<br>Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: |
| *Հիմնական գրականության ցանկը*<br>1. В. С. Мухина., Возрастная психология. Издательский центр «Академия», 1999.<br>2. Ананьев Б. Г., Человек как предмет познания. Л., 1968.<br>3. Марцинковская Т.Д., История психологии. 4-е изд., стереотип. М.: 2004.<br>4. Эриксон Э., Детство и общество. СПб., 1996.<br>5. Идентичность: юность и кризис. М., 1996. |

| **0303/B30** | **ԲԺՇԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ** | **8 կրեդիտ** |
|---|---|---|
| **6 ժամ** | **80/0/16/** | |
| **VII կիսամյակ** | **եզրափակիչ գնահատմամբ** | |
| Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել սոմատիկ և հոգեկան հիվանդի հոգեբանության օրինաչափություններին, հոգեկան առողջությունը չափորոշող գործոններին, հոգեբանորեն «գրագետ» մտածելու զգալու և գործելու ձևերին, հիվանդությունները, խանգարումները, շեշտվածությունները կանխարգելելու հնարավո- | | |

| |
|---|
| րությունների։ |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• բժշկական հոգեբանության բաժիններից,<br>• հոգեկան տարբեր խանգարումների հոգեբանական առանձնահատկություններից և դրանց հաղթահարման տարբեր մոտեցումներից։<br>*Ունակ կլինի.*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• լրացնելու հիվանդության անամնեզը,ախտորոշելու առկա խանգարումը՝ ելնելով DSM-IV-R-ից,<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• վերլուծելու առկա խնդիրները և առաջարկելու դրանց լուծման եղանակներ։ |
| ***Համառոտ բովանդակություն***<br>Բժշկական հոգեբանության առարկան, նպատակը, խնդիրները, ուսումնասիրության առարկան։ Բժշկական հոգեբանության կայացման տեսական հիմքերը։ Ֆրոյդիզմի դերը բժշկական հոգեբանության համար։ Հոգեկան գործունեության առանձնահատկությունները։ Հոգեկան ֆունկցիաների ախտաբանական փոփոխությունները։ Հոգեմարմնական և մարմնահոգեկան փոխազդեցություններ և հիվանդություն։ Հիվանդության արտաքին և ներքին նկարագիր, հիվանդության գիտակցում։ Բժշկական դեոնտոլոգիա։ Հոգեհիգիենա, հոգեպրոֆիլակտիկա։ Հոգեծին հիվանդություններ։ Հոգեթերապիայի հիմունքները։ Մարմնական հիվանդի վարքագծային ռեակցիայի տիպերը։ Անձի ռեակցիայի տիպերը հիվանդության նկատմամբ ըստ Լիչկո-Իվանովի։ Հոգեմարմնական հիվանդություններ։ Ներքին հիվանդությունների բժշկահոգեբանական ասպեկտները։ Հոգեբանական գործոնների դերը վիրաբուժական պրակտիկայում։ Օնկոլոգիական հիվանդի հոգեբանություն։ Կանցերոֆոբիա։ Հղի կնոջ հոգեբանություն։ Հիվանդ երեխայի հոգեբանության առանձնահատկությունները։ Հիվանդի հոգեբանության առանձնահատկություններն ինֆեկցիոն հիվանդությունների ժամանակ։ ՁԻԱՀ և հոգեբանություն։ Զգայարանների արատներով մարդկանց հոգեբանություն։ Անձի հոգեբանական ռեակցիաները դեմքի վնասվածքների ժամանակ։ Հիվանդի հոգեբանական ռեակցիաները մաշկային ախտահարումների և ման- |

| |
|---|
| կական ուղեղային կաթվածի ժամանակ: Օլիգոֆրենիայի բժշկահոգեբանական ասպեկտները: Հոգեկան առողջության հիմնախնդիրները: Ալկոհոլիզմ և բժշկական հոգեբանություն: Ծերության հոգեբանական հիմնախնդիրները: Շիզոֆրենիայի ժամանակ առաջացող հոգեբանական հիմնախնդիրները: Էպիլեպսիայի հոգեբանական հիմնախնդիրները: Հոգեբանական բաղադրիչի դերը բժշկական փորձաքննության կառուցվածքում: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները***<br>Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:<br>*Եզրափակիչ քննություն*<br>Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Карвасарский Б. Д. и др., Клиническая психология, Москва 2004,<br>2. Карвасарский Б. Д., Психотерапевтическая энциклопедия, Москва, 2008.<br>3. Л. Бурлачук, А. Кочарян, М., Жидко Психотерапия, Киев, 2003.<br>4. Лакосина Н.Д., Ушаков Г.К., Медицинская психология, Москва, 1984. |

| | | |
|---|---|---|
| **0303/B31** | **ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ** | **8 կրեդիտ** |
| **6 ժամ** | **64/16/16/** | |
| **VII կիսամյակ** | **եզրափակիչ գնահատմամբ** | |
| Դասընթացի հիմնական նպատակն է ուսանողներին ծանոթացնել հոգեբանության ժամանակակից հիմնախնդիրներին, հոգեբանության տարբեր ուղղություններում նորագույն ուսումնասիրություններին և հետազոտություններին, ներկայացնել դասական և ժամանակակից տեսությունները, տալ հիմնական հարցադրումների և խնդիրների գիտական բացատրությունները: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***<br>*Գիտելիք և իմացություն* | | |

- ծանոթացնել ժամանակակից հոգեբանության հիմնախնդիրնե-րի վերաբերյալ՝ ըստ բնագավառների և ուղղությունների,
- ժամանակակից հոգեբանության մեթոդաբանական հիմնա-խնդիրներիի մասին,
- ընդհանուր, տարիքային, սոցիալական, էթնիկական, զարգաց-ման և մանկավարժական հոգեբանությունների ժամանակակից հիմնահարցերի վերաբերյալ,

*Ունակ կլինի.*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- բացատրելու և պատկերացում ձևավորելու ժամանակակից հո-գեբանության հիմնահարցերի դերը և նշանակությունը,
- բացահայտելու ընդհանուր, տարիքային, էթնոհոգեբանության, սոցիալական հոգեբանությունների ժամանակակից հիմնահար-ցերը,
- բացատրելու հոգեբանական այն մեխանիզմներն ու օրինաչա-փությունները, որոնք կարևոր դեր ու նշանակություն ունեն ան-ձի կենսագործունեության համար,

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- հոգեբանական գիտելիքները ճիշտ և տեղին կիրառելու պրակ-տիկայում:

***Համառոտ բովանդակությունը***

Ժամանակակից հոգեբանության հիմնախնդիրները: Ներածություն: Ժամանակակից հոգեբանության մեթոդաբանական հիմնախնդիրնե-րը: Ժամանակակից հոգեբանության ճգնաժամը: Ժամանակակից հո-գեբանության հիմնախնդիրները՝ ըստ հոգեբանության հիմնական բնագավառների: Անձի հոգեբանության ժամանակակից հիմնահար-ցերը: Սոցիալական հոգեբանության ժամանակակից հիմնահարցե-րը: Հոգեբանական ներգործության և կառավարման հոգեբանության, արտակարգ իրավիճակների հոգեբանության արդի հիմնահարցերը: Ժամանակակից հոգեբանության հիմնախնդիրները՝ հոգեբանության հիմնական ուղղություններում: Ժամանակակից հոգեբանության հիմ-նախնդիրները՝ հոգեբանության նորագույն ուղղություններում: Հետ-խորհրդային շրջանի հոգեբանության հարցեր:

***Գնահատման մեթոդները և չափանիշները***

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրա-քանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունա-

| |
|---|
| կում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր։<br>*Եզրափակիչ քննություն*<br>Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով։ |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Аллахвердов В.М., Сознание как парадокс. СПб, 2000.<br>2. Ананьев Б.Г., Человек как предмет познания. Л.: ЛГУ, 1968.<br>3. Абульханова К. А., О субъекте психической деятельности: Методологические проблемы психологии. М.: Наука, 1973.<br>4. Брушлинский А. В., Психология субъекта. М.: ИП РАН, СПб: Алетейя, 2003.<br>5. Величковский Б. М.. Когнитивная наука : Основы психологии познания : в 2 т. Т. 1 М. : Смысл : Издательский центр «Академия, 2006. |

| | | |
|---|---|---|
| **0303/B32** | **ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ** | **5 կրեդիտ** |
| **4 ժամ** | **48/16/0/** | |
| **VII կիսամյակ** | **առանց եզրափակիչ գնահատման** | |
| Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնելու մարդուն՝ որպես սոցիալական միջավայրի արդյունքի և մանրամասն ուսումնասիրել երեխայի տարբեր սոցիալական միջավայրում, հետազոտել սոցիալականացման հասարակական և մանկավարժական նշանակությունը։ | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• սոցիալական մանկավարժության գիտական հիմունքների մասին<br>• անձի սոցիալականացման մանկավարժական իմաստի վերաբերյալ,<br>*Ունակ կլինի.*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• բացահայտելու սոցիալական շեղումների պատճառներն ու դրանց հաղթահարման ուղիները,<br>✓ *(ընդհանրական կարողություններ)* | | |

| |
|---|
| • գործնականում իրականացնելու սոցիալական մանկավարժի գործունեություն: |
| *Համառոտ բովանդակությունը*<br>Սոցիալական մանկավարժության գիտատեսական հիմունքները: Սոցիալական մանկավարժության հիմնական սկզբունքները: Սոցիալ-մանկավարժական գործընթացը և նրա կատարելագործման ուղիները: Անձի սոցիալական զարգացումը: Երեխայի սոցիալական զարգացման մեխանիզմները և շարժիչ ուժերը: Գործունեությունը և սոցիալ-մանկավարժական հնարավորությունները: Մարդու ադապտացիան, դեզադապտացիան և ռեադապտացիան: Սոցիալական դաստիարակություն, էությունը և բովանդակությունը: Երեխաների զարգացման և դաստիարակության ընթացքում առաջացած սոցիալական շեղումները: Սոցիալական շեղումներ, առաջացման պատճառները, հաղթահարման ուղիները: Դժվար դաստիարակվող երեխաներ, էությունը, առաջացման պատճառները: Միջավայրը և անձի ձևավորումը: Փողոցը որպես դաստիարակության միջավայր: Դժվար իրավիճակներում գտնվող երեխաների կառուցվածքը: Պենիտեցիալ հաստատությունների աշխատանքների դաստիարակչական խնդիրները: Սոցիալական աշխատակցի մասնագիտական գործունեությունը և անձի դեֆորմացիա: Սոցիալական աշխատակցի մանկավարժական վարպետությունը և աշխատանքի կազմակերպման ձևերը: |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները*<br>Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:<br>*Ստուգման ձևերն են.*<br>*1-ին ստուգում.* Գրավոր /թեստ/:<br>*2-րդ ստուգում.* Բանավոր կարճ հարցում: |
| *Հիմնական գրականության ցանկը:*<br>1. Немов Р. С., Психология, 1 том, 2002.<br>2. Немов Р. С., Психология, 2 том, 2002.<br>3. Немов Р. С., Психология, 3 том, 2002. |

| | | |
|---|---|---|
| **0303/B33** | **ՀՈԳԵԹԵՐԱՊԻԱ** | **5 կրեդիտ** |
| **4 ժամ** | **48/16/0/** | |
| **VII կիսամյակ** | **եզրափակիչ գնահատմամբ** | |

| |
|---|
| Դասընթացի նպատակն է ուսանողներին գիտելիքներ հաղորդել ժամանակակից հոգեթերապիայի առաջատար ուղղությունների և հայեցակարգերի վերաբերյալ, ներկայացնել այն գործնական խնդիրները, որ հոգեթերապիան լուծում է պրակտիկայում, լուսաբանել ժամանակակից աշխարհում հոգեթերապևտիկ միջամտության անհրաժեշտության և արդյունավետության հիմնահարցերը: |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• հոգեթերապիայի խնդիրների և նպատակների մասին,<br>• ծանոթացնելու հոգեթերապևտիկ դպրոցների տեսություններին և դրանց թերապևտիկ մեթոդիկաներին:<br>*Ունակ կլինի.*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• Ձևավորելու պատկերացում հոգեթերապիայի, նրա խնդիրների և նպատակների մասին,<br>• ծանոթացնելու հոգեթերապիայի հիմնական ուղղություններին,<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• գործնականում իրականացնելու հոգեթերապևտիկ հիմնական կիրառական մեթոդիկաներ: |
| ***Համառոտ բովանդակությունը***<br>Հոգեդինամիկական թերապիա: Հոգեդինամիկական ուսմունքը հոգեկան ախտաբանության մասին: Հոգեդինամիկական թերապիայի տեխնիկան: Վերլուծական հոգեթերապիա: Հոգեթերապիայի տեսությունը անհատական հոգեբանության դաշտում: Կենսաէներգետիկական վերլուծություն: Առաջնային հոգեթերապիա: Հոգեդրամա: Էքզիստենցյալ հոգեթերապիա: Գեշտալտ-թերապիա: Այցելուակենտրոն հոգեթերապիա: Կոգնիտիվ հոգեթերապիա: Ինստրումենտալ մոդելները հոգեթերապիայում: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները***<br>Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:<br>*Եզրափակիչ քննություն*<br>Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: |
| ***Հիմնական գրականության ցանկը*** |

1. Л. Ф. Бурлачук, А. С. Кочарян, М. Е. Жидко, Психотерапия, Питер, 2009.
2. Бурлачук Л. Ф. Психодиагностика. СПб., 2002.
3. Хайгл-Эверс А., Хайгл Ф., Отт Ю., Рюгер У. Базисное руководство по психотерапии. СПб., 2001.

| | | |
|---|---|---|
| **0303/B34** | **ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ** | **4 կրեդիտ** |
| **8 ժամ** | **34/0/14/** | |
| **VIII կիսամյակ** | **եզրափակիչ գնահատմամբ** | |
| Դասընթացի նպատակն է ներկայացնել հոգեբանական գաղափարների ընդհանուր տեսության մշակման երկարաձիգ ճանապարհը՝ սկսած հոգեկանի մասին առաջին գիտական պատկերացումներից մինչև ժամանակակից հոգեբանության վերջին նվաճումները: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• հոգեկան իրականության վերաբերյալ,<br>• գիտության տրամաբանության վերաբերյալ, որն ունի ոչ միայն տեսական, այլև գործնական իմաստ:<br>*Ունակ կլինի.*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• կատարելու հոգեկանի մասին գիտական պատկերացումների համեմատական վերլուծություն,<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• կողմնորոշվելու հոգեբանության պատմության տեսությունների, ուղղությունների և մոտեցումների մեջ: | | |
| ***Համառոտ բովանդակությունը***<br>Հոգեբանական գիտելիքների զարգացումը հոգու մասին ուսմունքի շրջանակներում: Հոգեբանության զարգացումը գիտակցության մասին փիլիսոփայական ուսմունքների շրջանակներում: Հոգեբանության՝ որպես գիտակցության մասին գիտության զարգացումը մինչ փորձարարական հոգեբանության զարգացումը: Բնագիտության զարգացումը և բնագիտական նախադրյալների ձևավորումը հոգեբանության՝ որպես գիտության առանձնացման համար: Հոգեբանության առանձնացումը որպես առանձին գիտություն և նրա զարգացու- | | |

| |
|---|
| մը մինչև բաց ճգնաժամը (19-րդ դարի 60-ական թթ. և 20-րդ դարի 10-ական թթ.): 20-րդ դարի 10–30-ական թթ. բաց ճգնաժամի շրջանի արտասահմանյան հոգեբանությունը: Խորհրդային հոգեբանության ծագումն և զարգացումը: Ժամանակակից հոգեբանությունը Ռուսաստանում: Արտասահմանյան հոգեբանության ժամանակակից դրությունը և զարգացման կարևորագույն միտումները: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները***<br>Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:<br>*Եզրափակիչ քննություն*<br>Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. М.Г.Ярошевский., История психологии. М., 1996.<br>2. Ждан, Антонина Николаевна.,История психологии. От античности до наших дней. Москва: Академический проект, 2007.<br>3. История психологии. Марцинковская Т.Д. История психологии. 4-е изд., стереотип. М.: Академия, 2004. |

| | | |
|---|---|---|
| **0303/B35** | **ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ** | **4 կրեդիտ** |
| **8 ժամ** | **34/0/14/** | |
| **VIII կիսամյակ** | **եզրափակիչ գնահատմամբ** | |
| Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել մանկավարժության գիտության ժամանակակից հիմնախնդիրները, նրա զարգացումը՝ գիտական հարացույցների հիմքի վրա, և ցույց տալ մանկավարժության գիտության տեղն ու դերը ժամանակակից գիտության ապարեզում: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• ժամանակակից մանկավարժության հիմնախնդիրների մասին /ըստ բնագավառների և ուղղությունների/,<br>• ժամանակակից մանկավարժության մեթոդաբանական հիմնախնդիրների մասին | | |

- ընդհանուր, տարիքային, սոցիալական, էթնիկական, զարգացման և մանկավարժական հոգեբանությունների ժամանակակից հիմնախնդիրների մասին,

*Ունակ կլինի.*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- բացատրելու և պատկերացում ձևավորելու ժամանակակից մանկավարժության հիմնախնդիրների դերի և նշանակության մասին,
- բացահայտելու ընդհանուր, տարիքային, էթնոհոգեբանության, սոցիալական մանկավարժությունների ժամանակակից հիմնախնդիրները,
- բացատրելու մանկավարժական այն մեխանիզմներն ու օրինաչափությունները, որոնք կարևոր դեր ու նշանակություն ունեն անձի կենսագործունեության համար:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- ճիշտ և տեղին կիրառելու պրակտիկայում մանկավարժական գիտելիքները,
- գործնականում իրականացնելու մանկավարժական կադրերին ներկայացվող արդի պահանջները,
- կանխատեսելու ժամանակակից մանկավարժության առջև դրված այն տեսական և գործնական խնդիրները, որոնց լուծմամբ է պայմանավորված նոր դարաշրջանի անձի լիարժեք ձևավորումն ու զարգացումը:

***Համառոտ բովանդակությունը***

Ժամանակակից մանկավարժության առարկայի նպատակը, խնդիրները, մեթոդաբանական հիմքերը: Մանկավարժության գիտության զարգացման պատմությունը: Ժամանակակից մանկավարժության գիտության կոնցեպցիաները: Ժամանակակից կրթության փիլիսոփայությունը: Կրթության գլոբալացում և ինտեգրացում: Ժամանակակից համաշխարհային կրթական համակարգ, դաշտ, միջավայր: Կրթական որակի կառավարման և բարձրացման հիմնական դրույթները: Մանկավարժության գիտության մեթոդաբանական հիմքերը: Դիդակտիկայի ինովացիաները կրթության պատմության ասպարեզում: Դաստիարակության խնդիրները, էությունը, տեխնոլոգիաները: Մանկավարժական գիտության ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը, խնդիրները: Մանկավարժական կադրերին ներկայացվող արդի պահանջները: Մանկավարժական հաղորդակցում, դպրոց-

| |
|---|
| ընտանիք-հասարակություն համագործակցությունը: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները***<br>Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:<br>*Եզրափակիչ քննություն*<br>Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Подласый И. П., Педагогика, 1 и 2 часть., Москва, 2003.<br>2. Бим- Бад Б. М.,Очерки по исстории и теории педагогика, Москва., 2003.<br>3. Сластерин Л. П., Педагогика, Москва.,2005.<br>4. Крившенко С. Р.,Педагогика, Москва 2004.<br>5. Поташник Д.С., Упражление качеством образования, Москва, 2008. |

| **0303/B36** | **ԿՈՆՖԼԻԿՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ** | **4 կրեդիտ** |
|---|---|---|
| **8 ժամ** | **24/12/12/** | |
| **VIII կիսամյակ** | **առանց եզրափակիչ գնահատման** | |
| Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել կոնֆլիկտաբանության առարկային, խնդիրներին, քննարկել կոնֆլիկտի ֆենոմենը ներանձնային, միջանձնային, միջխմբային մակարդակներում, փորձել տալ դրանց լուծման ձևերը և եղանակները: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• կոնֆլիկտի հոգեբանության հիմնական դրույթների մասին,<br>• կոնֆլիկտների առաջացմանն, ընթացքին ու հանգուցալուծմանը վերաբերող հոգեբանական մոտեցումների մասին:<br>*Ունակ կլինի.*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• կանխորոշելու և տարբերակելու կոնֆլիկտային իրավիճակները,<br>• հայտնաբերելու կոնֆլիկտների առաջացման հոգեբանական գործոնները,<br>• կանխատեսելու և հնարավորինս կանխարգելելու կոնֆլիկտա- | | |

| |
|---|
| յին իրավիճակի զարգացումը,<br>• կանխատեսելու կոնֆլիկտային իրավիճակում հայտնված անձի, խմբի հնարավոր վարքային դրսևորումները,<br>• ընտրել կոնֆլիկտի հանգուցալուծման առավել արդյունավետ մարտավարությունն ու իրականացնել այն:<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• կողմնորոշվելու կենսական բարդ, կոնֆլիկտային իրավիճակներում,<br>• օգնելու շրջապատի մարդկանց կոնֆլիկտային իրավիճակներում արդյունավետ գործելու, կոնֆլիկտներին կոնստրուկտիվ լուծումներ տալու հարցում: |
| ***Համառոտ բովանդակությունը***<br>Ներածություն: Կոնֆլիկտ հասկացությունը և դրանց տիպաբանությունը: Կոնֆլիկտի կառուցվածքը և դինամիկան: Ներանձնային կոնֆլիկտ: Միջանձնային կոնֆլիկտներ: Կոնֆլիկտները կազմակերպություններում: Միջխմբային կոնֆլիկտ: Կոնֆլիկտների կանխարգելումը և հանգուցալուծումը: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները***<br>Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է 9 միավոր առավելագույն արժեքով:<br>*Ստուգման ձևերն են.*<br>*1-ին ստուգում.* Գրավոր (ստուգողական աշխատանք):<br>*2-րդ ստուգում.* Անհատական առաջադրանք (ռեֆերատ): |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Анцупов А. Я., Шипилов А. И., Конфликтология: Учебник для вузов. М.: Эксмо, 2009.<br>2. Белкин А. С, Жаворонков В. Д., Зимина И. С., Конфликтология: Наука о гармонии. Екатеринбург: «Глаголъ», 1995.<br>3. Гришина Н. В., Психология конфликта. СПб.: Питер, 2004.<br>4. Громова О. Н., Конфликтология. Курс лекций. М.: Ассоциация авторов и издателей «Тандем», ЭКМОС, 2000.<br>5. Дмитриев А. В., Конфликтология. М.: Гардарики. 2000. |

| | | |
|---|---|---|
| **0303/B37** | **ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ** | **4 կրեդիտ** |
| **4 ժամ** | **64/0/0/** | |

| I կիսամյակ | առանց եզրափակիչ գնահատման |
|---|---|
| Դասընթացի նպատակն է իրազեկել ուսանողին ուսումնական գործունեության առանձնահատկությունների մասին, նպաստել հոգեբանության և մանկավարժության բնագավառում գիտելիքների ձեռքբերմանը և կիրառմանը: | |
| *Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.*<br>*Գիտելիք և իմացություն*<br>• մասնագիտական գործունեության բովանդակության, առանձնահատկությունների մասին,<br>• ուսումնական գործունեության տրամաբանության մասին:<br>*Ունակ կլինի.*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• պատկերացնելու արդի հոգեբանության հիմնադրույթները և հասկացությունները,<br>• կողմնորոշվելու հոգեբանության տարբեր բնագավառներում գիտելիքների ձեռքբերման ուղիներում,<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• կազմակերպելու իր ուսումնական գործունեությունը ինչպես լսարանային պայմաններում, այնպես էլ ինքնուրույն ուսումնական և հետազոտական աշխատանքներում: | |
| *Համառոտ բովանդակությունը*<br>Հոգեբանության զարգացման պատմական ակնարկ: Հոգեբանության առարկան, խնդիրները: Հոգեբանության սկզբունքները: Հոգեբանության բնագավառները: Հոգեբանության միջառարկայական կապերը: Հոգեբանության մեթոդները: Հոգեբանության ուղղությունները: Հոգեբանի գործունեության էթիկական նորմերի հիմունքները: Մանկավարժ-հոգեբան մասնագիտության առանձնահատկությունները, նշանակությունը արդի կրթական համակարգում: Մանկավարժ-հոգեբանի գործունեությունը կրթական համակարգում: ՈՒսուցիչ-մանկավարժի մասնագիտության նախապատրաստումը ՀՀ-ում: Կրթական համակարգի բարեփոխումները: Արդի կրթական համակարգի կառավարումը: ՈՒսուցման արդյունքների գնահատումը եվրոպական չափորոշիչներով, կրեդիտային համակարգի ներդրումը: | |
| *Գնահատման մեթոդները և չափանիշները*<br>Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: | |

| |
|---|
| *Ստուգման ձևերն են.*<br>*1-ին ստուգում.* Գրավոր /ստուգողական աշխատանք/:<br>*2-րդ ստուգում.* Անհատական առաջադրանք(ռեֆերատ): |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., Մանկավարժություն, Եր., 2004:<br>2. Ղուլումյան Գ., Մանկավարժություն, գ. 1, Եր., 2005:<br>3. Ղուլումյան Գ., Մանկավարժություն, գ. 2, Եր., 2005:<br>4. Մանուկյան Ս., Մանկավարժագիտություն, Եր., 2005:<br>5. Психология., Дубровина И.В., Данилова Е.Е., Прихожан А.М. 2-е изд., стер. М.: Академия, 2003.<br>6. Джемс У., Психология. М., 1991.<br>7. Петровский А. В., Ярошевский М. Г., История и теория психологии. В 2-х т. Ростов-на-Дону, 1996.<br>8. Ярошевский М. Г., Выготский: в поисках новой психологии. СПб., 1993. |

| **0303/B38** | **ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ** | **4 կրեդիտ** |
|---|---|---|
| **4 ժամ** | **48/8/8/** | |
| **VII կիսամյակ** | **առանց եզրափակիչ գնահատման** | |
| Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ծանոթացնել քաղաքական վարքի և գիտակցության սոցիալ-հոգեբանական հիմնարար օրինաչափություններին: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• քաղաքական հոգեբանության գործածելիության մասին,<br>• քաղաքական հոգեբանության տեսությունների և զարգացման պատմության մասին,<br>• քաղաքական գիտակցության կառուցվածքի մասին,<br>• քաղաքական վարքի տեսակների մասին,<br>• քաղաքական հոգեբանության ուսումնասիրման հիմնական մեթոդների և ձևերի վերաբերյալ,<br>*Ունակ կլինի.*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• բացատրելու քաղաքական մշակույթի ձևավորման առանձնա- | | |

| |
|---|
| հատկությունները,<br>• բացատրելու քաղաքական գիտակցության կառուցվածքը և բովանդակությունը,<br>• տարբերակելու քաղաքականության հոգեբանական կողմերը,<br>• տարբերակելու քաղաքական վարքի առանձնահատկությունները,<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• վերլուծելու քաղաքական լիդերի հոգեբանության առկա խնդիրները և առաջարկելու դրանց լուծման եղանակները,<br>• կառուցելու ժամանակակից քաղաքական լիդերի հոգեբանական դիմանկարը: |
| ***Համառոտ բովանդակությունը***<br>Քաղաքական հոգեբանության ուսումնասիրության առարկան: Ժամանակակից քաղաքական հոգեբանության առաջատար դպրոցները և ուղղությունները: Քաղաքական սոցիալականացում: Անձը քաղաքականության մեջՔաղաքական մենթալիտետ: Ավտորիտարիզմի և դեմոկրատիայի հոեգբանություն: Քաղաքական զանգվածային երևույթների հոգեբանական առանձնահատկությունները: Քաղաքական-հոգեբանական տեխնոլոգիաներ: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները***<br>Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է 9 միավոր առավելագույն արժեքով:<br>*Ստուգման ձևերն են.*<br>*1-ին ստուգում.* Գրավոր (ստուգողական աշխատանք):<br>*2-րդ ստուգում.* Անհատական առաջադրանք (ռեֆերատ): |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Деркач А., Политическая психология, М: 2002.<br>2. Дилигенский А., Социально-политическая психология, СпБ., 2005.<br>3. Крысько В.Г, Социальная психология, М., изд-во ВЛАДОС-ПРЕСС, 2002.<br>4. Социальная психология, М.,2001.<br>5. Социальная психология, Хрестоматия.М.,1999.<br>6. Социальная психология, М.,2002.Ольшанский С. Основы политической психологии, М.:2003.<br>7. Шестопал Е.Б. Политическая психология. М: 2002 |

<table>
<tr><td>0303/B39</td><td>ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ</td><td>4 կրեդիտ</td></tr>
<tr><td>4 ժամ</td><td colspan="2">48/8/8/</td></tr>
<tr><td>VII կիսամյակ</td><td colspan="2">առանց եզրափակիչ գնահատման</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացի նպատակն է ծանոթացնել արտակարգ իրավիճակների, դրանցում առաջացող հոգեֆիզիոլոգիական, սոցիալ-հոգեբանական տեղաշարժերի վերաբերյալ տեսական գիտելիքներին, ձևավորել պրակտիկ հմտություններ արտակարգ իրավիճակներում անհատական և խմբային աշխատանքների համար, մեկնաբանել հոգեկարգավորման առարկայի տեսական և գործնական հարցերը, քննարկել տարբեր դպրոցների, հեղինակների, տարբեր տեխնիկաների վերլուծության հիմնահարցերը:</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.<br>Գիտելիք և իմացություն<br>• արտակարգ իրավիճակների, պայմանների ընդհանուր և հոգեբանական բնութագրերի մասին,<br>• անձի հուզավարքային և մտային դրսևորումների վերաբերյալ,<br>• տուժածների և անձնակազմերի հետ հոգեբանական պրակտիկ աշխատանքների կազմակերպման վերաբերյալ,<br>Ունակ կլինի<br>✓ (բուն մասնագիտական կարողություններ)<br>• հետևելու և հնարավորինս ճշգրիտ նկարագրելու հոգեբանական ոչ ստանդարտ իրավիճակներն ու վարքագծերը,<br>• ընտրելու համապատասխան մեթոդներ՝ կազմակերպելու հոգեբանական աշխատանքներն արտակարգ իրավիճակներում և պատահարներից հետո,<br>✓ (ընդհանրական կարողություններ)<br>• հետազոտություն կատարելու արտակարգ գործոն պարունակող բնագավառներում,<br>• սատարելու մասնագիտական ընտրության, պատրաստման և որակավորման աշխատանքներին,<br>• ուղեկցելու աշխատանքի կառավարման մեթոդական և տեխնիկական գործընթացներին:</td></tr>
<tr><td colspan="3">Համառոտ բովանդակություն<br>Արտակարգ իրավիճակների հոգեբանության առարկան: ՀՀ-ում ա-</td></tr>
</table>

| |
|---|
| դետների կանխարգելման և փրկարարական ծառայությունների կառուցվածքը, գործառույթները: Արտակարգ իրավիճակների բնութագրերը, դասակարգումը: Արտակարգ իրավիճակներում կենսագործունեության պահպանման սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները: Արտակարգ իրավիճակներում անձի հոգեկան գործառույթների դրսևորման առանձնահատկությունները: Արտակարգ իրավիճակներում անձի սոցիալ-հոգեբանական յուրահատուկ դրսևորումները: Հետվնասվածքային հոգեվիճակների դրսևորման հոգեբանական առանձնահատկությունները: Արտակարգ իրավիճակներում վերականգնողական գործընթացի գիտագործնական հիմնադրույթների կիրառման ռազմավարությունը: Արտակարգ իրավիճակներում անձի հուզական ոլորտի հետազոտման մեթոդները: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները***<br>Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:<br>*Ստուգման ձևերն են.*<br>*1-ին ստուգում.* Անհատական առաջադրանք:<br>*2-րդ ստուգում.* Անհատական առաջադրանք: |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Малкина-Пых Экстремальные ситуации. Справочник практ. Психолога. М.,2005.<br>2. Психология экстремальных ситуаций для спасателей и пожарных, Под общей ред. Ю.С. Шойгу. М.: Смысл, 2007.<br>3. Мокшанцев Р.И., Психология коммуникацийна переговорах. Инфра-М., 2004 . |

| **0303/B40** | **ՇՏԿՈՂԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ** | **4 կրեդիտ** |
|---|---|---|
| **4 ժամ** | **48/8/8/** | |
| **VII կիսամյակ** | **առանց եզրափակիչ գնահատման** | |
| Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել շտկողական մանկավարժության առարկան, խնդիրները, սկզբունքները, կատեգորիաները և հիմնական գիտական տեսությունները: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***<br>*Գիտելիք և իմացություն* | | |

- շտկողական մանկավարժության ուսումնասիրության առարկայական տիրույթի վերաբերյալ,

*Ունակ կլինի.*

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- բացահայտելու համապատասխան գիտելիքներ երեխաների վարքագծի շեղման պատճառների, մակարդակների և դրանց հետևանքների մասին,

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- ցուցաբերելու ունակություններ իրականացնելու շտկողական դաստիարակություն վարքագծի շեղում ունեցող երեխաների հետ:

***Համառոտ բովանդակությունը***

Շտկողական մանկավարժության առարկան, խնդիրները, սկզբունքները, կատեգորիաները և շտկողական մանկավարժության հիմնական գիտական տեսությունները: Մարդու ֆիզիկական, հոգեբանական, ինտելեկտուալ մոտորային զարգացման նորման և շեղումները: Առաջնային և երկրորդային դեֆեկտ: Կոմբինացված շեղումներ, դրանց պատճառները: Երեխաների անձնային զարգացման թերությունների պրոֆիլակտիկա, դիագնոստիկա և շտկում: Երեխաների դևիանտ (շեղող) վարքագիծ: Խորհրդատվական-ախտորոշման, շտկողական-մանկավարժական, վերականգնողական աշխատանքների համակարգը:

***Գնահատման մեթոդները և չափանիշները***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

*1-ին ստուգում.* Անհատական առաջադրանք:

*2-րդ ստուգում.* Անհատական առաջադրանք:

***Հիմնական գրականության ցանկը***

1. Подласый И. П.,Курс лекций по коррекционной педагогика, М., 2000.
2. Кащенко В. П., Педогогическая коррекция. Исправление недостатков характера у детей и подростков, М., 1994.
3. Воспитание трудного ребенка , под. ред. М. И. Гожиева, М., 2000.
4. Кочетов А., Работа с трудными детьми М., 1986.

| | | |
|---|---|---|
| 0303/B41 | **ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՆԿԱՎԱՐ-ԺԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ** | 4 կրեդիտ |
| **4 ժամ** | **48/8/8/** | |
| VII կիսամյակ | **առանց եզրափակիչ գնահատման** | |
| Դասընթացի նպատակն է ուսանողներին զինել ժամանակակից պահանջներին համապատասխան մանկավարժական տեխնոլոգիաների մասին գիտելիքներով: | | |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.***<br>*Գիտելիք և իմացություն*<br>• ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների բովանդակության, սկզբունքների, գործառույթների և մեթոդների մասին,<br>*Ունակ կլինի.*<br>✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*<br>• աշակերտակենտրոն և անձնային կողմորոշիչ ուսուցման կազմակերպման, ուսուցման և դաստիարակության տեխնոլոգիաների կիրառման մասին,<br>✓ *(ընդհանրական կարողություններ)*<br>• ուսուցման և դաստիարակության ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների կիրառմանը կրթության գործընթացի կազմակերպման և կառավարման ընթացքում: | | |
| ***Համառոտ բովանդակությունը***<br>Մանկավարժական տեխնոլոգիան որպես համակարգված գործողությունների և միջոցառումների ամբողջություն, որը ապահովում է կանխորոշում և արդյունքների դիագնոստիկա կրթական գործընթացի փոփոխվող պայմաններում: Հիմնական մանկավարժական տեխնոլոգիաները, ադապտացիոն, զարգացնող, անձնակողմնորոշված, երկխոսության. մոդուլային, համատեքստային, տեղեկատվական, ուսուցման մակարդակային դիֆերենցիացիայի, խմբակային ազդեցության, սուգեստոլոգիական, բազմապիսի տեղեկատվական միջոցների տեխնոլոգիա, խաղային տեխնոլոգիա, մանկավարժական հաղորդակցման տեխնոլոգիա: Կանխորոշման դիագնոստիկա, հոմոզարգացման և շտկման: Խնդրային մոտեցումը որպես ամբողջական մանկավարժական մոտեցման տեխնոլոգիական հիմք: Մանկավարժական իրավիճակ և մանկավարժական խնդիր: Մանկավարժական խնդիրների տեսակները: Մանկավարժական գործընթացի կառուց- | | |

| |
|---|
| ման տեխնոլոգիա: Մանկավարժական գործընթացի դիագնոստիկա, նախագծում և պլանավորում: Զարգացնող գործունեության (ուսումնական-ճանաչողական, արժեքային կողմնորոշման, տեխնիկական, էսպերտային-առողջապահական կազմակերպման տեխնոլոգիա: Անձի մանկավարժական ներգործության տեխնոլոգիա: Մանկավարժական գործընթացի արդյունքների հաշվառման և վերլուծության տեխնոլոգիա: |
| ***Գնահատման մեթոդները և չափանիշները***<br>Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:<br>*Ստուգման ձևերն են.*<br>*1-ին ստուգում.* Անհատական առաջադրանք:<br>*2-րդ ստուգում.* Անհատական առաջադրանք: |
| ***Հիմնական գրականության ցանկը***<br>1. Պետրոսյան Հ., Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, Եր., 2012:<br>2. Պետրոսյան Հ., Մանկավարժական տեխնոլոգիայի գործառնային կառուցվածքը, Մխիթար Գոշ, N 3, 2007:<br>3. Պետրոսյան Հ., Մասնագետների պատրաստման որակի դիագնոստիկան, Մխիթար Գոշ, N 4, 2007: |